

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԱՐԶԵՍՏ-ԱՐԶԵՍՏԱՎՈՐԱՆԻՇ
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015**

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ա 791

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհուրդը*

Խմբագիր՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ս. Ա. ԳԱԼՍՅԱՆ**

Լևոն Ավետիսյան

Ա 791 Արիեստ-արիեստավորանիշ անվանումները հայերենում/
Լևոն Ավետիսյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2015, 134 էջ:

Գրքում առաջին անգամ քննության են ենթարկվում հայերենի արիեստագործական անվանումների բառակազմական կաղապարները, գործառական և իմաստային առանձնահատկությունները, հոմանշային զուգադրսևորումները և այլն լեզվի զարգացման բոլոր փուլերում: Իմաստային այս խմբում արտացոլված են նաև հայ ժողովրդի լեզվամտածողությունը, հոգեբանությունը, պատմամշակութային, սոցիալական, տնտեսական գործընթացները, հասարակական հարաբերությունները և այլն:

Աշխատանքը հասցեագրված է բառապաշարի իմաստային դաշտով հետաքրքրվող լեզվաբաններին, հայոց լեզվի պատմությանը և բառագիտությանը զբաղվողներին:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2012-0

© ԵՊՀ հրատ., 2015
© Լևոն Ավետիսյան, 2015

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արիեստավորանիշ բառերի համակողմանի քննությունը թե՛ լեզվաբանական, թե՛ պատմաազգագրական և մշակութային տեսակետներից որոշակի կարևորություն է ներկայացնում: Արիեստագործական անվանումների իմաստային դաշտը յուրահատուկ մի համակարգ է, որում արտացոլված ենք տեսնում ժողովրդի լեզվամտածողությունը, հոգեբանությունը, պատմամշակութային, ընկերային, տնտեսական գործընթացները, հասարակական հարաբերությունները և այլն: Արձանագրված բառամթերքը հնարավորություն է ընձեռնում դասակարգելու հայերենի զարգացման տարբեր փուլերում այս իմաստային շերտի բառակազմական կաղապարների, իմաստափոխության, հոմանշային զուգադրսևորումները և ուղենշելու զարգացման միտումները:

Բառային իմաստաբանության¹ խնդիրը բառային իմաստների համակարգի նկարագրումն է: Այդպիսի հետազոտման ընթացքում վերջնականապես ձևավորվում են տարբեր բառերի իմաստների միջև եղած փոխադարձ առնչությունները: Նման մոտեցման դեպքում բառի իմաստը սահմանվում է ոչ թե որպես ինքնուրույն միավոր, այլ որպես մյուս իմաստների հետ ունեցած առնչությունների ամբողջություն: Իմաստաբանական դաշտը ընդգրկում է այն բառերի կազմությունը, որոնք միավորվում են բովանդակության ընդհանրությամբ կամ, այլ կերպ ասած, մեկնաբանության մեջ ունեն ընդհանուր մաս: Այդ ընդհանուր մա-

¹ 1839 թվականին գերմանացի լեզվաբան Կ. Ռայգինգն առաջարկում է «իմաստի մասին գիտությունը», որը նոր-նոր էր սկսում ձևավորվել, անվանել սեմասիոլոգիա՝ իմաստաբանություն (գերմ. Semasiologie, հուն. sēmaínō-«իմաստ ունենալ» և sēmasia-«իմաստ»), և այն համարել քերականության առանձին ճյուղերից մեկը: Իսկ 1883 թվականին ֆրանսիացի լեզվաբան Մ. Բրեալն առաջարկում է նոր անվանում՝ սեմանտիկա (ֆրանս. La sémantique) (Кронгауз 2005, էջ 5): Այսպես, միասնական իմաստաբանական հիմք ունեցող բառերի մեծ խմբերի համադրումը աստիճանաբար հանգեցրեց **իմաստաբանական դաշտերի տեսության ստեղծմանը** (Кронгауз 2005, էջ 100-101):

սով էլ իմաստաբանական դաշտը ստանում է իր ընդհանուր անվանումը: Այսպես, կարելի է առանձնացնել ազգացության, զգացմունքների, ուսելիքի, ամանեղենի, գյուղատնտեսական գործիքների և շատ այլ իմաստաբանական դաշտերի խմբեր: Իսկ այդ դաշտերը դասակարգելու լավագույն աղբյուր են բառարանները: Հենց բառերի ցանկերը, որոնք կոչվում են բառարաններ, համարվում են լեզվի նկարագրման հիմքը: Այս պատճառով մեր թեմայի ուսումնասիրության համար հետազոտության նյութ են դարձել հայերենի զարգացման ողջ ընթացքում բառարաններում արձանագրված արհեստավորանիշ անվանումները (ընդհուպ էդ. Աղայանի հայտնի բացատրական բառարանը):

Արհեստների առաջ գալը, տարաբնույթ ու տարատեսակ դրսևորումները, այլ գործոններից բացի, ժողովուրդների փոխշփումների արդյունք են: Հայտնի է, որ հնագույն ժամանակներից ի վեր հայ ժողովուրդը սերտ շփումներ է ունեցել իրանական ժողովուրդների հետ. դրանով է պայմանավորված արհեստագործական անվանումների մեջ այդ լեզվից կատարված փոխառյալ շերտի ավելի ծավալուն լինելու հանգամանքը բնիկ հայերենի համեմատությամբ: Սակայն քանակային կողմը չի արտացոլում բառիմաստների գործառական, որակական առանձնահատկությունները: Փոխառությունների գերակշիռ մասը, դեռևս գրաբարյան շրջանից սկսած, հայերենի բառապաշարի կայուն ու յուրացված շերտ է կազմում:

Արհեստները մարդկային քաղաքակրթության վաղնջական նշանակալից դրսևորումներից են: Դրանց տարատեսակների ծագումն ու ձևաբովանդակային զարգացումը ուղեկցում են մարդուն նրա գործունեության բոլոր փուլերում անխտիր և պայմանավորված են բնակլիմայական, սոցիալ-տնտեսական, հասարակական տարբեր շերտերի փոխհարաբերության, գեղագիտական ընկալման, անհատական ճաշակի դրսևորման, զանազան պահանջմունքների բավարարման հետ:

Ինչպես նշել է Գ. Բ. Ջահուկյանը, «Նոր քարի դարի մարդկանց, այդ թվում՝ հնդեվրոպացիների կյանքում նշա-

նակալից դեր է խաղացել տնայնագործությունը՝ ներքին կարիքները բավարարող, այսպես կոչված՝ տնային արհեստագործությունը: Շինարարական զանազան աշխատանքները, գործիքների, զենքերի և փոխադրամիջոցների, ամանեղենի և հագուստեղենի պատրաստումը պահանջում էին հում նյութի որոշակի մշակում և համապատասխան ունակությունների փոխանցում սերնդից սերունդ: Հայտնի է նույնիսկ, որ նոր քարի դարն սկսվում է կավագործական զանազան արտադրանքներով, և նոր եվրոպացիներին հատուկ է եղել թելային նկարազարդումը» (Ջահուկյան 1986, էջ 80-81):

Որ հնդեվրոպացիների կյանքում տնայնագործությունը (տնային արհեստագործությունը) կարևոր դեր է խաղացել, վկայում են ոչ միայն հնագիտական բազմազան գտածոները, այլև զանազան մասնագիտացված գործողությունների և դրանց տված արտադրանքների անվանումները հնդեվրոպական ժողովուրդների լեզուներում: Հնդեվրոպացիների լեզվում եղել են հատուկ բառեր և տերմիններ այդ արտադրատեսակների պատրաստման հետ կապված գործողությունների համար:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ «արուեստ» և «արհեստ» բառերից նախնականը եղել է «արուեստ»-ը, որը սկզբնապես ունեցել է «ճարտարություն, մտավոր կամ ձեռական արհեստ, ձեռագործ, ճարտար շինված բան, խաբեական հնարք» իմաստները: Իսկ «արհեստը» հետագայում երկրորդաբար առաջացած ձև է: Նոր գրական հայերենում է, որ այդ երկու բառերը իմաստային տարբերակման են ենթարկվել. **արվեստ** նշանակում է «մտավոր արվեստ», իսկ **արհեստ**՝ «ձեռական, ձեռքի արվեստ»: Այնուամենայնիվ, Աճառյանը **արուեստ** բառը չի ստուգաբանում: Նա հղում է ՆՀԲ-ին և ուրիշների. «ՆՀԲ լծ. լատ. *ars, artis* «արուեստ» և յն. «սիրահար, սիրող» (էջ 372 ա): Հինք. հարուստ բառից: Pedersen, Հայ. դր. լեզ. -եստ մասնիկով **արու** բառից, իբր թե բառը նախապես նշանակում էր «արութիւն, *virtus*», հետոյ «ճարտարութիւն, *virtuosite*», Սանտալձեան ՀԱ 1913, 401 խալդ. *aris*, լտ. *ars* ձևերի հետ» (Աճառյան հ. 1, 1971, էջ 332):

Արուեստ բառի և հատկապես նրա **արհեստ** տարբերակի բնիկ հնդեվրոպական ծագում ունենալու հանգամանքը Գ. Ջահուկյանը կասկածելի է համարում: Նա ավելի հավանական է գտնում իրանական ծագումը (Ջահուկյան 1986, էջ 265). «aruvast (*arvat-ta-). հմմտ. հ. պ. aruvasta «ամրություն, առույգություն, պնդակազմություն», պրթ. r'wst «ճարտարություն» (բաղարկություն հայ. **-եստ**-ով հիմքերի հետ)» (Ջահուկյան 1986, էջ 517):

Իսկ **արվեստ** և **արհեստ** բառերի քննությանը նվիրված նրա մի հոդվածում կարդում ենք. «... Արուեստ բառի ... էստ-ը կարծես խոսում է նրա հայկական ծագման մասին՝ հ. ե. * ar- «կցել, հարմարեցնել» արմատից (հմմտ. լատ. ars «արվեստ»), բայց կա իմաստով փոքր-ինչ տարբեր հ.պ. arvastam բառը» («Սովետական դպրոց» 1981):

Արհեստ հասկացության բառարանային սահմանումները միմյանցից առանձնապես չեն տարբերվում: Այսպես, Հայկական սովետական հանրագիտարանում **Արհեստներ** բառահոդվածի տակ կարդում ենք. «Պատրաստի արտադրանքի մանրապրանքային արտադրություն՝ հիմնված աշխատանքի ներարտադրական բաժանման բացակայության պայմաններում...» (ՆՍՀ հ. 2, 1976, էջ 83): Իսկ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» **արհեստ** բառի համար տրված է հետևյալ ձևակերպումը. «Որոշակի հմտություններ պահանջող և ձեռքի պարզ գործիքներով կատարվող աշխատանք՝ զանազան բաներ պատրաստելու և շինարարական նպատակների համար» (Աղայան հ. 1, 1976, էջ 135):

Փոքր-ինչ թերի է անգլերենի հանրահռչակ բառարաններում **արհեստ** տերմինին տրված բացատրությունը. «Գործ, հատկապես այնպիսի, որ կապված է ձեռքի աշխատանքի հետ և պահանջում է հատուկ վարժանք ու հմտություն» (Oxford Advanced Learner's Dictionary of Current English): Մյուս, ոչ պակաս հայտնի բառարանում բառիս բացատրությունն է. «Զբաղմունք, հատկապես այնպիսի, որը պահանջում է ձեռքով աշխատելու որոշակի հմտություն» (Longman Lexicon of Contemporary English, 1996):

Ինչպես տեսնում ենք, անգլերենի երկու բառարաններում էլ բացակայում է **գործիքի**՝ որպես աշխատանքի միջոցի հանգամանքը, որը, մեր կարծիքով, **արհեստ** հասկացության սահմանման կարևոր պայման է: Նշենք նաև, որ սույն բառը մի քանի իմաստ ունի անգլերենում, և մեր հիշատակած բառարաններում առաջինը նշվում է **առևտուր** իմաստը:

Հայերենում պահպանվել են հնուց եկած արհեստ-արհեստավորանիշ բազմաթիվ անվանումներ. հազարամյակներ շարունակ դրանք մշակվել, փոփոխվել, զարգացում են ապրել, և այժմ էլ շարունակվում է այդ գործընթացը: Տակավին ժխտված չէ օտարների կողմից հայ ժողովրդին տրվող արմեններ անվանման աճառյանական ստուգաբանությունը (բնիմաստն է կերտել, կառուցել, արվեստակերտել և այլն):

Հայերենի արհեստ և արհեստավոր նշանակող տերմինապաշարի պատմական զարգացումը ևս կարելի է բաժանել հինգ փուլի (Ջահուկյան 1969, Ջահուկյան 1974). ա) հնագույն և հին շրջան (որն ավանդված է գրաբարով), բ) միջնադարյան շրջան (հիմնականում ավանդված միջին հայերենով), գ) աշխարհաբարյան շրջան (XVII-XIX դարեր, ավանդված գրաբարով, աշխարհաբարով և բարբառներով), դ) նորագույն շրջան, որն ավանդված է նոր գրական հայերենով: XVII-XVIII դարերը, հատկապես XIX դարը, մի ուրույն շրջան են, և կարելի է բնութագրել հետևյալ հատկանիշներով. 1) արհեստ-արհեստավորանիշ անվանումների աննախադեպ բազմաքանակություն. եթե նախորդ շրջաններում դրանք, ըստ բառարանագրական նյութի, մոտ 300 բառ են կազմում, ապա XIX դարում՝ հազարից ավելի (նկատի ունենք գրաբարը, աշխարհաբարը, բարբառները), 2) տվյալ ոլորտի բառակազմական կադապարների հստակ գիտակցում, դրանց միօրինակացում և կայուն օգտագործում (**գործ** բայափմք-ածանցակերպ որպես գործող, **-ող**, **-իչ** ածանցների կիրառական ոլորտների հստակեցում, ածականական ձևերի վերածում գոյականի. օր.՝ քանդակագործ (ած.), քանդակագործ (գոյ.), 3) գրական հայերենից

աստիճանաբար արտամղվում են մատենագրության և ժողովրդական լեզվի մեջ առկա արևելյան լեզուներից վերցված այս ոլորտին վերաբերող անվանումները, 4) հայերեն անվանումները մշակվում, նորերն են ստեղծվում և ստուգադրվում են եվրոպական զարգացած լեզուների համապատասխան բառապաշարի հետ (ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն), 5) 1850-ականներից ի վեր միտում է նկատվում գրաբար բառապաշարը աշխարհաբարում լայնորեն օգտագործելու, և XX դարի սկզբներին առկա է գրաբարի և աշխարհաբարի համար միասնական անվանակարգություն:

Բառակազմական տեսակետից կարևորվում են բնիկ հայերեն կամ որպես այդպիսին գիտակցվող բառերը, որոնք, բնական է, շատ քիչ քանակ են կազմում, քանի որ մեզ հետաքրքրող իմաստային խմբի գաղափարների մեծ մասը վաղնջահայերենում չի եղել՝ համապատասխան իրույթները ու գաղափարները հայերին անձանոթ լինելու պատճառով: Հայերենում պահպանված արիեստագործական տերմիններ ցույց տվող բառերի մի մասը հնդեվրոպական ծագում ունի և ժառանգված է նախալեզվից: Այսպես, ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝ հ. ե. ծագում ունեն **դերծակ, հանդերծ, դերծան, ատաղծ, դուրզն, դակու, դարբին** բառերը:

Դերծ արմատը անկախաբար չի կիրառվում, այլ **դերծակ, դերծան, հանդերծ, հագուստ** բառերում: Լ. Հովհաննիսյանը բառիս մասին գրում է. «Ոմանք, նկատի առնելով իրանական լեզուներում նշված արմատի գոյությունը. պիլ. darzik, պրս. darsi «դերծակ», պրս. darz, darza «կար», նաև **դերծ**-ի հետ ունեցած հնչյունական համապատասխանությունները, **դերծ**-ը համարում են իրանական: Սակայն նույնքան հնարավոր է բառը բխեցնել հ. ե. dherg'ի-ից, որը հայերենում տվել է դարծ «դառնալ» և դերծ «կարել»: Ուրեմն **դերծակ, դերծան, հանդերծ** բառերը կարող ենք համարել և հայերեն» (Հովհաննիսյան 1990, էջ 214):

Հայ. դերծ արմատը, որից ունենք **դերծակ, հանդերծ** «հագուստ, զգեստ», **դերծան** «կարի թել», Աճառյանը ծագումաբանորեն կապված է համարում պիլ. darzik, պրսկ.

darzi «դերձակ», արսկ. darz «կար», darzan «ասեղ», ալբան. drezn «դարձնել, ոլորել, գալարել» և հայ. դարձ (*դարձ-ն-ալ, դառնալ) բառերի հետ, որոնք բոլորն էլ ծագում են հ. ե. *dherg'h- արմատից: Այս դեպքում ուշագրավ է, որ լեզուների մեջ «կարել» և «մանել» իմաստները հաճախ առաջանում են «պտտել, դառնալ» իմաստներից. հմմտ. հուն. *πεω*, լատ. *neo* «մանել», հուն. *πῶμα* «թել», հ. բ. գ. *nān* «կարել»՝ ռուս. *нумь* «թել» և վերջիններիս հետ ծագումնաբանորեն կապված՝ հ. հյուս. *snua* «դարձնել, ոլորել», մ. իռլ. *snim* «մանված, դարձ» բառերը: Այդպես էլ հայերենում ունենք մի կողմից մանել «թել մանել», մանած «թել», մյուս կողմից՝ ման գալ «պտտվել, դառնալ, շրջել»: Ըստ այդմ՝ հ. ե. *dherg'h-* արմատը, որ ալբաներենում տվել է «դարձնել, ոլորել և մանել» իմաստները, իսկ իրանական լեզվաճյուղում՝ «կարել» իմաստը, հայերենի մեջ նույն արմատի ծայնդարձի *e* աստիճանով ձևից տվել է **dherg'h* > հայ. դարձ «դառնալ» (Աճառյան 1971, հ. I, էջեր 656-657, 639):

Ատաղծ բառը, որը նշանակում է «առհասարակ շինվածանյութ, մասնավորապես փայտեղեն», և որից ունենք ատաղծագործ, ատաղծարար բառերը, ծագումնաբանորեն կապված է սանսկ. *dalafi* «ձեղքում է, պայթում է», *dala* «կտոր, բաժին», հուն. *δελοσ* «գրելու տախտակ», լատ. *do-lo* «տաշել, փայտի վրա աշխատել», չեխ. *dlaha* «տախտակամածի տակի տախտակները» բառերի հետ, և ծագում է հ. ե. *del* «ձեղքել, արվեստով կտրել, փայտի վրա աշխատել» արմատի ծայնդարձի զրո աստիճանով *d!* տարբերակից՝ **ա** նախահավելված ծայնավորով և **ծ** աճականով (Աճառյան հ. I, 1971, էջ 284-285):

Դակու «ուրագ կամ կացին» բառը հուն. *Ιαγω* (դոր. *Ιαγω*) «սրել, *Ιγαγεον* սուր, հատու» բառերի հետ միասին ծագած է համարվում հ. ե. **dhag-* արմատից (Աճառյան հ. I, 1971, էջ 613):

Դարբին «երկաթագործ, վարպետ, արհեստավոր» բառը ծագումնաբանորեն կապված է հ. ե. **dhabhrō-* նախաձևի հետ: Հայերենին ցեղակից ձևեր են համարվում լատ. *faber* «վարպետ, արհեստավոր», *fabrē* «ճարտարո-

րեն, վարպետորեն», fabrica «արհեստանոց», fabrire «պատրաստել, ստեղծել», fabricāre «շինել, ձևակերպել», գոթ. ga-daban «հարմարեցնել», ga-dōbs «պատշաճ, հարմար», լիտ. dabšnus «գեղեցիկ», հ. պ. dobrŭ «գեղեցիկ, լավ», podobati «պատշաճել» (հմմտ. ռուս. добрый և подобать բառերը): Բոլորի պարզ արմատն է հ. ե. dhabh, որի նախնական իմաստը եղել է «ստեղծել, գեղեցիկ կերպով հարմարեցնել» (Աճառյան, հ. I, էջ 636): Գ. Բ. Ջահուկյանը գրում է. «Հայտնի է, տեղի ունեցե՞լ է արդյոք հնդեվրոպական *r-ի՝ հայերենին հատուկ դրափոխությունը՝ *dhabhro- > դարբին» (Ջահուկյան 1986, էջ 228):

Ի տարբերություն վերոհիշյալ արհեստագործական տերմինների՝ հայ. **հյուսն**, **բրուտ** բառերի ծագումը անհայտ է կամ կասկածելի: Դրանցից **հյուսն** բառի դեպքում Հ. Աճառյանը ենթադրում է, որ այդ բառը թերևս կապված է «հյուսել» արմատի հետ, և իմաստային զարգացման համար վկայակոչում է մեկ ընդհանուր արմատից ծագող լատ. texo «հյուսել» և τέκτων «հյուսն» բառերը: Սակայն **հիւ** արմատը նա չի ստուգաբանում (Աճառյան հ. III, 1977, էջ 101, 102):

Ինչ վերաբերում է հայ. **բրուտ** բառին, Հ. Աճառյանը այն նույնպես չի ստուգաբանում (Աճառյան հ. I, 1971, էջ 493), իսկ Գ. Ջահուկյանը գտնում է, որ **բրուտ** և արհեստի հետ կապված մի շարք այլ բառերի բնիկ հնդեվրոպական համարժեքները հայերենում բացակայում են (Ջահուկյան 1986, էջ 265):

Բիր-ը համարվում է բնիկ հայերեն բառ՝ bhi-ro-`bhci- «խփել» արմատից, բայց հավասար իրավունքով այն կարող է համարվել իրանական փոխառություն, մանավանդ եթե կապված է **բահ**-ի հետ (*bher-«ծակել, կտրել, ճղել», եթե ոչ *bhibeh-ից՝ «փորել») (Ջահուկյան 1986, էջ 551): Այնուհետև տողատակի հղումում Գ. Ջահուկյանը նշում է, որ «Հ. Աճառյանը բառը կապում է **բահ**-ի հետ, բայց համարում է բնիկ հայկական՝ սխալ հիմունքով վկայակոչելով **մահ** բառը, որ իրականում նույնպես իրանական ծագում ունի» (Ջահուկյան 1986, էջ 551):

Դուրզն արմատի մասին վկայակոչումները կցկտուր են: Անտուան Մեյեն գրում է, որ «հայ. **դուրզն** բառը «կավա-

գործի անիվ» վաղուց համեմատվել է հուն. անիվ բառի հետ, սակայն այն կարող ենք բացատրել միայն այն դեպքում, եթե ենթադրենք *dhurgh- սկզբնաձևը, որ ոչ մի տեղ չի հանդիպում, սակայն հնարավորություն կտար պահպանելու մի ստուգաբանություն, որ կարծեք պարտադիր է» (Մեյե 1978, էջ 40): Իսկ ըստ Հ. Աճառյանի՝ դուրզն «բրուտի անիվ» բառը հուն. τροχός «անիվ, բրուտի անիվ» հ. իռլ. droch «անիվ» բառերի հետ միասին ծագում է հ. ե. dhrogh- նախաձևից: Ընդ որում, հայերեն ձևը բացատրելու համար ենթադրվում է, որ *dhrogh- արմատը հայերենում ենթարկվել է հնչյունների դրափոխության. *dhrogh > *դրուգ > *դուրգ > դուրզն (Աճառյան հ. 1, 1971, էջ 687):

**ԱՐԻԵՍՏ - ԱՐԻԵՍՏԱՎՈՐԱՆԻՉ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ԳՐԱԲԱՐՈՒՄ**

Արիեստագործական տերմինների անվանակարգության գրաքարյան շերտը հիմնականում մշակվել է XIX դարում, երբ հայ բառարանագրությունը թևակոխում է մի նոր փուլ: XIX դարի բառարանագրական կոթողներն են Մանվել Ջախջախյանի իտալերեն-հայերեն, հայերեն-իտալերեն, Փիլիպոս Ճամձյանի իտալերեն-ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն, Նորայր Բյուզանդացու ֆրանսերեն-հայերեն և Մ. Քաջունու «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց» բառարանները: Վերջինս, փաստորեն, առաջին հայերեն հանրագիտարանային բնույթի տերմինաբանական բառարանն է: 1906 թ. տպագրված Գ. Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն և Հ. Դադբաշյանի ռուսերեն-հայերեն լիակատար բառարաններում նշված ոլորտի անվանակարգությունը մոտ երեք անգամ քիչ է, քան Քաջունու բառարանում: 40-ամյա տիտանական տերմինաբանական աշխատանք է կատարված այդտեղ, և, ըստ էության, այն XIX դարի հայ տերմինաբանական արվեստի բարձրակետն է: Քաջունու բառարանը բարձր է գնահատել Հակոբոս Տաշյանը (Տաշեան 1926, էջ 23):

Արիեստավոր և արիեստներ նշանակող անվանումների տերմինակազմական կաղապարները և բառակազմական ատաղձը Քաջունու բառարանում ավելի կանոնակարգված են, քան մինչ այդ եղած բառարաններում, այլևայլ հրատարակություններում ու մամուլում:

Տերմինակազմական կաղապարները ներկայացնելու նպատակով փորձենք բնութագրել արիեստավորանիշ անվանումների իմաստաբանական ոլորտը: Ըստ սեռային հասկացության՝ դրանք նշանակում են գործող անձ, այսինքն՝ իմաստաբանորեն մտնում են գործողի դասի մեջ: Գործողի լեզվաիմաստաբանական կարգը հայերենում մասնավոր քննության չի ենթարկվել, ուստի և մշակված չէ

դրա տերմինաբանությունը: Քանի որ բնությունը մշտապես գործողության մեջ է, հետևաբար յուրաքանչյուր երևույթ (իրական թե մտային) գործող է կամ կարող է գործող լինել: Գործողի ակնհայտ բնույթ ունեն գործիքները և մարդը. այս երկու կարգերը տարբերվում են իր-անձ հակադրությամբ, ինչպես նաև կերպային աղուտ իմաստով. անձն առավել գործունակ է ըմբռնվում, քան գործիքը: Հայերենում անձի և իրի քերականական կարգերը ձևաբանական մակարդակում հստակ տարբերակված չեն, ուստի գործիքի և գործող անձի տերմինաբանական կաղապարները և բառակազմական ատաղծը որոշակիորեն փոխներթափանցված են:

Գրաբարում, ըստ Քաջունու բառարանի, արհեստավորանիշ անվանումների տերմինային կաղապարը գրեթե միշտ արտահայտվում է բաղադրյալ բառի (իսկական բարդություն) տեսքով. միայն մի քանի անվանումներ տրված են բառակապակցությամբ (ընդելուզիչ ականց, յօրինող երվնագարդ դրուագաց և այլն): Պարզ բառերը սակավ են՝ բրուտ, հյուսն, խառատ, դերձ(ակ) և այլն: Արհեստավորանիշ անվան հիմնական կաղապարն է՝ գոյական + բայա-հիմք կամ ածանցակերպ, ըստ որում, առաջին բաղադրիչը գործունեության առարկայի անունն է, իսկ երկրորդը՝ գործողություն նշանակող բայի հիմքը. օր.՝ քարհատ, կոշկակար, արծաթագործ: Այս կաղապարը առաջանում է շարահյուսականի ամփոփմամբ. օր՝ մարդ, որ հատ է գքար→քարհատ: Իրականում քարհատը նախ ըմբռնվում է որպես ածական (քարհատ մարդ), ապա խոսքիմասային փոխանցմամբ դառնում է գոյական (քարհատ մարդ→քարհատ): Շարահյուսական կաղապարի ամփոփում հանդիսացող այս ածականական կաղապարը գտնում ենք նախորդ դարերում՝ հատկապես գրաբարի կենդանի լեզվի շրջանում (արծաթագործ սպասք): Քաջունու՝ տերմինաբանական հստակ ծրագրվածություն ունեցող բառարանում այս կաղապարը արհեստավորանիշ անվանումների դեպքում միմիայն գոյականական կիրառություն ունի: Այս կաղապարով արտահայտված անվանումների մեծագույն մասի մեջ որպես բայահիմք հանդես է գալիս **գործ** ածանցակերպը.

օր.՝ սկահագործ, տակառագործ, փետրագործ, ժապավի-
 նագործ, բյուրեղագործ, թամբագործ, թիթեղագործ, պատե-
 նագործ, պաղպաղակագործ, ձարագործ, ոսկեթելագործ,
 ձեռնոցագործ, շաքարագործ, կահագործ, դամասկագործ,
 եբենագործ, հրանօթագործ, խեցագործ: Գոյական բաղադ-
 րիչը փոփոխության է ենթարկվում ըստ գրաբարի բառա-
 կազմական օրենքների (ժապաւէն → ժապաւինագործ),
 կամ տերմինաստեղծ նպատակներով նրբին փոփոխու-
 թյունների են ենթարկվում առանց խախտելու գրաբարի
 բառակազմական կանոնները (դամասկեան արուեստ →
 դամասկագործ, եբենոս փայտով աշխատող → եբենա-
 գործ): Այս կաղապարով (գոյական + **գործ** բայահիմք) ար-
 տահայտված անվանումները կազմում են մնացած բոլոր
 կաղապարներով արտահայտված անվանումների գրեթե
 կեսը (մոտ 160 անվանում): Այս ածանցը, դեռևս հայերենի
 նախագրային շրջանից սկսած, ամենակենսունակն է, որի
 շնորհիվ դարերի ընթացքում կազմվել են հարյուրավոր նոր
 բառեր: Արդեն գրաբարյան շրջանում հստակվում է դրա
 «աշխատանք, պաշտոն, մասնագիտություն» բառակազ-
 մական նշանակությունը, ինչպես՝ զինագործ, ժամագործ,
 թամբագործ, կավագործ, թիթեղագործ և այլն: Այս կաղա-
 պարի (գոյ. + բայահիմք) երկրորդ տեսակն է գոյ. + **արար**
 բաղադրյալ ձևը. օր.՝ հացարար, քացախարար, լվացարար,
 ներկարար, արծնարար, ծալարար, լեղակարար, սանձա-
 րար, խոհարար կամ խահարար, խցարար: Այս կաղապարի
 մի քանի անվանումներ կազմված են նաև առաջին կաղա-
 պարի միջոցով. օր.՝ արծնագործ, քացախագործ, հացա-
 գործ, խցագործ, ըստ որում՝ **գործ**-ով կաղապարը կիրառ-
 վում է որպես նախընտրելի ձև: Բացի **գործ**, **արար** ածան-
 ցակերպ բայահիմքերից՝ կան նաև այլ բայահիմքեր, որոնք
 ավելի նյութական են նշանակում գործունեության բնույթը.
 օր.՝ բովահատ, ականահատ, դրամահատ, կուրդնկար,
 կոշկակար, գրակազմ, գրակապ, գրաշար, աղորեպան,
 աղոնավոր, դիաթաղ, խրվանդաքաղ, թանգար, լումայա-
 փոխ, լումայահավաք, ոսկեհան: Մի քանի անվանումներ
 կան, որոնցում բայահիմքը հանդես է գալիս անցյալ կատա-

րյալի տեսքով. օր.[՝] կրեփեաց, յուղեփեաց, խնկեփեաց, հացեփեաց: Արհեստավորական անվանումներ պետք է դիտել նաև **վաճառ** բայահիմքով արտահայտված բառերը: Բանն այն է, որ հին դարերում, առավել ևս XVIII-XIX դդ., արհեստավորը միաժամանակ վաճառող էր (ՀՄՀ 1976, հ. 2). և՛ ֆրանսերենը, և՛ իտալերենը, որոնք Քաջունու բառարանի հիմք լեզուներն են, միևնույն գործողանիշ վերջածանցով նշանակում են և՛ արտադրողը, և՛ վաճառողը: Ուստի այս դեպքերում Քաջունին և՛ արտադրողի, և՛ վաճառողի անվանումները դնում է կողք կողքի. օր.[՝] կրեփեաց-կրավաճառ, հացագործ-հացավաճառ, սանձարար-սանձավաճառ, քացախագործ-քացախավաճառ, ակնագործ-ակնավաճառ և այլն:

Արհեստավորական անվանումների երկրորդ արդյունավետ կաղապարը բոլորովին տարբեր է առաջինից և՛ ձևային, և՛ նյութական առումով: Այն կազմված է առաջնադիրք բայահիմքով և **-իչ** կամ **-ող** կայուն գործածվող վերջածանցներով: Շարահյուսական կաղապարի փոխակերպում ներկայացնող բառակազմական կաղապարում բացակայում է ուղիղ խնդիրը. միայն պահպանվում է բայահիմքը, որին կցվում են **-ող**, **-իչ** վերջածանցները. օր.[՝] որ սափրե՛ գիերս → սափրիչ: **-Ող** և **-իչ** ածանցների կիրառական ոլորտների բաշխումները XIX դարի երկրորդ կեսից սկսած դառնում են ավելի անորոշ, քան XVIII դարում. ինչպես տեսնում ենք Մխիթար Սեբաստացու բառարաններում (1749-1769 թթ.), XVIII-XIX դդ. գրաբարում **-ող** ենթակայական դերբայակազմիչը ուներ ածանցական նշանակություն և կարող էր **-իչ** ածանցին գրեթե ամբողջովին փոխարինել, սակայն **-ող**-ը գործողության իմաստ էր պարունակում ավելի, քան **-իչ**-ը, որի հետևանքով անվանումը՝ տերմինը, անբավարար արտահայտչականություն էր ստանում այն բոլոր դեպքերում, եթե բառիմաստը չէր պահանջում այդպիսի ընդգծված գործողի իմաստ: Սակայն **-իչ** ածանցն էլ բոլորովին ազատ կիրառություն չէր կարող ունենալ, քանի որ գործիքների անվանումները գերազանցապես կազմվում էին **-իչ** ածանցով և ոչ թե **-ող**-ով: Այսպիսով, տերմինաբանական տեսակետից անցանկալի վիճակ

էր ստեղծվում. միևնույն ձևով արտահայտվում էր և՛ գործող անձը (գործիչը), և՛ գործիքը: Այստեղ **-իչ**-ը անձի դեպքում կամ պետք է փոխարինվեր **-ող**-ով, կամ գործիքի անվանումը արտահայտվեր որոշիչ-որոշյալ բառակապակցությամբ, որոնց օրինակները և գտնում ենք Քաջունու բառարանում: Օր.՝ խուզող, կտրիչ - խուզիչ, կտրիչ մեքենա: Այս կաղապարը մեծ մասամբ կազմված է պարզ բայարմատով և **-իչ** ածանցով՝ դրվագիչ, հղկիչ, յարդարիչ, հատակիչ, կաղապարիչ: Համեմատաբար քիչ են պարզ բայարմատ + **ող** կաղապարով անվանումները (օր.՝ փչող): Քիչ չեն այս կաղապարի այն դրսևորումները, որտեղ բայահիմքը բաղադրյալ կազմություն է. օր.՝ փորագրիչ, փորագրող, արծաթագծիչ, գեղազարդիչ, նմանատպող, նաւածեփիչ և այլն: Այս կաղապարը առանց **-ող**-ի, **-իչ**-ի նույնն է առաջին կաղապարի հետ: Սակայն այսպիսի անվանումները առանց **-ող**-ի, **-իչ**-ի դառնում էին բազմիմաստ, կորցնում տերմինային միանշանակ իմաստը: Այսպես, XIX դարի գրաբարյան լեզվազգացողությամբ **փորագիր** կարող էր ընկալվել՝ ա) փորագրիչ, բ) որևէ նյութի վրա փորված գրություն, **նաւածեփ**՝ ա) նավը ծեփող արհեստավոր, բ) նավի հատուկ ծեփը, **գեղազարդ**՝ ա) գեղազարդող, բ) գեղեցիկ զարդ, գ) գեղեցկազարդ (ածական) և այլն: Նման դեպքերում **-ող**-ի, **-իչ**-ի հավելումը ուներ ճշգրտող, միանշանակ դարձնող նշանակություն. այսպիսի կաղապարումը խորթ չէր գրաբարին, սակայն ընդարձակ կիրառություն ստացավ XIX դարի գիտական լեզվում, և Քաջունին հմտորեն է կիրառում այսպիսի բառակազմությունը:

Գտնում ենք արհեստավորական երկու անվանում **-որդ** ածանցով՝ **խաղախորդ** և **շաղորդ** (գործող կաթնեղինաց), և կարուակ ձևը՝ որպես կոշկակար: Խաղախորդ և կարուակ բառերը գտնում ենք նույն տերմինային նշանակությամբ Հին հայկազյան բառարանում. **շաղորդ** բառը մեզ անհայտ է. հավանաբար բարբառային բառ է և այլուր գրանցված չէ:

* Նկատի պետք է ունենալ, որ **-ող** և **-իչ** ածանցները ենթադրում են իրական կամ հնարավոր բայահիմքեր:

Արհեստների անվանումների լեզվակադապարները տարբեր բնույթ ունեն. գլխավոր կադապարը, որով ձևավորվում է արհեստանվանումների մեծ մասը, ուղղակի սերում է արհեստավորանվանումների առաջին կադապարից. օր.՝ մետաքսագործ → մետաքսագործություն, թամբագործ → թամբագործություն, թիթեղնագործ → թիթեղնագործություն, պաղպաղակագործ → պաղպաղակագործություն և այլն: Բերենք այս կադապարի այլ դրսևորման մի քանի օրինակներ՝ կոշկակար → կոշկակարություն, ներկարար → ներկարարություն, գրաշար → գրաշարություն, որմաշեն → որմաշինություն, ծալարար → ծալարարություն, թղթակազմ → թղթակազմություն և այլն: Արհեստավոր անվանման կադապարը ընդարձակվում է ածանցական բաղադրիչով, ըստ որում՝ գործում է միայն **-ություն** գոյականակազմիչ ածանցը:

Արհեստներ նշանակող երկրորդ կադապարը գրեթե (կան բացառություններ) չի կապվում արհեստավորանիշ ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ կադապարի հետ: Արհեստներ նշող այս կադապարը միջնորդավորված չէ արհեստավորանիշ կադապարի հետ, այլ ուղղակի ելնում է գործունեության բայական արտահայտությունից. բայի՝ փոխանուն գոյականի վերածմամբ հայերենը թույլ է տալիս անվանել արհեստները: Որպես գոյական փոխանունի վերածման միջոց ծառայում են **-ում** և **-ություն** ածանցները, բայածևից գոյականի անցման միջակա օղակ է բայածևի անորոշ դերբայը, որը որոշյալ հոդերի միջոցով գոյականական խոսքիմասսային իմաստ է ստանում. օր.՝ գործաւորք գգեն գբւրդս → գգելը → գգումն: Պատահական չէ, որ Քաջունու հայերենֆրանսերեն տերմինաբանական բառարանում այս դեպքերի համար տրվում են նաև անորոշ դերբայի ձևերը: Քաջունին ֆրանսերեն *modeleur* բառին հանդիպադրել է հայերեն կադապարիչ բառը՝ «Արուեստաւորն, որ հանէ զկադապար իրաց», իսկ *modelage* տերմինի դիմաց գրել է. «Հանելն զկադապար» և այլն: Բնականաբար արհեստանվանման այս կադապարը հիմնականում կազմված է բայահիմք + **ումն** նյութական ձևով: Օր.՝ դրուագիչ-դրուագումն, «Ա-

րուեստ բ. Գործ դրուագելոյ, այսինքն զնուրբ թերթս մետաղեայս ազնիւս կցել ճնշմամբ անբաժանելի օրինակաւ յերեսս հասարակ մետաղաց»: «Argenture իգ. իտ. Argentature (ի բառէն argent արծաթ). Արծաթագօծումն. - «Արուեստ. Արիեստավորը կոչվում է արծաթագօծիչ. «Անձն որ օծանէ արծաթով զմետաղս, զփայտ, զխեցիս, զթուղթ և այլն»:

Բերենք այս կաղապարով կազմված արիեստանվանումների մի քանի օրինակ՝ զգիչ → հերիերումն, զգումն, արծնիչ → արծնումն: Նույն կաղապարի մյուս ծնն է բայա-հիմք + **ություն**: Ըստ որում, **-ում** և **-ություն** ածանցները հոմանիշներ են, և կան դեպքեր, որ միևնույն արիեստը անվանվում է և՛ **-ում**, և՛ **-ություն** ածանցներով. ողորկումն → ողորկություն, փորագրիչ, փորագրող → փորագրություն: Արիեստավորանիշ երկրորդ կաղապարի դեպքում հայերենը դիմում է հիմնականում արիեստանիշ վերոհիշյալ կաղապարին: Բանն այն է, որ ոչ թե հայերենի միջոցները թույլ չեն տալիս առաջին կաղապարով կազմել արիեստանուններ (ասենք՝ արծնիչ → արծնիչություն, գեղազարդիչ → գեղազարդչություն), այլ հայերեն լեզվամտածողությունը, որի պահպանումը Քաջունու տերմինաբանակերտման սկզբունքն է: Անշուշտ, անջրպետ չկա արիեստանիշ այս երկու կաղապարների միջև, քանի որ այդ երկուսն էլ գործողություն-գործունեություն բայական արտահայտման գոյականացմանն են ծառայում և ըստ մասնավոր դեպքերի կամ որոշակի իմաստային տարբերակման պահանջի՝ կարող են լինել արիեստանվանումներ, որոնք կազմվում են և՛ այս, և՛ մյուս կաղապարով: Քաջունու բառարանում կան արիեստանուններ, որոնց համապատասխան արիեստավորանունները չկան, և հակառակը. այստեղ պատճառը ֆրանսերենի նյութն է, որովհետև հայերենը և՛ արիեստի, և՛ արիեստավորի անվանման կանոնավոր ու գործուն ավելի զորեղ կաղապարներ և բառային ատաղծ ունի, քան ֆրանսերենի գիտական լեզուն:

Արիեստ-արիեստավորանիշ անվանումների քանակը Քաջունու բառարանում կազմում է մոտ 700 բառ և արտա-

հայտություն, որոնք համապատասխանության մեջ են դրված իր ժամանակի ամենագարգացած՝ ֆրանսերեն և մասամբ իտալերեն տերմինաբանության հետ: Նշված տերմինային բազմությունը բացառապես հայերեն է (որպես ոչ նախընտրելի ձև ունի միայն **գաղատուս** փոխառությունը) և ներկայացնում է XIX դարի պարզ գրաբարի բառապաշարը և լեզվամտածողությունը: Քաջունին հավաքել, մշակել, տերմինակազմական միօրինակացման է ենթարկել այդ ոլորտի եղած բառապաշարը՝ միայն անհրաժեշտության դեպքում ստեղծելով նոր բառեր: Տերմինների ընտրության գործում նա հետևում է միայն արտահայտության գիտական ճշգրտության և հայերեն լեզվամտածողության հարազատության սկզբունքներին:

Մինչև Քաջունու այս հանրագիտական բառարանը որոշակի գիտակցություն կար հայերենի տերմինաբանության պատմության և արվեստի վերաբերյալ: 1840-ականներից Վիեննայի Մխիթարյան միաբանությունը ծեռնամուխ եղավ ոգեկոչելու բուն դասական հայերենը և նրա լեզվամտածողությունը, և փաստորեն հիմք դրվեց տերմինաստեղծման դասական հայերենյան ուղղության, որի լավագույն իրականացումը 1846 թ. հրատարակված իտալերեն-ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն սովարածավալ բառարանն է: Տերմինաբանական չափազանց կարևոր նշանակություն ունենալով՝ տերմինաշինության այս ուղղության արգասիքը միաժամանակ ուներ իր արմատական թերությունը. անտեսվում էր հայոց լեզվի պատմական զարգացումը թե՛ նյութապես (պատմականորեն ստեղծված տերմինային ժառանգություն), թե՛ լեզվամտածողության զարգացման առումով (Սարգիսեան 1905, էջ 167): Օր.՝ XIX դ. ընդհանրացած օձառագործ անվանման դիմաց նշյալ բառարանը դնում է աճառագործ, հայելագործ-ձարտարապետ հայելույ, մաղագործ-գործիչ մաղի և այլն: Սրան հակառակ՝ XIX դարի ընդհանրացած ապակագործ ձևի դիմաց՝ ապակեգործ, խեցագործ-ի փոխարեն՝ խեցեգործ և այլն, որոնք ընդհանրացան նոր գրական լեզվում: Քաջունին ընդունում է հայերեն լեզվամտածողության գերակա սկզբունքը՝ սա-

կայն այն դիտելով պատմական զարգացման հունի մեջ: Արիեստ-արիեստավորանիշ անվանումների համար նրա առաջնակարգ աղբյուրներն են Ջախջախյանի իտալերեն-հայերեն (1804) և Նորայր Բյուզանդացու ֆրանսերեն-հայերեն (1884) բառարանները:

Անշուշտ, Քաջունու բառարանում այս խմբի բառապաշարը ունի որոշ հնաբան երանգ (կարունակ=կոշկակար, լուսնող=պայտար), բայց դա կապված էր XIX դարի նախնյաց գրաբարի վերածնության հետ, որը հարստացրեց XVIII դարից բնականորեն զարգացող գրաբարը, սակայն տերմինաբանական ավանդույթի նկատելի խախտում առաջացրեց. բերենք մեկ օրինակ. «magon... Որմաշէն. ասացեալ է ի յետնոց Որմադիր». «ի յետնոց»-ը նախնիք-ը չեն». ՀՀԲ-ում որպես բուն տերմին դրված է որմնադիր բառը, իսկ ՆՀԲ-ն չունի այս ձևը: Քաջունին հետևում է վերջինիս:

Քաջունու մշակած այս ոլորտի բառապաշարը, մաքրվելով հնաբան գրաբարյան երևույթներից, հավելուրդային համանիշ-հոմանշությունից, յուրացվեց նոր գիտական հայերենի գույգ ճյուղերի կողմից: Շատ կարևոր նշանակություն ունեցավ նրա՝ հայոց լեզվին հարազատ բառակազմական կաղապարների ճիշտ օգտագործման հմտությունը:

Անշուշտ, արիեստի և արիեստավորի, լայն առումով՝ գործողի և գործունեության՝ հայերենի համակարգին նվիրված ուսումնասիրությունները կարևոր են արդի հայերենի այս ոլորտի կարգավորման համար:

ԳԼՈՒԽ 2

ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Միջին հայերենի արիեստագործական անվանակարգությունը* տակավին քննության առարկա չի դարձել, մինչդեռ հայ միջնադարյան մշակույթին և հատկապես միջին հայերենի բառապաշարին վերաբերող աշխատանքներում մեծաքանակ նյութ կա: Միջին հայերենի արիեստագործական անվանախումբը կազմում է գրաբար բառիմաստային նույն խմբի հաջորդական օղակը և կապ է հաստատում աշխարհաբարի ու նոր գրական հայերենի տարբերակների՝ նույն ոլորտի անվանախմբերի հետ: Այս շերտը կարևոր նշանակություն ունեցավ XVIII - XIX դդ. մեզ հետաքրքրող անվանակարգությունը մշակելիս:

Միջինհայերենյան արիեստագործական անվանումները հիմնականում ավանդված են միջին հայերենով գրված մատենագրության մեջ, մասամբ՝ X - XVII դդ. միջին հայերենով խառն գրաբար մատենագրության մեջ, որոնց ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ հիմնարար աշխատություններում հարևանցի ներկայացվում է նաև մեզ հետաքրքրող բառաշերտը: Այս առումով հատկապես կարևոր աղբյուր են Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի երկհատոր բառարանը (Ղազարյան, Ավետիսյան 1987-1992, հ. 1-2), Մարտիրոս Մինասյանի խմբագրությամբ հրատարակված Նորայր Բյուզանդացու բառգիրքը (Բիւզանդացի 1884), որը, ցավոք, անավարտ է մնացել. Պ տառից սկսած՝ այն առկա է սոսկ անմշակ բառացանկի տեսքով: Բյուզան-

* «Արիեստագործական» վերադիրը հայոց միջնադարյան նյութական մշակույթին վերաբերող գրականության մեջ բազմիմաստ է. դրանով նշանակվում են արիեստավորանիշ և արիեստանիշ անվանումները, երկրորդաբար՝ արիեստագործական գործիքները և հումքերը: Առաջին երկու վերադիրների բազմակրկնությունից խուսափելու համար անհրաժեշտության դեպքում օգտագործում ենք արիեստագործական բառը արիեստավորանիշ և արիեստանիշ վերադիրների փոխարեն:

դացու ուշադրությունը գրավել են հատկապես հայերեն կամ հայերենացած բառերը, բառաքաղման սահմանը եղել է XII - XVII դդ., իսկ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի բառարանը պարունակում է գրեթե բոլոր այն փոխառությունները, որոնք վկայված են միջին հայերենով, և ընդգրկում է XII - XVI դդ., մասամբ՝ XVII դարը: Անշուշտ, միջին գրական հայերենը՝ որպես առանձին լեզվական համակարգ, հանդես է գալիս XII դարից, սակայն նրա բառային դրսևորումների տարրերը ի հայտ են գալիս X - XII դդ. «ռամկագիր» մատենագիրների երկերում (Շապուհ Բագրատունի, Մատթեոս Ուռհայեցի և այլն), և ժամանակակիցների կողմից ակնհայտ նշվել է այդ նոր լեզվական որակը և դրան տրվել զանազան անվանումներ, որոնք ներկայացնում է Բյուզանդացին իր բառարանի առաջաբանում:

Արհեստագործական անվանումների բառաքաղման ընթացքում մեզ համար գլխավոր աղբյուր է ծառայել Ղազարյանի և Ավետիսյանի բառարանը, որը միջին հայերենի ընդհանուր բացատրական բառարանի արժեք ունի, մասամբ օգտագործել ենք Բյուզանդացու բառարանը՝ առանձնակի մատենագրական վկայությունների միջոցով անվանումների իմաստները ճշտելու համար և Ղազարյանի ու Ավետիսյանի բառարանում բացակայող անվանումների դեպքերում: Վերջինիս աղբյուրներից է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ը. հեղինակներն օգտագործել են Հ. Ամալյանի կազմած՝ այդ բառարանի քննական բնագիրը^{*}: Անշուշտ հիմնավորված է ուշմիջնադարյան այս երկից բառաքաղումներ կատարելը, սակայն հեղինակները չեն օգտագործել Ֆրանչեսկո Ռիվոլայի «Բառգիրք Հայոց»-ը, որը հրատարակվել է Մեղրեցու բառարանից մոտ 70 տարի առաջ:

Ռիվոլայի բառարանը, ինչպես տեղեկանում ենք բառարանի՝ միջին ֆրանսերենով գրված առաջաբանից, կարևոր է համարել կարդինալ Ռիշելյոն և թույլատրել է հրատարակել: XVII դարում Եվրոպայի (Ֆրանսիայի) արևելյան

^{*} Կարծում ենք, որ Ռիվոլայի բառարանի նյութը Ղազարյանի և Ավետիսյանի բառարանում չի օգտագործվել այն պատճառով, որ այն բացառապես հիմնված է մատենագրական վկայությունների վրա:

քաղաքականության նպատակների իրականացման համար լավագույն գործակալներ տակավին մնում էին պապական կաթոլիկ առաքյալները, և այս բառարանը նախատեսված էր հատկապես պարսկահայ տարածքում կաթոլիկության տարածման նկրտումներ իրականացնող առաքյալների համար: Այն հայերեն-լատիներեն բառարան է, պարունակում է մոտ 12 հազար բառ ու արտահայտություն և ընդգրկում է XVI - XVII դդ. պարսկահայ ընդարձակ տարածքի խոսակցական՝ կենդանի բառապաշարը, մասնակիորեն XVI - XVII դդ. պարզագույն գրաբարից սահմանափակ թվով բառեր, այսինքն՝ այն, ինչ լեզվական առումով անհրաժեշտ էր կաթոլիկ առաքյալներին այդ տարածքում գործելու համար:

Բառարանի հիմնական նյութը ներկայացնում է միջին խոսակցական հայերենի ուշ շրջանի արևելյան տարբերակը, որը XII - XIII դարերից ի վեր մատենագրության մեջ հազվադեպ է պատահում՝ կիլիկյան միջին գրական հայերենի տարածման հետևանքով:

Այս առումով, կարծում ենք, նշված բառարանը միջին հայերենի կարևոր աղբյուրներից է, և այստեղից քաղել ենք մեզ հետաքրքրող այն նյութերը, որոնք կամ բացակայում են վերոհիշյալ մեծ բառարաններում, կամ նորահայտ տարբերակներ են նրանցում եղածի նկատմամբ: Ղազարյանի ու Ավետիսյանի և Ն. Բյուզանդացու բառարաններում բացակայում են հետևյալ արհեստագործական բառանվանումները՝ խբազ և հացեփ, ծեծրար (թանկագին քարեր տաշող), կլաէկրար, հիաք, հիաքութին, դալխանչի,

* Կարապետ Գաբիկյանը (տե՛ս «Սիոն», 1953, էջ 45-47) նկարագրել է Ստեփանոս Բժշկի «Ծաղիկ» կոչված բժշկարանը, որի ծեռագիրը թվագրված է 1232 թ.: Չեռագրի խորագրում հեղինակը գրում է. «Եւ ես մեղուցեալ Ստեփանոս... բազում աշխատանօք ընտրեցի, սակաւ և ըղորդեցի Կիլիկեցոց բառին վրա և Արևելքից բառին վրա և արարք զսա միջնավար»: Սա փաստում է, որ Բագրատունյաց շրջանում արդեն առկա էր միջին հայերենի արևելյան տարբերակը. դա եզակի դեպքերում է մատենագրական արտահայտություն ստացել, և Ռիվոլայի բառարանը այս տարբերակի ուշ շրջանի հուշարձաններից մեկն է:

ղոնդանջի (օրորոցագործ), մաղրար, մանվոր (մանել), նըղշրար, պասմաջի, չուխագործ, ջառահ, սառաջ (փոկագործ, սանձագործ, սանձափոկեր պատրաստող), սաւկըրար, սաւկըրարություն, վարվոր, վեմագործ, սահատջի, վիճկար, փուռնաջի, քաբաբջի, ֆանարջի, գաւրծելապան (ածխագործ), դանկրար, դանկրարութիւն, դլաք, դլքութիւն, թիւագործ, թֆընկջի, լարսուգող (երաժշտական գործիքների լարեր պատրաստող):

Այս բառարանում մեծ թիվ են կազմում արհեստագործական անվանումների նոր տարբերակները: Բերենք մի քանի օրինակ՝ հիուս, վլացարար և լվացարար, պղինձգործ, կաշկար և այլն: Բառարանը մեզ հետաքրքրող թեմայի առումով արժեքավոր է նաև այն բանով, որ, ի տարբերություն Երեմիա Մեղրեցու բառարանի, բառիմաստները, թեպետ լատիներենով, այստեղ ճշգրիտ արտացոլված են, որը հնարավորություն է ընձեռում մի շարք փոխառյալ բառերի անորոշ, անստույգ իմաստները պարզել: Օրինակ՝ հիաք (գործվածքեղենի արհեստավոր), դալխանջի (վահանագործ), ղոնդանջի (օրորոց պատրաստող արհեստավոր) և այլն:

Սույն բառարանը թույլ է տալիս նաև ավելի պարզորոշ նկատել միջին հայերենի և XVIII - XIX դդ. աշխարհաբարի արհեստագործական անվանումների բառապաշարի կապն ու հարաբերությունը:

Միջին հայերենի արհեստագործական անվանումների քննության համար կարևոր նյութ են պարունակում հայոց արհեստագործության պատմությանն ու ազգագրությանը վերաբերող աշխատությունները: Այս առումով հիշատակելի են հատկապես Վ. Աբրահամյանի «Արհեստները Հայաստանում IV - XVIII դդ.» (Եր., 1956) գիրքը և Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX - XIII դդ.» (Եր., 1958, 1964) երկհատոր աշխատությունը: Այս գործի մեջ բազմաթիվ ուշագրավ դիտարկումներ կան տարբեր արհեստների և արհեստավորության միջինհայերենյան անվանումների վերաբերյալ: Կավագործության մասին, որը մարդկության հնագույն արհեստներից է՝ Հայաստանում

բարձր զարգացման հասած, Բ. Առաքելյանը գրում է. «Քըն-նարկվող արհեստը հայ հին գրականության մեջ հայտնի էր մի քանի անուններով՝ կավագործություն, խեցեգործություն և բրուտի արհեստ, դրանց համապատասխան այդ արհեստով պարապողն էլ կոչվում էր՝ կավագործ, խեցեգործ և բրուտ: Ամենից ավելի գործածական էր բրուտ անունը» (Առաքելյան 1964, հ. 2, էջ 212): Իսկ մագաղաթագործության մասին նշում է. «Այս աշխատանքը (մագաղաթ և թուղթ կուկելը - Լ. Ա.) կատարողները կոչվում էին կոկողներ, որոնք ձեռագրերում հիշատակված են իբր գրիչների օգնականներ» (Առաքելյան 1964, հ. 2, էջ 316): Պատմագիտական և աղբյուրագիտական լայն գիտելիքները հեղինակին թույլ են տալիս մանրամասն նկարագրել նշված անվանումները այն կենդանի համակարգի մեջ, որում ծնվել և կայուն գործածություն են ձեռք բերել դրանք. «Գտակ կարող արհեստավորների թվում կային այնպիսիները, որ պարապում էին միայն մորթուց գտակ կարելու արհեստով և կոչվում էին ճոն, մի տերմին, որը հանդիպում է Անիի և մոտակա Արջո-Առիժի արձանագրությունների մեջ» (Առաքելյան 1964, հ. 2, էջ 320): Հեղինակը բերում է վիմագիր արձանագրություններով վկայված մի քանի հիշատակումներ XI - XIII դդ.՝ «Ճոնի որդի Մխիթար, Ստեփանոս Ճոնակներ, Ստեփանոս Ճոն»: XI դարի երկրորդ կեսում հիշատակվում են Գրիգոր կազմողը, Հակոբ կազմարարը. այդ մասին Առաքելյանը գրում է. «Գիրք կարել, կպցնելը կազմարարության շատ կարևոր աշխատանք էր: Այդ էր պատճառը, որ կազմողները իրենց անվանում էին նաև գրակապ, օր.՝ Գրիգոր գրակապ, Սիմեոն գրակապ» (Առաքելյան 1964, հ. 2, էջ 317): Այստեղ կան դիտողություններ, որոնք նշված անվանումների վերաբերյալ հանրալեզվաբանական բնութագրումների արժեք ունեն. «Անկվածգործություն: Բրդից, վուշից, կանեփից, մետաքսից գործվածքներ արտադրելու արհեստը միջնադարյան Հայաստանում հայտնի է եղել մի շարք անուններով: Ժողովրդի մեջ առավել գործածական, ինչպես երևում է, եղել է կտավագործություն տերմինը, որը և տեղ է գտել առակների մեջ, օրինակ՝ Մխիթար Գոշի մոտ:

Գրական լեզվի մեջ ավելի գործածական է եղել **ոստայնանկություն** տերմինը, դրան համապատասխան արհեստավորը կոչվել է ոստայնանկ: Հին են նաև անկված, անկվածագործություն տերմինները: Վերջապես, համեմատաբար ավելի նոր է, բայց միջին դարերում գործածվել է ջուհակ պարսկերենից փոխառյալ բառը» (Առաքելյան հ. 2, 1964, էջ 267-268): Հեղինակին, բնականաբար, չի հետաքրքրել **արհեստագործական** բառերի ծագումը, ստուգաբանությունը, սակայն անվան հասկացությունը հստակ բացատրելու նկատառումով երբեմն այդ բնույթի պարզաբանումներ է տալիս: Հետաքրքիր է **վարձկանք** բառի ծագումը. «Գյուղերից հեռանալով՝ քաղաքում հաստատվում էին ոչ միայն արհեստավորները, այլև ամեն տեսակի սև աշխատանք կատարելու ընդունակ մի բավականաչափ ստվար խավ: Քաղաքները չվող սևագործների բազմությունը օրվա իր ապրուստը վաստակում էր գերազանցապես օրավարձով կատարվող զանազան պատահական աշխատանքների շնորհիվ. այդ է պատճառը, որ քաղաքային բնակչության այս խավին պատկանողները հայկական աղբյուրներում անվանված են վարձկանք» (Առաքելյան հ. 2, 1964, էջ 67): Շատ հետաքրքիր է **շոհարար** բառի ծագումը. «Պատրաստի գործվածքը մաքրելուց և սպիտակեցնելուց հետո թաթախում էին ալյուրից, օսլայից և խեժից պատրաստված մի լուծույթի մեջ՝ շոհի մեջ, որը նրան ամրություն ու գեղեցկություն էր տալիս: Այդ լուծույթը պատրաստող և նրա մեջ թաթախելու աշխատանք կատարող աշխատավորն է, հավանաբար, որ կոչվում էր շոհարար» (Առաքելյան հ. 2, 1964, էջ 269): Հեղինակը երկրորդ հատորի վերջում (Առաքելյան հ. 2, 1964, էջ 349 - 350) տալիս է հայ միջնադարյան արհեստների իր համակարգած ցուցակը, որտեղ, արդի գրական հայերենի անվանումներին զուգահեռ, տրվում են միջին հայերենի համապատասխան ձևերը՝ զինագործություն (սլեհարություն), լկամարարություն (սանձի կաշվե մասը պատրաստող), կատնոց (լայն զգեստ կարող), որմնադրություն կավի (մոյրա դները) և այլն:

Արհեստ և **արվեստ** բառերի ըմբռնումը X - XVII դարե-

րում, այսինքն՝ միջին հայերենի գոյության շրջանում, ինչպես նաև V - XVII դարերի գրաբարում, տարբեր է եղել մեր արդի հասկացողությունից: Նույն երևույթը նկատվում է նաև հին հունարենում և լատիներենում:

Գրաբարում **արիեստ** և **արուեստ** բառերը գրեթե իմաստային տարբերություն չունեն, հավանաբար դրանք ձևային տարբերակներ են: **Արիեստ** - **արվեստ**-ը ոչ ամբողջովին հակադրվում է ճանաչողություն-իմացություն - իմաստություն հասկացություններին: Ունենք V դ. թարգմանություն, որում Պլատոնը ասում է Արիստոտելի մասին. «Արիեստիկ արարեր զիմաստասիրութիւն» (ՆՀԲ): **Արիեստ** - **արվեստ**-ը ամենալայն իմաստով նշանակում էր գործունեություն, սակայն իմաստային ձգողությամբ (ինտենցիա), բուն իմաստ՝ հնարագետ, ճարտար գործունեություն, ուստի և՛ ճարտար գործ և այլն: Հայ միջնադարը քիչ ավելի հստակ տարբերում է պաշտոն (ծառայություն) և արիեստ-արվեստ հասկացությունների գույգը: Այսպիսով, գիտություն, պաշտոն, արիեստ-արվեստ հասկացությունները, հայոց միջնադարում ունենալով իմաստային տարբեր կենտրոններ, միաժամանակ գտնվում էին միմյանց նկատմամբ հարընթաց (դինամիկ) իմաստային փոխներթափանցման մեջ: **Արիեստ** և **արվեստ** հասկացությունները հայերենում (V դ.), այնուամենայնիվ, նրբերանգային կիրառական տարբերություններ են երևան հանում. արվեստը երբեմն կարող էր նշանակել ավելի ճարտար, հնարագործ և նաև՝ հրաշագործ արիեստ: Եվ այս տարտամ իմաստային տարբերությունը միայն XVII - XVIII դարերում է դառնում բավականին հստակ տարբերակում, այսինքն՝ այն իմաստով, ինչպես մենք այժմ ըմբռնում ենք: Արդեն ՀՀԲ-ում և ՆՀԲ-ում գրանցվում է **արիեստ** և **արվեստ** բառերի տարիմաստությունը: Վերը ասվածից պարզ է, որ, ըստ միջնադարյան ըմբռնման, ճշտորոշված չեն արիեստ, արվեստ, գիտություն, պաշտոն (ծառայություն) հասկացությունների սահմանները: Միջնադարում արիեստ է համարվում մանկաբարձությունը, կավատությունը, բժշկությունը, վաշխառությունը, ծովից մարգարիտ հանելու գործունեությունը

(սրա համար միջին հայերենում ունենք խորէջ տերմինը) և այլն: Արհեստ, արհեստավոր հասկացությունների մասին միջնադարյան ըմբռնումը պարզելու, ինչպես նաև արհեստագործական անվանումների՝ միջին հայերենի յուրահատուկ ձևերի մասին նախնական տեղեկություն տալու համար Անիի երազահանից (XI - XII դդ.) մեջբերենք մի ամբողջական հատված.

«Զինչ արուեստ կա, որ կու բանի. հանց ասեն թէ դարբին տեսանես յերազի մեծ մարդ է, թէ ինքն դարբնութիւն առնէ գանձ գտանէ, թէ լինի դարբին զմարդու բանն յատեանն կատարէ - հանց մարդ է, գուսանն հանց մարդ լինի, որ յայլոց շահ գայ. սլեհարարն հանց մարդ լինի, որ օգնական է, սառաճն, և մագմանն կանայք լինին, լկամարարն ատենահաս մարդ լինի, նետրարն ուղղորդախօս մարդ լինի ուղորդ, թամբարարն իրաւարար մարդ լինի, նալպանդն յայլոց լաւարար մարդ լինի՝ կոպղայքարարն առաջնորդ մարդ լինի, փորեզիկն... պղնձագործն հաւատացեալ մարդ է, և չարչարկոտ, ցորենածախն երկրակալ մարդ է, ոսկերիչն ստախօս, ներկարն հանց մարդ լինի, որ իւր ձեռնէն լաւութիւն գայ այլոց, և դէպ ինքն սուտ շատ ասեն, լկամարարն սրբահաւատ մարդ է, աղօթարարն յերազն լաւ մարդ լինի, դերծակն հաւատով մարդ է, մուճկարն, և ջուլիակն հանց մարդ լինին, որ զայլոց բարին կամենան սպասարարն և բրուտն, հայելացոյցն լաւ մարդ լինին, նայ ևս գիտնական լինին, որ զայլոց փուտ հանեն, հալաւարարն սըրբահաւատ մարդ է. հացրարն ուղղորդարար և պարոն լինի, դրամզարկն և փողազարկն, պըկազարկն, տօպ(տ)օպզարկն, և այլն ի յայս նման, ամէնն անիրաւ մարդիք են և սոցին ծայնն ամենեկն հիւանդութիւն է, գողն (պետք է լինի գողն - Լ. Ա.) հիւանդ մարդ է, բամպակծախն հիւանդութիւն է, հաճամն կամքն կատարի, հիւիւն և մօքերիկն, և խարպանդայն, և ուղտապանն և ըռքէպտարն այդ ամէնդ թատպիրարար մարդիք են. մայալումն գլխաւոր մարդ է, պարտիզպանն, և բաղնէպանն, և դարպսպանն - այս ամէն գանձ են, և տղայք. և քարգործն հարուստ մարդ է և հարկւոր, ջահրարն տխմար մարդ, փայտ կոտորողն ճաշուշ

է, նատաւն գգրափախուց մարդ է, սանտրարարն լաւ մարդ է, հովնարարն հալալաբան մարդ է, ապա թե բանի լինի մարդու բախտն է» (Առաքելյան հ. 2, 1964, էջ 449)՝:

Այնուհանդերձ, արհեստագործության մասին միջնադարյան ըմբռնումները հիմնականում համապատասխանում են մեր արդի պատկերացումներին: Բուն արհեստներ են համարվել մետաղագործությունը, ապակեգործությունը, փայտագործությունը, քարագործությունը, մանածագործությունը և գործվածքեղենի արտադրությունը, կաշեգործությունը, գրչության հետ կապված գործունեության տեսակները: Դրանցից բացի՝ եղել են այլևայլ մանր արհեստներ (ոսկորի մշակում, սանտրագործություն, սատափագործություն, դեղագործություն, վարսավիրություն, աղթարություն, գուսանություն, վարձակություն, աբեթ պատրաստելը (ղավ) և այլն):

Բ. Առաքելյանը, ներկայացնելով հայ միջնադարյան արհեստների համակարգը, գրում է. «Այսպիսով, մենք նշեցինք միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցող 88 արհեստ, 9 արհեստ համարվող զբաղմունք և 30 արհեստային մասնաճյուղ: Արհեստագործության նման լայն ճյուղավորվածությունը միանգամայն բնորոշ է եղել զարգացած ֆեոդալական քաղաքների համար» (Առաքելյան 1964, հ. 2, էջ 351-352): Արհեստագործական հասկացությունների այս մեծ քանակը ինչպիսի՞ լեզվական արտահայտություն է ստացել միջին հայերենով, արդյո՞ք եղել է հասկացությունները լրիվ ծածկող գիտական անվանումների համակարգ: Վ. Աբրահամյանը և Բ. Առաքելյանը իրենց հիշյալ գրքերում փորձել են արդի անվանումներին առնչել իրենց հայտնի միջինհայերենյան համապատասխան ձևերը: Նրանց կազմած ցուցակներում միջինհայերենյան զուգահեռ ձևերը պակասավոր են: Դրանք կարելի է մասամբ լրացնել:

* Մատենադարանի ձեռագիր դ 695, էջ 219 բ-220 բ: Առաջին անգամ հրատարակել է Վ. Աբրահամյանը (տես նշվ. աշխ.): Երազահանի սույն բնագիրը պահպանվել է նաև դ 597 (էջ 156բ-157ա), դ 5613 (էջ 371-372բ) ձեռագրերում: Վերջին ձեռագրում որոշ զբաղմունքներ բացակայում են, իսկ դ 597 ձեռագրում չկան **հաճամն** և **հովնարար** բառերը: Բայց դ 695 ձեռագրում թվարկվածներից դուրս հիշատակվում է ևս չորս զբաղմունք՝ **հայելացոց**, **որսորդ**, **ծկնծախ**, **մունեղիկ** (տես Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 449):

Ձեռագրերում պահպանվել են ներկեր և թանաքներ պատրաստելու մեծ թվով բաղադրատոմսեր, որոնց զգալի մասը գալիս է X - XI դդ., թերևս ավելի վաղ շրջանից: Իսկ արդյո՞ք եղել են թանաքագործ, թանաքագործություն անվանումները: Պարզվում է, որ ոչ: Հայտնի է, թե ինչպիսի մեծ զարգացման էր հասել քիմիան (ալքիմիա) միջնադարյան Հայաստանում: Ալքիմիկոսները ստանում էին մետաղական համաձուլվածքներ, մետաղական օքսիդներ, փոխում մետաղների ֆիզիկական կազմը, գույնը, անջատում դյուրահալ մետաղները, ստանում էին վարաղներ, ոսկեջուր, արծաթաջուր, անագապատում էին անոթներ, արտադրում էին դեղորայք, թանաքներ, ներկեր, անուշահոտ յուղեր, օձառներ և այլն: Ալքիմիկոսները կոչվում էին քիմեական, քիմիարար, քիմիագործ և ըստ իրենց գործունեության տեսակների անվանումներ չունեին: Անշուշտ, այս շահավետ մասնագիտության նրբությունները գաղտնի էին պահվում և սահմանափակ շրջանականների էին հայտնի, ուստի ալքիմիկոսները գրում էին մթին ու անհասկանալի. «Վարդապետքն և երգողքն (վարպետներն ու վարպետացուները - Լ. Ա.) արուեստիս այս մթին և տարակոյսնիք խօսեալ են. զի եթե յայտնի և պարզ խօսեալ էին՝ ամենեքեան իմանային և ուսանեին և արուեստս այս անարժէք լինայր» (Հարությունյան 1956, էջ 47): Այսպիսի հանգամանքները նույնպես աննպաստ էին անդրադառնում անվանադրման հարցում: Սակայն անվանումների պակասի գլխավոր պատճառն այն է, որ միևնույն արհեստավորը կատարում էր ապրանքաստեղծման գործունեության այն բոլոր փուլերը, որոնք աշխատանքի բաժանման կապիտալիստական եղանակի պայմաններում կատարում են տարբեր արհեստավորներ, այսինքն՝ տեխնիկական մասնագետներ:

Հայերենով առանձնապես հարուստ է ախթարական արհեստի անվանակարգը: Արդեն գրաբարը ուներ ախթարական արհեստով զբաղվողների բազմաթիվ անվանումներ՝ ժամագետ, ժամաբաշխ, բժժագործ (կախարդ), գէտ (կախարդ, հմայող, քաղդեա), ալիւրոդիւթ (Դիւթիչ ալերբ, որ հմայէ ի ձեռն ալեր) (ՆՀԲ), հաւահմայ (Հմայող ի ձեռ

հաւոց, հաւադէտ, հաւահայրց) (ՆՀԲ), գարեդիւթ (Կախարդ հմայօղ, որ դիտէ ի ձեռն գարւոյ) (ՆՀԲ) և այլն: Միջին հայերէնում ոչ միայն գործածվում են դրանք, այլև ստեղծվում են տասնյակ նոր անվանումներ: Ն. Բյուզանդացու բառարանում **Ռամխօս** գլխաբառի տակ բերված է խաչատուր Կեչառեցուց օրինակ. «ժողովեցան երազագէտք, նշանալոյծք, աստեղադատք, ամովնագէտք, լականատեսք, ծննդաբանք, բախտագիւտք, ճակատագիւտք, մոգագիւտք, ըռամ խօսք»: Ղավիթ Ալավկա որդու կանոնագրքում (The penitential of David of Ganjak 1961) կա մի գլուխ՝ «Վասն ազգի ազգի սովորութեան և չար հմայութեան» (Բիւզանդացի, էջ 79-83), որից պարզ է դառնում, թե որքան էր տարածված հմայական սնոտիապաշտությունը Հայաստանում: Հայ եկեղեցին, քրիստոնեության դիրքերից ելնելով, բազմաձյուղ այդ «արիեստի» և դրանով զբաղվողների դեմ պայքար էր մղում:

Բացի վերը բերվածներից՝ հիշատակենք զուտ միջին-հայերենյան կազմություն ունեցող մի քանի օրինակ ևս՝ ռամբգարկ, վիճակառ, գարընկեց, ազբնագող, հատահմայ և այլն: Շատ են վերլուծական ձևերը՝ նետ դնող, մոմ թափող, գարի ձգող և այլն:

Միջին հայերենում արիեստագործական անվանակարգության մոտ կեսից ավելին արտահայտվում էր բառակապակցական՝ ենթատերմինային ձևերով՝ կտավ գործող (փոխանակ՝ կտավագործ), քար կտրող (փխնկ՝ քարհատ), նավ շինող (փխնկ՝ նավագործ), դումաշ գործող (փխնկ՝ կերպասագործ), մագաղաթ շինող (փխնկ՝ մագաղաթագործ) և այլն: Իսկ արիեստը նույնպես արտահայտվում էր կայուն բառակապակցությամբ, սակայն բազմազան ձևերով՝ արիեստ մագաղաթի, մագաղաթ շինելը, «արուեստ վասն թուր շինելոյ», ոսկեջրելն, ջրդեղելն և այլն: Այս երևույթները առկա էին նաև գրաբարում, սակայն շատ ավելի նվազ չափով, քանի որ գրաբարն օգտագործում էր բառակազմական իր գորեղ հնարավորությունները:

Միջին հայերենի արիեստավոր և արիեստ նշանակող անվանումների բառակազմական կաղապարները նույն

են գրաբարի համապատասխան ձևափմաստային խմբի կաղապարների հետ: Գրաբարն ուներ երկու բառակազմական կաղապար արհեստավորանիշ անվանումների և նույնքան էլ արհեստանիշ անվանումների համար: Նույն շարահյուսական կառուցվածքը բառակազմական մակարդակում կարող է ամփոփվել գործողանիշ երկու կաղապարի տեսքով. օրինակ՝ «որ գործ է գարծաթ» → արծաթագործ մարդ → արծաթագործ, «որ ծուլ է գերկաթ» → ծուլող, ծուլիչ: Առաջին դեպքում բայարմատի (մասամբ բայահիմքի) և ուղիղ խնդրի միջոցով կազմվում է գործողանիշ գոյականը, ըստ որում, այն նախապես գործողանիշ վերադիր (ածական խոսքի մաս) է, ապա լրացյալի մենիմաստության պայմաններում վերածվում է փոխանուն գոյականի: ՆՀԲ-ում կերպասագործ, ատաղծագործ և գործողանիշ նույն խմբին պատկանող շատ բառեր նշվում են որպես ածական խոսքի մաս, այսինքն՝ գրաբարի լեզվամտածողությամբ դրանք գոյական չեն, ինչպես, ասենք, պղնձագործ, երկաթագործ և այլ բառերը, որոնք նշվում են որպես գոյական: Գործողանիշ երկրորդ կաղապարի դեպքում ուղիղ խնդիրը (կամ առհասարակ խնդիրը) չի պահպանվում, բայահիմքին ավելանում է գործողանիշ ածանց (-իչ, -ող, -որդ, -ակ): Միջին հայերենը պահպանում է գրաբարի նույն կաղապարները՝ ցուագործ (տանիք կառուցող՝ տանիքաշէն), որմադիր (գրաբարում՝ որմաշէն), զրահագործ, դիպակագործ, մանրավաճառ, քարագնաց (գրաբարում՝ լեռնագնաց), ոսկող (ոսկյա թիթեղով պատող վարպետ), գրիչ, թափիչ, սրբագրիչ, ներկող, կոկող, ծուլող, պատրուսող և այլն: Միջին հայերենը գործողանիշ երկրորդ կաղապարի դեպքում երբեմն թույլ է տալիս կրկնակի ածանցում՝ գծողակ, գծողիկ, գրողիկ, հազվադեպ՝ եռակի ածանցում՝ գրչողիկ: Կրկնակի, եռակի ածանցում թեպետ ունի և գրաբարը, սակայն արհեստագործական անվանումներում չի պատահում: Գործողանիշ առաջին կաղապարը գրաբարում կարող է -ող, -իչ ածանցները ստանալ հարկ եղած դեպքում (օր.՝ ոսկեջրող, արծաթագծող և այլն), սակայն այս ձևերը հատուկ են գրաբարի գործածության ուշ՝ XVIII - XIX դդ. շրջանին. միջին հայերենը չունի կաղապարային ընդարձակման այս ձևը:

Գրաբարի արհեստանիշ զույգ կաղապարները նույնպես պահպանվում են միջին հայերենում: Արհեստանիշ առաջին կաղապարը կազմվում է արհեստավորանիշ առաջին կաղապարից՝ երկրագործ → երկրագործություն, թագագործ → թագագործություն, զինագործ → զինագործություն, ապակեգործ → ապակեգործություն, աղյուսագործ → աղյուսագործություն, ոսկեհան → ոսկեհանություն, բեռնակիր → բեռնակրություն, տնաշեն → տնաշինություն և այլն: Ըստ որում, - **ություն** ածանցով են կազմվում արհեստավոր նշանակող արմատական անունները՝ դարբին → դարբնություն, հյուսն → հյուսնություն, մշակ → մշակություն: Գրաբարի այս կաղապարով կազմվում են և միջին հայերենի համապատասխան անվանումներ՝ խորանկար (վրանագործ) → խորանկարություն, մուճակարար → մուճկրություն, քիմիագործ → քիմիագործություն: Փոխառյալ արհեստավորական անվանումներից նույն ձևով են կազմվում արհեստանուններ՝ հիաք (պարս.՝ գործվածքեղեն հյուսող) → հիաքություն, սուկրար → սուկրություն և այլն: Գրաբարը, առավել ևս միջին հայերենը, հակված չէ արհեստանունները բաղադրյալ բառի տեսքով արտահայտելու, այլ կայուն բառակապակցությունների ձևով՝ սուկարի արհեստը, սուկարելը, լկամարար → լկամարարի արհեստ՝ փէշան, լկամ շինելը և այլն: Միջին հայերենը, ի տարբերություն գրաբարի, եթե քերականության մեջ հակված է վերլուծականության, ապա բառակազմության մեջ՝ գրաբարին գերազանցող սեղմության, որն իրականացնում է հատկապես վերջընթեր վանկերում սղված ծայնավորներով բաղադրիչների ընտրությամբ, հնչյունափոխության իր հարուստ հնարավորություններով՝ մուճկար → մուճկրարություն, կլաէկարար → կլաէկրարություն, չուխա → չուխագործ, վիճակ → վիճկար, փայտկոփ → փայտկոփություն, քարգործ → քարագործություն, աճապարար → աճպարար և այլն:

Արհեստանուններ կազմելու գրաբարյան երկրորդ կաղապարը («Որ ծուլ է գերկաթ» → ծուլումն) բայարմատի կամ հիմքի - **ումն**, -**ութիւն** ածանց ստանալն է: Այս կառուցվածքի նախատիպը է բայի փոխարինումն է համապա-

տասխան բայանվամբ՝ դրվագիչ → դրվագում կամ դրվագելը: Միջին հայերենը այս կաղապարի դեպքում գերազանցապես դիմում է փոխանուն անորոշ դերբայով կազմության՝ ջրդեղելն, ոսկեջրելն, անագելն և այլն, մասամբ հետևյալ ձևերին՝ արվեստ քիմիականության, արվեստ հյուսնի, արվեստ հյուսնության, արվեստ դեղապետական և այլն: Միջին հայերենը ունի արհեստանունների կազմության բայանուն գոյականների արմատական եղանակ, որը չենք գտնում գրաբարում: Ն. Բյուզանդացին **կոփ** բառի վերաբերյալ բերում է հետևյալ վկայությունները. «Արա՛ զարուեստ հիւսնութեան, զկոփ, զտաշ, զձև».- «Ջկոփ և զտաշ նորա սրբաքերս արասցես վանդակաւ».- «Որ գիտեն առնել զտաշ և կոփ»: Այստեղ **տաշ**, **կոփ** բառերը կիրառվում են որպես արհեստանուններ: Ռիվոլյան ունի **գիգ** ձևը՝ «զգումը, զգելը»: Աճառյանը **զգել** բառահոդվածի մեջ հիշատակում է, որ **գիգ** արմատը պահպանվել է Լոռու և Ալաշկերտի բարբառներում՝ «զգում, զգվածք, զգելու գործողություն» նշակելու համար. «Այս բուրդը քանի գիգ է. Երկու օր է գիգ են անում»:

Ի տարբերություն կաղապարների՝ միջին հայերենում գրաբարի արհեստագործական անվանումների ատաղձը արդեն ակնհայտ փոփոխության է ենթարկված XII - XIII դարերում, և որքան հեռանում ենք դեպի միջին հայերենի ուշ շրջան, այնքան գրաբարյան տարրերը նվազում են: Եթե գրաբարը բառակազմական ատաղձի կենտրոնացման միտում է ցուցաբերում, միջին հայերենում, կարելի է ասել, ցրման միտում է նկատվում: Անշուշտ գրաբարյան անվանումների մի մասը անփոփոխ գործում է միջին հայերենում, հատկապես նրա վաղ շրջանում (X - XIV դդ.). արծաթագործ, տարազագործ, մազման, ոսկեգործություն և այլն: Մի մասն էլ գործում է միջին հայերենի հնչյունափոխությամբ կազմված ձևերով՝ քարագործ-քարգործ, հացեփեաց-հացեփ, կաշեգործ-կաշեագործ, հյուսն-հյուս, քարակոփ-քարկոփ, ապակագործություն-ապիկեգործություն, ապակագործ-ապիկեգործ, նարոտաներկ-նարոտներկ, ներկարար-ներկար, կոշկակար-կոշկար և այլն: Ամենից ակնհայտը

բառակազմական աստաղծի փոփոխությունն է. փոխվում է կա՛մ բառն ամբողջովին, կա՛մ նրա բաղադրիչը՝ որմաշեն-որմաղիք, խույրագործ-խույրարար, լեռնագնաց-քարագնաց, մետաքսագործ-մետաքսահյուս, աղյուսագործ-աղյուսարար, ոսկեհան-ոսկեհատ, ոսկեգործ-ոսկերիչ, ներկագործ-ներկարար, դեղագործ-դեղրար, նավագործ-նավաշեն, ձեղունագործ-ցվագործ, պրոնագործ-մազման, օդագործ-կոշկար կամ կարուակ, ասրագործ-բրդագործ, ասրագործություն-բրդագործություն, խաղախորդ-կաշեգործ կամ դապաղ, մորթագործ-ճոն, սատար կամ ուտայնանկ-ջուլահակ կամ ջուլիակ: Գրաբարյան հոմանիշներից ընտրվում են ավելի պարզ ձևերը՝ երկաթագործ-դարբին, խեցեգործ-բրուտ, երկրագործ կամ հողագործ-մշակ, խորանակար կամ խորանագործ կամ խորանարար-վրանարար: Եթե գրաբարը միտում ունի գերազանցապես **-գործ** ածանցակերպով կազմել արհեստավորանիշ անունները, և **-արար** ածանցակերպը ունի երկրորդական տեղ, ապա միջին հայերենում առավելապես օգտագործվում է **-արար** ածանցակերպը՝ դերածանցը*, իսկ **գործ**-ը սակավ գործածություն ունի՝ լվացարար, մանծարար (մանածագործ), աղյուսարար, շինարար, քիմիարար, տրեխարար, ծեփրար, չմշկարար, մուշտակարար, հացրար, ծաղկարար, մուճկարար, գուրպարար (գուլպայագործ), աղօնարար, մաղրար (մաղագործ), կլաէկար, ծեծրար (թանկագին քարեր տաշող, հղկող), վիճկար (վիճակ գուշակող, հմայ), դանկար (դանակ շինող), նըխշրար (կտորեղենի վրա դաջող) և այլն: Գրաբարի համեմատ մեծանում է **-ող** ածանցի գործածությունը՝ կոկող, ներկող, գծող, ոսկող, ծեփող, ծուլող, պատրուսող, եզող (լծվար, եզը քշող) և այլն: **-Ող** ածանցի ծավալման միտումն է այս ի հայտ բերում, որը XVIII դ. խոսակցական լեզվում արդեն դուրս էր մղել **-իչ** ածանցը, և այն մնացել էր միայն գործիքների անվանման մեջ՝ բրիչ, գրիչ, թակիչ և այլն:

Արհեստագործական անվանակարգությունը հայերե-

* Ինչպես այս, այնպես էլ **-գործ** ձևայինների մասին կխոսենք արհեստավորանիշ ածանցները քննելիս:

նու՛մ մի՛նչև արաբական գերիշխանության տարածումը Հաստանի վրա բացառապես բնիկ հնդեվրոպական կամ հայերենի հիմքի վրա զարգացած ձևիմաստային անվանախումբ է: Մինչև XII դարը, այսինքն՝ միջին գրական հայերենի՝ պաշտոնական և պետական լեզվի գործառություն ստանձնելուց առաջ, արաբական փոխառությունները հայերենի արհեստագործական անվանակազրության մեջ սակավ են՝ աճապարար, կազագործություն (մազեղենից պատրաստվող նրբագույն գործվածքեղեն՝ մետաքս, դիպակ): XII-XIV դդ. հիշատակված են արդեն արաբերենից փոխառված մի շարք անվանումներ՝ փորեզիկ (մանրավաճառ), պկազարկ (արաբ. պուկ՝ շեփոր, եղջերափող), մոքերիկ (ջորեպան), ըռէպան (ծիապան), խարբանդան (իշապահ), սառաճ (թամբագործ), հալավարարություն (հանդերձարարություն, տարազագործություն), լկամարար (սանձագործ), ճոն (մորթե փափախ կարող, լայնաբար՝ մորթեգործ, մուշտակարար), պայթար (պայտագործ, պայտար), սլահարար, կլաէկարար: Պարսկերենից փոխառվածներից են՝ չմշկարար, ջուլահակ-ջուլիակ: Այս փոխառություններին զուգահեռ կամ տարբերակված ձևով մեծ մասամբ գործում էին հայերեն բառերը՝ մետաքսագործ, մանրավաճառ, փողհար, խաղախորդ և այլն: Սակավ են հունալատին փոխառությունները՝ քիմեագործ, նօտար, նօտարություն: Թաթար-մոնղոլական տիրապետության շրջանում հայերենին անցած արհեստագործական նոր անվանումներ չեն հիշատակված: Վերը բերված օրինակներից կարելի է նկատել, որ օտար բառը կամ աստղծը գործածվում է հայերենի հետ միաձուլված՝ ըստ հայերենի բառակազմության և հնչյունաբանական օրենքների, այսինքն՝ լեզվամտածողության խաթարում գոնե XII - XIV դդ. չի նկատվում: XIV - XV դդ. ի վեր՝ թուրքական և պարսկական բռնապետությունների պայմաններում, փոխառությունների ներթափանցումը հայերենի մեջ անչափ մեծանում է: Այդ մասին դիպուկ է ասել Այտընյանը. «Փոխառութանց չափը անչափութիւնն էր»: Հայտնի են դրա հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական, քաղաքական, մշակութային պատճառները: Այս

շրջանում արհեստագործական անվանումները հիմնականում արաբական-պարսկական են, սակայն հայերենի մեջ են թափանցում թուրքերենի միջոցով կամ ուղղակի պարսկերենից: Անշուշտ, որոշ վերապահությամբ, այդ նոր շրջանի փոխառությունները կարելի է բաշխել դիպվածային և կայուն փոխառությունների: Դիպվածային ենք համարում, եթե փոխառությունը լեզվի մեջ կենսունակ չի եղել գոնե որոշ շրջանում: Այսպես, դիպվածային են՝ ադամլչի (հացթուխ, հացագործ), չօրվաճի (խոջա, աղա), թախիանն (գիրք կազմող) և այլն: XIV դարից ի վեր բազմաթիվ փոխառություններ կան, որոնք կայուն գործածություն են ստացել: Դրանց մասին պատկերացում կազմելու համար բերենք օրինակների մի ընդարձակ խումբ՝ դազազ (մետաքսագործ), սանիաթքար (արհեստավոր), դուրզար (փայտագործ), դասապ (մսագործ), նաջար (ատաղձագործ), բազազ (կտորեղենի առևտրական), թաբաղ (կաշեգործ), դալամքար (կտորեղենը նախշող, դաջող նկարիչ), ուստաքար (արհեստավոր, վարպետ), դալայճի (անագագործ), ջահավիրչի (ակնագործ, ակնավաճառ), սովդաքար (վաճառական), շերբեթճի (օշարակագործ), քանդիրբազ (լարախաղաց), ջարրահ (վիրաբույժ), խայաթ (դերձակ), խբազ կամ խաբազ (հացթուխ), հիաք (տարազագործ), դալխանչի (վահանագործ), դոնդանչի (օրորոց պատրաստող), պասմաչի (տպագրիչ՝ արհեստավորը), փուռնաչի (հացթուխ), ֆանարչի (ջահ պատրաստող), դալաք, դլաք (վարսավիր), թվանկչի (հրացանագործ) և այլն՝:

Փոխառությունների ծավալվող հորձանքի պայմաններում XVII - XVIII դդ. խոսակցական լեզվում հայերեն գործածվող սակավ արհեստագործական անվանումներ էին մնացել և մեծ մասամբ վերլուծական ձևերի վերածված՝ ադամանդագործ-էլմաս բանօղ, մագաղաթագործ-մագաղաթ շինող, կղմինդրագործ-կղմինդր շինող, մագման-մագ օլ-

* Բերված օրինակների ուղղագրական և այլ կարգի տարբերությունները (-չի, -ճի, -ոռ, -օղ և այլն) պայմանավորված են աղբյուրներում դրանց անմիօրինակությամբ:

րօղ, ակնագործ-ակ բանօղ, հայելագործ-հայելի շինօղ, աս-րագործ-բուրդ բանօղ, ջուլհակություն-կտավ գործելը, գի-նագործ-սիլահ փուսատ շինող, երկաթահատ-երկաթ կըտ-րող, էրկըթի մատենձի, խոյրարար-թագ շինող, խավուխձի և այլն: Ժամանակի գրաբար մատենագրությունը և տպա-գիր գործերը նույնպես հեղեղված են այսպիսի փոխառու-թյուններով՝ անշուշտ խոսակցականում գործածված լինե-լու՝ հասկանալիության նկատառումով, և հետևաբար՝ ավելի սակավ, քան ժամանակի միջինհայերենյան գրվածքներում:

Օտար արհեստագործական անվանումներից (և ոչ միայն արհեստագործական) հայերեն գրական լեզուն (նախ՝ գրաբարը, ապա՝ աշխարհաբարը) մաքրելու, պակա-սող անհրաժեշտ անվանումները ստեղծելու մեծ աշխա-տանքը հմտորեն իրականացրին Մխիթար Աբբան և նրա տաղանդաշատ աշակերտները:

Պարսկաստանում և Թուրքիայում արհեստավորները հիմնականում հայեր էին, սակայն գտնվելով օտար բռնա-կալության տակ և իրենց գործի բնույթով մեծ մասամբ կապված լինելով իշխանություն ունեցող կամ ունևոր օտար պատվիրատուի հետ՝ նրանք ստանում էին այլալե-զու արհեստագործական անվանումներ: Հետագայում այդ օտար անվանումները, կապվելով անծի կամ արհեստավո-րական ընտանիքի հետ, առաջ բերեցին հայերենում բազ-մաթիվ և բազմաձև ազգանուններ՝ Բերբերյան (վարսա-վիր), Սարաֆյան (դրամափոխ), Դոքմեձյան (պղնձածույլ, ձուլարար), Դեմիրձյան (երկաթագործ, դարբին), Քո-մուրձյան (ածխագործ), Համամձյան (որմնադիր), Մութա-ֆյան (մազման), Ճևափրձյան (ակնագործ), Ֆանարձյան (ջահագործ), Խույումձյան-Գույումձյան (ոսկերիչ), Յազի-ձյան (գրագիր) և այլն:

Վերոշարադրյալից ելնելով՝ կարող են եզրակացնել, որ

ա) միջինհայերենյան արհեստագործական անվանա-կարգությունը արտահայտված է գերազանցապես միջին հայերենով գրված մատենագրությամբ (XII - XVII դդ.), բայց այն դրսևորվում է սկսած X դարից ընդհուպ XVII դ. վերջե-րը գրաբարախառն ժողովրդախոսակցական ոճով գրված մատենագրության մեջ,

բ) միջին հայերենի արհեստագործական անվանակարգը պահպանում է տվյալ ոլորտի գրաբարյան կառուցվածքները և միայն մասնակի այլաձևություններ է դրսևորում, որոնք կարելի է դիտել որպես գրաբարյան կաղապարների ծավալված ձևեր,

գ) ի տարբերություն կառուցվածքային նույնության՝ միջին հայերենի արհեստագործական անվանակարգի բաղադրիչային ատաղձը ակնհայտորեն փոխված է գրաբարի նկատմամբ,

դ) գրաբարյան արհեստավորանիշ անվանակարգության միավորները, որոնք մեծ մասամբ գործողանիշ վերադիրից (ածականից) և լրացյալից էին կազմված (պղնձագործ մարդ), միջին հայերենում վերածվում են փոխանուն գոյականների (պղնձագործ),

ե) գրաբարյան անվանակարգը օգտագործվում է միջին հայերենում մասամբ՝ մերթ անփոփոխ, մերթ միջին հայերենի հնչյունափոխական օրենքներով տարբերակված, և երբեմն համանշային-հոմանշային հարաբերությունների մեջ է գտնվում միջինհայերենյան կազմությունների հետ: Տարժամանակյա կտրվածքով դիտված (X -XVIII դդ.)՝ ակնհայտորեն նվազում է դրանց գործածությունը՝ տեղի տալով կամ միջինհայերենյան հայաբառ ձևերին, կամ գերազանցապես փոխառություններին,

զ) XVI - XVII դդ. արհեստագործական անվանախումբը մեծ չափով շարունակում է գործել XVIII - XIX դդ. աշխարհաբարի խոսակցական տարբերակներում (արևելահայ և արևմտահայ) և պարզ, հանրամատչելի, ոչ գիտական գրվածքներում,

է) XVIII դ. պարզ գրաբարի համակարգը միջին հայերենի նշված անվանախումբը օգտագործում է ըստ նրա հայաբառ տարերքի՝ անտեսելով օտարաբան խառնուրդը, և ըստ էության, ուղղորդվելով միջին հայերենի մտածողությամբ, կանոնիկ է դարձնում այն գրաբարյան բառապաշարը, որը օգտագործվել էր միջին հայերենում:

ԳԼՈՒԽ 3

1. ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1800-1920-ԱԿԱՆ ԹԹ.

1800-1920-ական թթ. արևմտահայ և արևելահայ հատվածներում ստեղծված, կազմավորված և ձևավորված արհեստագործական անվանակարգությունը, հիմնականում ընդհանրական լինելով, տարբերվում է բովանդակային զանազանությամբ ու յուրահատուկ գծերով, քանակությամբ, բառատաղծով, հոմանշային կազմով, նորմավորման չափերով և այլ մասնավոր երևույթներով: Ուստի նպատակահարմար ենք համարել այս գլուխը բաժանել երկու ենթագլխի. առաջինում քննության ենք առնում նշված ժամանակաշրջանի արհեստագործական անվանումները արևելահայ, իսկ երկրորդ ենթագլխում՝ համապատասխան անվանումները արևմտահայ իրականության մեջ:

ա. Արհեստագործական անվանումները արևելահայերենում

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ունեցավ ազգային, հատկապես մշակութային, տնտեսական խոշոր նշանակություն: Ռուսաստանը, նպատակ ունենալով ընդարձակել իր տիրույթները՝ գրավել Արևմտյան Հայաստանը, վճռական քայլեր կատարեց՝ ամրապնդելու ռուսական իշխանությունը նվաճած տարածքներում: Խանական իշխանության համեմատ կիսով չափ նվազեցրեց հարկային բեռը, կատարեց հողային սեփականության որոշ բարեփոխումներ, ստեղծեց տնտեսական միասնական ազատ շուկա. թե՛ ապագա նվաճումների և՛ թե՛ նվաճած տարածքներում և այլուր իր իշխանությունը արմատավորելու նպատակով նա վերահսկողության տակ վերցրեց հայ եկեղեցու գործունեությունը 1836 թ. հաստատված հայ եկեղեցու կանոնադրությամբ, որը պատմության մեջ հայտնի է «Պոլոժե-

նիտ» անվամբ: Հայ ժողովուրդը իրավունք էր ստանում իբրև կրոնական առանձին համայնք պահպանելու իր լեզուն և ազգային-կրոնական առանձնահատկությունները: Հայ եկեղեցին իրավունք էր ստանում հիմնելու և պահելու հայկական դպրոցներ: Եկեղեցիներին կից ստեղծվելու էին ծխական դպրոցներ, իսկ թեմերում՝ սեմինարիաներ կամ թեմական դպրոցներ: Էջմիածնում հիմնվելու էր հոգևոր ճեմարան:

1815 թ. Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը, 1824 թ. Թիֆլիսում հիմնվում է Ներսիսյան դպրոցը, 1837 թվին՝ Երևանի թեմական դպրոցը: Այս ուսումնական հաստատությունները վիթխարի նշանակություն են ունեցել XIX և XX դարերի հայ մտավոր, ազգային կյանքում: 1870-ական թվերից ստեղծվեցին հոգևոր կամ վիճակային դպրոցներ, որտեղ դասավանդվում էին Հայաստանի, Ռուսաստանի և ընդհանուր պատմություն ու աշխարհագրություն, բնագիտություն, գծագրություն, հանրահաշիվ, ֆիզիկա, մարդակազմություն, երկրաչափություն և այլ առարկաներ: XIX դ. 40-50-ական թվերին Անդրկովկասում գործում էին մոտ 200 տարբեր տիպի դպրոցներ՝ մոտ 5000-ի հասնող աշակերտով:

Սակայն 1885-ին ցարը փակեց հայկական դպրոցները և թույլատրեց վերաբացել՝ պայմանով, որ դրանք պետք է սահմանափակվեին տարրական ուսուցման շրջանակով: Ցարիզմի հայահալած քաղաքականությունը ուժեղացավ 90-ական թվականներին: 1895-96 թթ. կրկին փակվեցին հայկական դպրոցները այս անգամ արդեն տասը տարով: Այդ դպրոցներում մինչև 80-ական թվերի վերջերը դասավանդվում էր միայն գրաբարը. աշխարհաբար գրական լեզուն ուսումնական առարկա չէր: Կրթության բովանդակությունը հոգևոր - կղերական, մասամբ հումանիտար բնույթ ուներ: Սահմանափակ դպրոցներում էր միայն դասավանդվում մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն, բնագիտություն: Արիեստագործական կամ ռեալական դպրոցները սակավ էին:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ակնհայտ առաջընթաց առաջ բերեց երկրի տնտեսական զար-

գացման մեջ: Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առևտրի ու արհեստների, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման համար: Աստիճանաբար կատարելագործվում էր արհեստագործական ապրանքների արտադրման տեխնիկան և արտադրանքի որակը, ավելի բազմապիսի էին դառնում ապրանքատեսակները, և մեծանում արտադրական ծավալները:

Ամբողջ XIX դարում և XX դարի սկզբներին Արևելյան Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խթանում էր բուն արհեստագործական արտադրության և ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը: Գոյություն ունեին հարյուրից ավելի արհեստներ, որոնցից կարևորներն էին՝ կաշեգործությունը, դարբնությունը, բրուտությունը, կոշկակարությունը, պղնձագործությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, վրանագործությունը: Երևանում կային ապակու, վառողի, թնդանոթաձուլական արհեստանոցներ: Արհեստավորները միավորված էին համքարությունների մեջ: Հայ համքարությունների առանձնահատկությունն այն էր, որ նրանց «կանոնադրությունները» հաստատում էր Ամենայն հայոց կաթողիկոսը: Համքարության գլուխ կանգնած էր ուստաբաշին, որին (և նրա օգնականին) ընտրում էր համքարության ընդհանուր ժողովը: Համքարական աստիճանակարգում հիմնական դեմքեր էին վարպետը, վարպետացուն և աշակերտը:

Հայ առևտրական խավը, որը փաստորեն գերիշխում էր Անդրկովկասում, ազատ գործունեության շնորհիվ դրամական մեծ կապիտալ ունենալով, ծեռնամուխ եղավ Անդրկովկաս ապրանքների ներմուծմանը՝ հարթելով ռուսական կապիտալի ճանապարհը Անդրկովկաս, որի հետևանքով 1860-70-ական թվերից նկատվում է հայ արհեստավորական խավի քայքայում: Արհեստագործական ապրանքաշրջանառության ծավալները կրճատվում են: Տնտեսության մեջ կատարված տեղաշարժերը անդրադառնում են լեզվի մեջ. գրական արևելահայերենի, ժողովրդախոսակցական լեզվի արհեստագործական բազմաթիվ անվանումներ դառ-

նում են սակավ գործածական կամ գործուն բառապաշարից դուրս են մնում՝ դառնալով արհեստագործական պատմական անվանումներ: Ապրանքների արդյունաբերական արտադրության արմատավորմամբ արհեստագործական անվանումները սկսում են վերածվել արդյունաբերական - տեխնիկական մասնագիտությունների տերմինների:

Արևելահայ քաղաքական, տնտեսական, կրթական յուրահատուկ պայմանների հետևանք է գիտությունների և արհեստագործության վերաբերյալ արևելահայերենով տպագրված գրականության փոքր ծավալը, աղքատիկ բովանդակությունը և տարրական կամ հանրամատչելի բնույթը: Տարբեր գիտություններին վերաբերող սակավ գրականությունը ուղղված էր հայոց դպրոցների սուղ պահանջների բավարարմանը, մասամբ այն նախատեսված էր ժողովրդական ընթերցանության համար: XIX դարի համար իրենց գիտականությամբ եզակի մնացին «Հանդես նոր հայախօսութեան»-ի (1857 թ.) և «Հյուսիսսփայլ»-ի (1858-1864 թթ.) բնագիտական հոդվածները. այսպիսի «եվրոպեական» գիտականությամբ գրականության պահանջ չկար հայ իրականության մեջ: Սակավ էր նաև արհեստագործության վերաբերյալ գրականությունը՝ ընդամենը 20-25 գրքույկ, և ընդգրկում էր հիմնականում գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառը: Դրանք մասնավորապես վերաբերում էին հողագործությանը, մեղվաբուծությանը, շերամապահությանը, բամբակի, վուշի, ծխախոտի և այլ մշակաբույսերի ցանքսին և արդյունքների վերամշակմանը, ոգելից խմիչքների արտադրությանը: Կան գրքույկներ, որոնք վերաբերում են չոր մրգերի արտադրությանը, քաղցրավենիքների պատրաստմանը, հրուշակագործությանը, խոհարարությանը, կարուծկի արհեստին, ջուլհակությանը: Այլ արհեստներին վերաբերող գիտելիքներ տրված են միայն Բեռնշտեյնի «Բնալուծութիւն Բերնշտեյնի. քիմիայի նշանակութիւնը գործնական կեանքում» (Թիֆլիս, 1885) հանրամատչելիից փոքր-ինչ բարձր բովանդակություն ունեցող գրքում: Համեմատաբար շատ են գործնական բժշկության, հաշվապա-

հույժան, վաճառականության բնագավառներին վերաբերող գրքերը, որոնք մասամբ նաև մասնագիտական բովանդակություն ունեին: Վերոհիշյալ փոքրածավալ արհեստագործական գրականությունը բացառապես նախատեսված էր ընթերցող լայն զանգվածների համար: Արհեստագործական այս գրականության բնույթը հասկանալի է, եթե հիշենք, որ Ռուսաստանը Անդրկովկասը դիտում էր հիմնականում որպես էժան հումքի աղբյուր: Մամուլը երբեմնակի տարբեր արհեստների մասին տեղեկություններ ու գիտելիքներ էր հաղորդում, սակայն մեծ մասամբ անդրադառնում էր արհեստների կատարելագործման, շահավետության, տեխնիկական մասնագիտացման խնդիրներին: Արհեստագործությանը վերաբերող գրականությունը, նախատեսված լինելով ժողովրդական զանգվածների համար, գրված էր հիմնականում գրական լեզվի պարզ տարբերակով, որը խառն էր ժողովրդախոսակցական լեզվի տարրերով: Արհեստագործական անվանումներ ցանուցիր պատահում են նաև քաղաքատնտեսությանը, աշխարհագրությանը, պատմությանը վերաբերող գրքերում և գեղարվեստական գրականության մեջ. այսպիսի նյութերում արհեստագործական անվանումները հաճախ հանդես են գալիս զուտ գրական տարբերակներով: Ամբողջ 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին հայ իրականության մեջ բառարանագրությունը գրավոր մշակույթի այն եզակի բնագավառն է, որտեղ ի մի բերված, կանոնակարգված, այս կամ այն չափով ամբողջացված դրսևորվում է ժամանակի արհեստագործական բառապաշարը:

1854 թ. տպագրվում է Գաբրիել Երեցփոխյանի ռուսերեն-հայերեն գրաբար բառարանը (երկրորդ լրացված տպագրությունը՝ 1876 թ.): Նրանում եղած արհեստագործական անվանումները քաղված են ժամանակի արևմտահայ գրաբար բառարաններից և մասամբ գրական արևմտահայերենով գրված նյութերից: Մեր կողմից քննվող նյութի տեսակետից բառարանը առանձնակի նշանակություն չի ներկայացնում, քանի որ բառատաղծը արևմտահայերենից է քաղված և շարադրված է գրաբարով: Կարևորն այն է, որ այս-

տեղ առաջին անգամ հայերեն արհեստագործական անվանակարգությունը զուգադրված է ռուսերենին:

XIX դ. 20-30-ական թվերին տպագրված մի քանի գրքերից մեկ անգամ ևս պարզ է դառնում, որ արևելահայ իրականության մեջ կար ինչ-որ չափով ընդունված արևելահայ ընդհանուր աշխարհաբար, որը գործածվում էր արևելահայ գրագետ խավերի մեջ որպես վերբարբառային հաղորդակցման միջոց: Այն օգտագործվում էր նաև որպես գրաբար ուսուցանելու դյուրինաց եղանակ: Հայաստանում այդ աշխարհաբարը Երևան - Էջմիածին տարածքի խոսվածքն էր, լայն առումով՝ Արարատյան բարբառը, որը անկանոն կերպով պարունակում էր պարզ գրաբարի տարրեր: Գրավոր դարձած և գրականացվող այս աշխարհաբարում գործածված արհեստագործական անվանումները մինչև 19-րդ դ. 50-ական թվերը գրեթե ժողովրդախոսակցական էին, որոնք լցված էին արևելյան լեզուներից վերցված փոխառյալ բառերով: Հատկանշական են այս առումով Հովսեփ Արցախեցու՝ 1830 թ. տպագրած գրաբար-աշխարհաբար բառարանի նյութերը, ինչպես՝ Ագբ. ագբ ջուլհակի: // Ականակապ. ճաւահիր հագցնօղ: // Աղտահմայ. Երեխայի ծընովն ֆալճութիւն: // Ապակագործութիւն. շիշէ շիւնելը: // Ասղանագործութիւն. ասղով նախշ բանիլը: // Բովագործութիւն. մատենձի. խալձի, դույումձի, դալ դնող: // Պայտառ. նալպանտ. նալպէնտ: // Սափրիչ. ածիլող. պէռպէռ. տէլլէք: // Փերեզակ. փորեզիկ. չէրչի. չարչի: // Մետաղահան. մատենձի, մատանչի: // Հիւսն. տիրկէր. խառատ. տօղրամաձի: // Արծնեմ. կոկել. ձիլայտալ. փէրտախտ անել: // Դրուագեմ. օյմայ անել. մուշապաղ հանել. խապլամայով ծածկել: // Օդահմա. քամով ֆալճութիւն անօղ ևն:

Արևելահայերենի արհեստագործական անվանումները, դրանց լեզվա-ոճական տարբերակվածությունը, կառուցվածքային տիպերը, զարգացման աստիճանականությունը և ուղիները լավագույնս ներկայացնում է Աբխտղոմ Հովհաննիսյանի «Բառգիրք ռուսերենից-հայերէն» (1889-1893 թթ.) երկհատոր աշխատությունը: Բառարանը պարունակում է մոտ 60 հազար բառահոդված: Ռուսերեն մասը

վերցված է Վ. Դալի քառահատոր բացատրական (Толковый словарь живого великорусского языка Владимира Даля) և Ն. Մակարովի ռուսերեն - ֆրանսերեն (Полный русско-французский словарь, сост. Н. П. Макаровым) բառարաններից: Որպես հիմք ընդունված բառարաններից և Ա. Հովհաննիսյանի բառարանի ռուսերեն բառապաշարի քննությունից պարզվում է, որ այն արտացոլում է 19-րդ դ. երկրորդ կեսի ռուսական մշակույթի բարձր մակարդակը: Բառարան կազմելու դժվարին աշխատանքը հեղինակը նախաձեռնել է՝ առաջնորդվելով ազգային գիտակցությամբ և խորապես ըմբռնելով ժամանակի լեզվական պահանջները. «Տեսնելով մեր նորածիլ աշխարհիկ գրականության և լրագրության ճիգերը լուսաւոր ազգաց մտքի արդիւնքներից՝ ռուս գրականութեան միջոցով հայ ժողովրդեան ևս բաժին հանելը, տեսնելով ռուս ինքնուրոյն և թարգմանական գրականութեան ընդարձակ ծաւալը և մեր ուսումնարանների թուի հետզհետէ աճելը, որոնց մէջ ռուս լեզուի ուսուցումը պարտաւորական է. նոյնպէս տեսնելով, որ աշխարհիկ լեզուով ոչ միայն ռուս-հայերէն մի բառարան չկայ մեր գրականութեան մէջ, այլև ոչ մի մասնագէտ լեզուաբան լրջութեամբ չէ աշխատում այդ պակասը լրացնել, մտածեցի մի յանդուգն գործի ծեռնարկել և ռուսերէն բառարան կազմել, որպէսզի կարելի լինի գոնէ թարգմանիչներին, յօդուած գրողներին և ուսուցիչներին դիւրութիւն տալ նրանց օգտաւէտ բայց դժուարին գործունեութեան մէջ» («Վերջաբան», էջ 1): Բառարանի հայերեն մասի բառապաշարը քաղված է «մեր գրականութեան մէջ յայտնի համարեա բոլոր բառարաններից» (ն. տ.), սակայն առավել օգտակար են եղել Ն. Բյուզանդացու ֆրանսերեն - հայերեն բառարանը (1884 թ.) և Գաբրիել Երեցփոխյանի ռուսերեն - հայերեն բառարանը (1855 թ., 1872 թ.), որը «թէպէտ երկար ժամանակ իւր մեծ օգուտը տուած էր, բայց նա էլ գրաբար էր և նորագոյն բազմակողմանի կեանքի պիտոյքներն ու մտքերը արտահայտող բառեր չուներ» (ն. տ.): 70-80-ական թվականներից դանդաղորեն աճում էր գրաբարի կաշկանդումներից աշխարհաբարը ազատելու առողջ գաղա-

փարը, և լեզվի մշակումը տակավին անկայուն բառապաշարային նորմի պայմաններում ուղղվում էր դեպի ժողովրդախոսակցական լեզուն, երբեմն նաև՝ բարբառները. «Որովհետև իմ գլխավոր նպատակներից մինն է եղել բառարանս նաև դիւրըմբռնելի անել, այդ պատճառով ի նկատի եմ առել. ա) մեր կենդանի բարբառների մեջ գործ դրուած այնպիսի բառեր, որոնք թէպէտ գրաբար բառարանների մեջ չեն գտնուել, բայց արդէն մուտք են գործել արդի աշխարհաբար գրականութեան մեջ, լրագրական թղթակցութեանց և ժողովրդական հրատարակութեանց մեջ» (ն. տ., էջ I-II): Գրական արևելահայերենի բառապաշարը իր կազմավորման գործընթացի մեջ էր. կենսունակ, հարուստ, համակարգված բառապաշարի ձևավորումը՝ ըստ դրա օգտագործման բազմազան և բազմաբնույթ բնագավառների, տակավին իրագործումից հեռու էր, և լեզվական ատաղձի նախապատվությունը տրվում էր կենդանի ժողովրդական լեզվի տարերքին. «Առհասարակ կենդանի բարբառների վրայ ես նայել եմ իբրև երկրորդ շտեմարանի վրայ, որտեղից պետք է լրացնել աշխարհիկ՝ դեռևս կազմակերպուող լեզուի պակասը. իսկ նորան իւր այժմեան անցողական դրութեան միջոցին կաշկանդել որոշեալ արհեստական ձևերով աննպատակ եմ համարել, քանի որ ժամանակը ինքը պետք է նպաստէ, որ որոշեալ ձևեր մրցումից վերջնական յաղթութիւն տանեն: Աշխարհիկ լեզուն ոստանիկ դառնալուց դեռ շատ հեռի է» (ն. տ., էջ II):

Բառարանում ընդգրկված են մոտ 600 ռուսերեն արհեստագործական անվանումներ, որոնց մեծագույն մասը հայերենում արտահայտվում է տերմինային ձևավորմամբ. մասամբ դրանք տրվում են բացատրություններով. վերջիններս հիմնականում այդ շրջանի օտար մշակույթներին հատուկ հասկացություններ են, ինչպես՝ Быкиносно հնացած կամ բանեցրած գորքեր վաճառող: // Гуртулыаук դրամի եզրերը քանդակող: // Замшеbuk այծեամի կաշի պատրաստող: // Золотопомышленель ոսկիաւազ մաքրող և այլն: Արևելահայ գործածական բառապաշարում անհրաժեշտ արհեստագործական անվանումներ չլինելու պատճառով

հեղինակը հաճախակի դիմել է ժամանակի արևմտահայ մշակույթի մեջ եղած նյութերին (գրաբար, արևմտահայերեն): Բառարանագիրը ընթերցողների հնարավոր պարսավանքին, թե բառարանը լցրել է ինքնահնար բառերով, պատասխանում է. «Ես հայերէն նոր բառ ամէնկին չեմ ստեղծած, այլ կարևորը որոնած և գտած եմ ի մասնաւորի արևմտեան գրականութեան մէջ»: Այս բառապաշարը արհեստականության զգացողություն էր հարուցում, սակայն չկայունացած բառապաշարային նորմի պայմաններում, երբ անհրաժեշտ անվանումներ չկային, արևելահայ գրական լեզուն բնականաբար դիմում էր արևմտահայ լեզվական մշակույթին, ինչպես՝ бляхарь թիթեղագործ: // воздыхатель օղագնաց, օղանաւորդ, օղաշրջիկ; // горокоп հանքագործ, բովագործ, հանքահան: // эмалировщик կիտուածագործ: // слесарь փականագործ: // монетщик դրամահատ, դրամակոփ: // мебельщик կահագործ: // крахмальщик օսլայող, նիշաստող: // крендельщик բոկեղ շինող: // кукольщик խամաճուկ շինող: // фотограф լուսանկար, լուսանկարիչ: // галванопластика գալվանածուկութիւն: // амальгамация սնդկագօղելը և այլն: Հայտնի է, որ պարզ գրաբարի բառապաշարից հետո արևելահայ գրական լեզվի բառապաշարի կազմավորման երկրորդ աղբյուրը XIX դ. 50-60-ական թվերից ի վեր եղել է արևմտահայ լեզվամշակույթի մեջ ստեղծված բառապաշարը: Սակայն արևելահայերենի բառային նորմայի կայունացմանը զուգընթաց՝ արևմտահայ բառապաշարի յուրացումը կատարվում է որոշակի ընտրությամբ: Վերոհիշյալ բնույթի արհեստագործական անվանումների մեծ մասը ուղղակի կամ փոփոխություններով յուրացվեց արևելահայերենի կողմից:

Բառարանում կան մոտ երկու տասնյակ արհեստագործական անվանումներ, որոնք փոխառություն են ռուսերենից: Այդ փոխառությունների մեծ մասը գործածվում էր ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում. դրանք անմիջական գրական ձանապարհով կատարված փոխառություններ չէին, ինչպես՝ балалайщик բալալայկա շինող: // бузрук բոզայ շինող: // калачик կալաչ շինող: // ква-

соварь կվաս պատրաստող: // амальгамация ամալգամելը: // фотография ֆոտոգրաֆիա: // макаронник մակարոն պատրաստող: // лакировщик լաք քսող և այլն: Այսպիսի անվանումները հետագայում շատացան, և այդ միջոցը դարձավ արևելահայ արհեստագործական անվանումների համալրման կարևոր ուղիներից մեկը:

Արևելահայ գրական լեզվի բառապաշարի ընդգրկման ընդարձակումը, զարգացումը ընթանում էին կենդանի և գործածական բառապաշարի կազմավորման և համակարգման սկզբունքով: 1870-80-ական թվերին գործածական արևելահայերեն բառապաշարի հիմնական կազմը իր իմաստաբանությամբ, ձևակազմությամբ ակնհայտորեն տարբերվում էր XVIII - XIX դդ. պարզ գրաբարի բառապաշարից. այն այդ բառապաշարից որոշակի ընտրանք էր ներկայացնում, դուրընկալ և կենսունակ էր. արտամղվում էին գրաբարի խրթին, դժվարընկալ բառերը և որոշ բառակազմական կաղապարներ: Քննվող բառարանի մեջ այսպիսի ձևերը սակավ են և մեծ մասամբ զուգորդված են ժողովրդախոսակցական ձևերով, սակայն եթե գրաբարյան ձևերը արհեստական էին, ապա զուգորդվող ժողովրդախոսակցական ձևերն էլ չունեին գիտական լեզվաոճի ակնհայտ մշակվածություն, ինչպես՝ ахшумак ոսկեփոխ, ալքիմիկոս: // арматор նաւայարդար, նաւը սարքող: // боросальщик ասուեգործ, խաւ շինող մարդ: // галунщик տրեղագործ, ոսկեթել ժապաւեն շինող: // картощик թղթամածոյց, խաւաքարտ կամ ստուարաթուղթ պատրաստող: // бахромщик փնջագործ, ծոպարար: // месемщик երիզագործ, շերիտ գործող: // шорник ասպազինագործ, թամբ շինող: // блокер ճախարակագործ, խառատ: // фанарщик լապտերաշէն և այլն: Սակայն արևելահայ դեռևս աղքատիկ գրավոր մշակույթը, գրական լեզվի օգտագործման տակավին նեղ շրջանակը, գրական լեզվի խոսակցական ոչ մեծ հենքը կազմավորվող լեզվին թույլ չէին տալիս կանոնավոր օգտագործելու գրաբարի բառակազմական անհրաժեշտ կաղապարները: Գրաբարին հատուկ արհեստագործական կաղապարները, որոնք մեծ արդյունավետությամբ գոր-

ծաղրվեցին դարավերջի գրական լեզվում, այս ժամանակահատվածում տակավին փոքր գործածություն ունեն և հիմնականում փոխառություն են արևմտահայ լեզվամշակույթից, ինչպես՝ *бронзовщик* արոյրագործ: // *шпорник* խթանագործ, խթան շինող: // *колесник* անուագործ, անիւներ շինող: // *фабрикант вьючных дел* համետագործ, կուրդնկար: // *орнаментальщик* դրուագագործ: // *басонщик* ժապաւենագործ: // *ведерщик* դուլագործ և այլն: Այս շրջանում արհեստագործական անվանումների կառուցման հիմնական ձևը վերլուծական է, ինչպես՝ *колодочник* կաղապար շինող: // *колокольщик* զանգ շինող: // *корытник* տաշտ շինող: // *калбасник* երշիկ պատրաստող: // *кле́щик* սոսինձ շինող: // *ковёрник* գորգ գործող: // *кошелочник* քսակ շինող: // *бритовщик* ածելի պատրաստող: // *во́лочник* թաղիք շինող: // *гвоздочник* մեխ շինող: // *зеркальщик* հայելի շինող: // *известник* կիր շինող: // *паторонщик* փամփուշտ շինող: // *обо́щик* պաստառներ շինող: // *браслечник* ապարանջան շինող: // *булавочник* գնդասեղ շինող և այլն: Սակավ են նաև **-վաճառ** վերջնաբաղադրիչով բարդությունները, ինչպես՝ *известник* կրավաճառ: // *басонщик* ժապավենավաճառ: // *дегтярник* կպրավաճառ: // *бумагопородовец* թղթավաճառ: // *формовщик* կաղապարավաճառ և այլն: Բայարմատից կազմվող արհեստանունները գործում են այս ժամանակահատվածում գրեթե միայն փոխանուն անորոշ դերբայի ձևով (թղթի պատրաստելը, ոսկեզօծելը): Սակավ են արհեստավոր նշանակող բարդությունները (դրամահատ, պղնձագիր և այլն): Որպես արհեստական էր ընկալվում նաև գրական լեզվի սովորական գրաբարյան բառապաշարը, որովհետև խոսակցական ընդարձակ հենք չունենալով (այդ հենքը սահմանափակված էր մի քանի տասնյակ հազար գրական լեզվով խոսողներով)՝ ակնառու հակասություն էր զգացվում հոգեւից ժողովրդախոսակցական լեզվի կամ բարբառի և գրական լեզվի միջև: Սակայն գրական լեզվի ազգայնացման գործընթացի ուղղությունը նախորոշված էր, և ժողովրդախոսակցական ու բարբառային բառապաշարային տարեր-

քը միջոց էր ազգային լեզուն գերծ պահելու օտար լեզվամտածողությունից, անհարկի ժողովրդախոսակցական և հատկապես բարբառային տարրից՝ նրանից վերցնելով անհրաժեշտ նյութեր: Այս բառարանում արհեստագործական անվանումների մոտ 1/3-ը ներկայանում է հոմանշային շարքով. հոմանշային շարքի անդամների դասավորությունն անգամ ճշգրիտ ցույց է տալիս արևելահայերենի բառապաշարի կազմավորման գործընթացը, ինչպես՝ ախփօ-ващук ողորկող, յղկող, թրաշող (քարի): // гранилащук ակնագործ, գոհար տաշող: // феи́рверк հրարուեստիկ, հրարուեստավոր, ֆշշանք շինող: // на́нка մածուցում, զօդում, լեհեմելը: // оваци́ник խաղախորդ, դաբաղ: // алмаз-щук ակնագործ, ավմաստ թրաշող: // волочулащук թել քաշող, մաֆթուկ շինող: // каменьщук որմնադիր, քարտաշ, կալատող: // оловя́нник անագող, կլայեկող, կլեկչի, դալայչի: // мыловарь օճառագործ, սապոն շինող, սապոնչի: // ко-же́вничество կաշեգործություն, խաղախորդություն, դապաղություն: // веде́рник դուլագործ, քուղայ շինող, վեդրօ շինող: // водопроводе́ц ջրաբեր, ջրատար, քանքանչի, լաղում տուող և այլն: Հոմանշային որոշ շարքեր ունեն տձ. (տաճկական՝ թուրքերեն) նշմամբ բառեր, ինչպես՝ բաղնեպան, տձ. համամձի: // бру́счатщук ակնագործ, գոհարագործ, տձ. ջավահիրչի: // жестя́нник թիթեղնագործ, տձ. թանաքչի: // слесарь փականագործ, տձ. չիլինկէր և այլն: Վերջին խմբի բառերի մասին հեղինակը նշել է. «Մի քանի բառեր, որոնք բացարձակ օտար ծագում ունին, բայց հայերեն վերջավորություն ընդունելով արդեն ընդհանրացել են ժողովրդի բերանում, ընդունել են իբրև հայերեն բառեր (դասապություն, քիրաճել, վաքսել և այլն)» («Վերջաբան», էջ II, 1903 թ.): Մինչև 1870-80-ական թվականները բառապաշարային այս շերտերը միմյանցից ընդհանուր կերպով են բաժանված. երբեմն տարբեր շերտերի պատկանող արհեստագործական անվանումները գործածվում էին իրենց անհարկի լեզվաոճական շրջապատում: Համանշային-հոմանշային խմբի անդամների որոշակի հաջորդականությունը առարկայապես արտացոլում է արևելահայ բառապա-

շարի զարգացման գլխավոր ուղին և այն երկրորդական շավիղները, որոնց ընծեռած նյութի յուրացմամբ հետագայում ստեղծվելու էր կյանքի հարաճուն լեզվական պահանջները բավարարող կենդանի, զորեղ արտահայտչականություն ունեցող լեզու:

Արևելահայ գրական լեզուն XIX դ. 90-ական թվականներից թևակոխում է ծավալման և զարգացման նոր աստիճան. արևելահայերենը, իր կենտրոնաձիգ հունով ընթանալով, էլ ավելի էր ժողովրդայնանում, տոգորվում ազգային լեզվամտածողությամբ: Գրական լեզվի՝ ազգային լեզվամտածողությամբ մշակման գործընթացը բարդ երևույթ էր. դրսևորվում էին երկու իրարամերժ միտումներ. ա) դուրս էին մղվում ժողովրդական լեզվի որոշ անհրաժեշտ տարրեր. բ) ակնհայտ հակում էր նկատվում օտար լեզվամտածողության ձևերի նկատմամբ: Բնորոշ է այդ խնդիրների մասին Ա. Ագապյանի դիտարկումը. «Լեզուն վտանգված չենք համարում մենք, եթե գրողն առ ի չգոյե օտար բառեր է մտցնում մայրենի լեզուն (նկատի ունի հատկապես արևելյան լեզուների տարրերը - Լ. Ա.). այլ այն ժամանակ ենք վտանգված համարում, երբ նա հավատարիմ չի մնում յուր մայրենի լեզվի ոգուն, երբ նա խախտում է ժողովրդական լեզվի կազմը: Լեզվի վիզը չի՞ կտրում, արդյոք, հետևյալ նախադասության գործածությունը. «Նրա ամբողջ հարըստությունը կայանում էր մի եզան, գոմշի և այծի մեջ» (Նոր-Ղար, 1887, էջ 192):

Արևելահայ գրական լեզվի բառապաշարի տեղաշարժերը և հաստատման ուղիները, նաև նրա անկատարությունները լավագույնս արտացոլված ենք գտնում Հ. Ղադբաշյանի «Լիակատար բառարան ռուսերենից - հայերեն» (1903-1906 թթ.) բառարանագրական հուշարձանում: Բառարանում արհեստագործական բառապաշարը ներկայացված է ամենաընդարձակ ձևով. նախորդող ոչ մի բառարան արհեստագործական այսպիսի ճոխ բառապաշար չի պարունակել: Նրանում ներառված են նաև հարյուրավոր նորաբանություններ և նախատերմինային ձևերով արհեստագործական հասկացություններ (բացատրություններ):

Դադբաշյանի բառարանը պարունակում է մոտ 10 անգամ ավելի շատ փոխառություններ Ա. Հովհաննիսյանի բառարանի համեմատությամբ: Ժամանակի լեզվական իրականության տեսակետից բառապաշարի հարստացման ու բազմակողմանիացման նպատակով կատարված փոխառությունների մեծ մասը արդարացված էր և հիմնականում ամրացավ XX դ. արևելահայ գրական լեզվում, և արդի արևելահայ գրական լեզվի բառակազմի (բառաֆոնդի) անփոխարինելի մասն է դարձել: Փոխառությունների վերաբերյալ Դադբաշյանը այս բառարանի «Նախաբան»-ում հետևյալ դատողությունն է անում. «Արդ՝ մեր գործի ընթացքում մենք աշխատել ենք հայացնել այն բոլորն, ինչ որ հնարաւոր էր հայացնել: Բայց պատահեցան բառեր, որոնց հայացման խնդիրն աւելի լաւ համարեցինք ապագային թողնել, քան թե բառեր թխել: Յաճախ դիմել ենք ժողովրդական լեզուին և գաւառաբարբառներին, որովհետև կան ռուսերեն բառեր, որոնց համապատասխան հայերեն գրական խօսք չկայ, բայց ժողովրդական և գաւառական բառերից չենք խորշել» (էջ V):

Բառապաշարի հարստացման ուղիների խնդրին Դադբաշյանը հանգամանալից և հիմնավոր փաստարկումներով անդրադառնում է իր հայերեն - ռուսերեն լիակատար բառարանի «Նախաբան»-ում, որտեղ գրում է. «Բացի գավառաբարբառներից աշխարհիկ լեզուին անընդհատ բառեր և ոճեր են մատակարարում նաև օտար լեզուները: Մեր նորագոյն գրականութիւնն և մամուլն արդէն վաղուց անխզելի կապեր են հաստատել քաղաքակիրթ ազգերի հետ և հետաքրքրուելով նրանց կեանքով, նրանցից փոխ են առնում նորանոր գաղափարներ և հասկացութիւններ: Այս բոլորն արտահայտելու համար կամայ-ակամայ փոխ են առնում նոյն ազգերից նաև նորանոր բառեր և ոճեր: Ուստի և այն բոլոր օտար բառերն և ոճերը, որոնք աշխարհիկ լեզուի մէջ քաղաքացիութեան իրաւունք են ստացել, մտել են իմ այս բառարանի մէջ: Օտար բառերից խորշողները թող գիտնան, որ մեր աշխարհիկ լեզուն այս նկատմամբ ևս ընթանում է այն շաւիղով, որով ընթացել է գրաբառը:...

ամէն մի լուրջ յօդուածագիր ևս գիտէ, որ ոչ միայն օտար, այլև ժողովրդական և ռամկական բառերի պատշաճավոր կիրառութիւնը անխուսափելի մի անհրաժեշտութիւն է» (էջ VI-VII): Փոխառութիւնների խնդիրը այստեղ լուծված է՝ ելնելով ազգային լեզվի մշակութաբանական պահանջներից. փոխառությունները դիտվում են որպես լեզվական համակարգի բաղադրիչ: Արհեստագործական փոխառյալ անվանումները բառարանում տերմինաբանական ձևավորման որոշակի գործընթաց են ապրել:

Այս գործընթացը ավելի ակնառու դարձնելու նպատակով բերենք զուգադրական օրինակներ Դադբաշյանի և դրանից տասնհինգ տարի առաջ լույս տեսած Ա. Հովհաննիսյանի (Հովհաննիսեան 1888, հ. Ա, 1893, հ. Բ) բառարաններից (աջում՝ զծիկից հետո, տրվում են Դադբաշյանի բառարանից քաղվածները).

Сугарончук սիգարա ծախող - սիգարագործ կամ սիգարավաճառ:

Лаковщик լաք պատրաստող - լաքայագործ, լաք, վեռնօձ պատրաստող:

Ламповщик լապտեր շինող, լամպայ շինող - լամպագործ, -վաճառ:

Макаронщик մակարոն շինող-մակարոնագործ, - վաճառ:

Лакирование ջնարակելը, լաք կամ ապակենիւթ քսելը - վերնիճելը, լաքայելը:

Դադբաշյանի բառարանում կան արհեստագործական նոր փոխառյալ բազմաթիվ անվանումներ, որոնք չունի Ա. Հովհաննիսյանի բառարանը, իսկ երբեմն ունի միայն առաջին՝ հիմնային արմատը. Булочник բուլկիագործ: // Корсажница կորսագործ կին: // Браговарь 2. բռաջա եփող: // Калачик կալաչագործ: // Букинист բուկինիստ: // Вафельщик վաֆէլագործ, վաֆէլավաճառ: // Ведорна վեդորագործութիւն: // Гранит գրանիտ, հատաքար - գրանիտագործ, հատաքարտաշ: // Бухфортчук բուֆետի ծառայող:

Տերմինային ձևավորման տեսակետից ակնառու է ենթատերմինային՝ վերլուծական, ժողովրդախոսակցական կա-

ռուցվածքների անցումը համադրական ձևերին, այսինքն՝ գործողության առարկա + գործող անձ (ենթակայական դերբայով արտահայտված) ենթատերմինային ձևը փոխվում է տվյալ իմաստային խումբը արտահայտող գերիշխող համադրական կառուցվածքի (մակարոն շինող - մակարոնագործ): Այսպիսով, ինչպես գիտական նշանակություն արտահայտող հայերեն բառերի, այնպես էլ փոխառությունների դեպքում ակնհայտ է գիտական լեզվին պատշաճ արտահայտման առաջընթացը:

Որպես արհեստագործական մի շարք հասկացությունների թարգմանություն Ա. Հովհաննիսյանի բառարանը առաջարկում է հիմնականում ենթակայական դերբայով կազմված անվանումներ, իսկ Դադբաշյանի բառարանում տրված են փոխառյալ ձևեր.

Крахмалышук օսլայող, նիշաստող - 1. կրախմալ հանող. 2. կրախմալող:

Крендельшук բոկեղ շինող - կրենդելագործ, - վաճառ:

Матрачник ներքնակ շինող, անկողնագործ - մատրաքագործ:

Калбасчик երշիկ պատրաստող, երշիկ ծախող - կալբասագործ, կալբասավաճառ:

Парикмахер սափրիչ, ծամաշեն - պարիկմախեր, վարսավիր:

Паркетчик յատակ շինող - պարկետագործ:

Ակնհայտ է, որ Դադբաշյանի բառարանում փոխառման չափերը ավելի մեծ են: Դրա հիմնական պատճառն այն էր, որ 1890-ական թվականներից ավելի մեծ թափ են առնում լեզվի ժողովրդայնացման գաղափարները, և լեզվամշակումը ընթանում է այդ գաղափարների ներքո. արևելահայերենը ձգտում է էլ ավելի մեծ չափերով ազատագրվել արհեստականությունից, այդ թվում նաև՝ գրաբարյան խրթին, ոչ ճշգրիտ բառերից: Ղ. Աղայանը վճռականորեն դեմ է կանգնում վենետիկյան ականավոր Մխիթարյան Բարսեղ Սարգսյանի՝ գրաբարը լայն չափերով գործադրելու հրավերին («Տարագ», 1890, N 1, էջ 82):

Տվյալ դեպքում արհեստագործական անվանումներ

կազմելու գրաբարյան բառային ատաղձը մասամբ չուներ գիտական նշանակության ճշգրտություն կամ գիտական նշանակության արտահայտման մշակվածություն:

Այսպես, գրաբարյան **բոկեղ** հազվադեպ կիրառված բառը տարտամ նշանակությամբ է արձանագրված գրաբարի բառարաններում, իսկ XVIII - XIX դդ. այն ամրագրված չէր որպես *крендел*-ի համարժեք, ուստի Ղաղբաշյանի բառարանում առկա է փոխառյալը՝ **կրենդել**, հետևաբար արհեստագործական անվանումը կազմված է այս արմատից՝ **կրենդելագործ**: Ա. Հովհաննիսյանի բառարանում *наркочук* բառի դիմաց դրված **յատակ շինող** ձևը ռուսերենին համարժեք չէր. տեսակը անվանվում էր սեռով, հետևաբար ճշգրիտ, կենսունակ նշանակման գործություն չուներ:

Փոխատու լեզվի ընտրությունը հարկադրական էր. արևելահայ գրական լեզուն մրցակցային դաշտի մեջ էր ռուսական կայսրության պետական և պաշտոնական լեզվի՝ ռուսերենի հետ: Ղաղբաշյանը, գրելով, որ ռուս - հայերեն բառարանագրության դժվարության բուն պատճառը արևելահայերենի «պարզ ու անզարգացած» դրությունն է, ռուսաց լեզվի մասին իրավացիորեն հետևյալն է ասում. «Արդ՝ ռուս ազգը աշխարհիս ամենամեծ և քաղաքակիրթ ազգերից մեկն է: Նորա կյանքը բարդ և բազմակողմանի է և այդ բարդությունն ու բազմակողմանիությունն արտահայտուել են և արտահայտուում են նորա լեզուով, որովհետև նորա լեզուն գործ է ածուում և ժողովրդի մեջ, և պետական բոլոր հիմնարկներում, և գիտութեան ու արուեստի բոլոր ճիւղերում: Լեզուի այս բազմադիմի գործածութիւնը նպաստել է նորա զարգացմանն և կանոնաւորութեանը» («Նախաբան», էջ IV):

Արևելահայ գրական լեզվով Ռուսաստանում հաղորդակցվողների գրագետ, կրթված զանգվածը տիրապետում էր ռուսերենին, և ոչ ճշգրիտ, անհստակ, ոչ դյուրիմաց բառատաղձով հաղորդակցումը նվազեցնում էր արևելահայերենի մրցունակությունը:

Հանրական - քաղաքական վերոհիշյալ պատճառներով պայմանավորված՝ արևելահայերենի բառապաշարի

ձևավորման այս յուրահատկությունը իր դրսևորումն է գտել վերոհիշյալ՝ հավելյալ փոխառությամբ ներկայացված օրինակներում: Այսպիսի փոխառություններով հայերենը չէր «ճոխանում», այլ, ժամանակի հարկադրանքով պայմանավորված, անհրաժեշտ միջոցներ էր հայթայթում ու ամբարում:

Արիեստագործական անվանումների փոխառման բուն աղբյուրը ևս ռուսերենն է. այլ բան է, որ ռուսերենը դրանց մի մասը (մոտ 20-25 %-ը) փոխառել էր այլ լեզուներից և որոշակի յուրացմամբ նորմավորել: Փոխառյալ արիեստագործական անվանումների զգալի մասը նշված բառարանի մեջ մուտք է գործել ոչ գրական ճանապարհով. դրանք կամ դրանց բառային ատաղձը գործածվում էր ժողովրդախոսակցական լեզվում, հատկապես՝ Թիֆլիսի, Երևանի հայության լեզվում, ուստի դրանք դյուրությամբ յուրացվում էին գրական լեզվում և ամրագրվում բառարաններում:

Որոշ հետաքրքրություն է ներկայացնում փոխառյալ արիեստագործական անվանումների տառադարձության և ուղղագրության խնդիրը: XIX դ. 60-70-ական թվականներից արևելահայ գրական լեզվի համար փոխառությունների գրեթե միակ աղբյուր է դառնում ռուսերենը, ուստի տառադարձումը կատարվում է ռուսերենի հիմքի վրա և արևելահայ գրական լեզվի արտասանական նորմային համապատասխան. Таиш տանին: // колбас կալբաս: // Мамрац մատրաց: // Антрацит անտրացիտ: // Гранит գրանիտ: // Бетон բետոն: // Бландаж բլինդաժ: // Бас բաս: // Цемент ցեմենտ: // Динамит դինամիտ և այլն: Տառադարձումը ուղղորդվում է ըստ գրության՝ погучук պօրուչիկ, ոչ՝ պարուչիկ: Ա. Հովհաննիսյանի բառարանում դեռևս պատահում են արևմտահայ արտասանությամբ տառադարձված ձևեր՝ ալբօօլ, դլփին, ոքսիտ, ովասիս, կէմենտ (= ցեմենտ), տորփ, քօբալտ, միտալ և այլն: Սակայն այս սակավաթիվ ձևերը արտամղվում են արևելահայ գրական լեզվից XIX դ. վերջերին: Դադբաշյանի բառարանում դրանք արդեն արևելահայերենի ձևավորում ունեն՝ ալկաիոլ, դելֆին, տորֆ, կոբալտ, մետաղ և այլն: Հունալատին ծագման բառերում **h** հնչույթը, որը ռուսերենը արտահայտում էր

չ-ով, վերականգնվում է. օր՝. Гегмограмм հեկտոգրամ, Гетера հէտէրա, Гипотенуза հիպոտենուզա, Гидравлика հիդրավիկա, Гарпун հարպուն, Гамак (ֆր.) համակ, Гарусник հարուսավաճառ և այլն: Կրկնակ բաղաձայնները սովորաբար տառադարձվում են մեկ բաղաձայնով՝ ժողովրդախոսակցական կամ գրական արտասանությանը համապատասխան. օր՝. Гамма գամա, Аккорд ակորդ, Аккумулятор ակումյատոր, Балласт բալաստ, Балласт ралիստ, Атолл атоол, Дилемма դիլէմա, Профессор պրոֆեսոր, Анаграмма անագրամա և այլն: Սակայն սակավ չեն դեպքերը, երբ կրկնակ բաղաձայնները հայերենում պահպանվում են: Թերևս սրա պատճառը բառի սակավ գործածությունը կամ հասարակական նեղ խավի գործածության կամ իմացության ոլորտին պատկանելն էր. Доллар դոլլար, Горилла գորիլլ, Коллодус կոլլոդիոն, Барокко բարոկկո, Абриетто լիբրետտո և այլն:

Մեծ մասամբ տվում է բառավերջի ա ձայնավորը և գիրը. օր՝. Пломба պլոմբ, Сугара սիգար, Помада պոմադ, Калода կալոդ, Клиника կլինիկ, Денеша դէպէշ, Баррикада բարիկադ, Терасса տէրաս: Սակավ չեն, սակայն, ա-ի պահպանման դեպքերը. Лампа լամպայ, Бригада բրիգադա, Аксуома ակսիոմա, Донна դոննա և այլն: Առկա են և զուգաձևեր՝ ամալգամ - ամալ գամա, բրոշկա - բրոշ և այլն:

Շատ հետաքրքիր են փոխառությունների ուղղագրական երևույթները. գրաբարի ավանդական ուղղագրությունը շատ դեպքերում չէր համապատասխանում աշխարհաբար բառերի գրությանը: Այդ անհամապատասխանությանը բացահայտ կերպարանք տվեցին աստիճանաբար հորդող փոխառությունները: Դրանց տառադարձման, գրաբարի ավանդական ուղղագրության և գրաբարի՝ XIX դ. ձևավորված արտասանության փոխհակասող սկզբունքները խայտաբղետ կերպարանք էին տվել նոր գրական հայերենի ուղղագրությանը հատկապես արևելահայ տարբերակում, քանի որ արևմտահայերենում փոխառությունները մեծ քանակ չէին կազմում: Գրաբարի ավանդական ուղղագրությունը, հիմնականում պահպանվելով, տարբերային փոփո-

խությունների էր ենթարկվում XIX դ. նոր գրական հայերենում: Այդ փոփոխությունների մի մասը 1890-ական թթ. սրկած որոշ կանոնավորություն է ստանում:

Այսպես, բառավերջի **ա** և **ո (օ)** ձայնավորներից հետո չինչող **յ** - ն այլևս չի գրվում. օր.՝ Ведро վեդրօ, Балала́нка բալալայկա, Бузник բոզա շինոդ, Гармоника հարմոնիկա, Галванопластика գալվանօպլաստիկա, Реа рէա, Мо́да մօդա, Бру́чка բրիչկա, Семина́рия սեմինարիա, Алге́бра ալգեբրա և այլն: Ռուսերենի **С**, **ы** (= է) հնչույթները և՛ բառասկզբի, և՛ բառամիջի դիրքերում գերազանցապես գրվում էին **օ** և **է**. օր.՝ Дро́гу դրօգ, Оркестр օրկէստր, Бемол բեմօլ, Рулетка ռուլէտ, Ромбо́эдр ռօմբօէդր, Селе́ний սէլէն, Кондукто́р կօնդուկտոր, До́мино դօմինօ, Эма́ль էմայլ, Техника տէխնիկա, Секанс սէկանս, Оде́колон օդէկօլօն, Ано́д անօդ, Дубле́т դուբլէտ: Դադբաշյանը ռուսերենի իր նուրբ իմացությամբ փորձում է հետևյալ տարբերակումը մտցնել. ռուսերեն **С** և **ы** բաց հնչումները ձգտում է արտահայտել հայերեն՝ **օ** և **է**, իսկ փակ հնչումները՝ **ո** և **ե** տառերով. Лукер լիքէօր, Крендель կրենդէլ, Крен կրէպ, Крем կրէմ, Де́бет դեբէտ, Маклер մակլեր, Ломба́рд լոմբարդ, Вермишел վերմիշէլ, Бандеро́ль բանդերօլ և այլն: Որպես **է** - ի և **օ** - ի հաճախական, տարերային կիրառմանը հակադրում՝ 1900-ական թվականներից նկատվում է հակառակ երևույթը:

Դադբաշյանի տարբերակումը խիստ մասնագիտական էր և կանոնական չի դառնում: Հին (ւ) գիրը փոխառություններում հաճախ գրվում է վ. օր.՝ Рево́львер ռէվօլ'վէր, Бива́к բիվակ, Булва́р բուլվար, Бакалавр բակալավր, Новгоро́д Նօվգօրօդ, Водевил վօդէվիլ, Галван գալվան, Квасова́рь կվասագործ, Трамва́й տրամվայ և այլն: Ամենաարտառոցը, սակայն, է + յ տառակապակցության օգտագործումն էր. օր.՝ Те́тум թէյիտ, Макшне́йдер մակշնէյդէր, Гне́йс գնէյս, Дре́зня դրէյզին և այլն: Դադբաշյանը փշիկով (,) ձգտում է արտահայտել ռուսերենի քմային տառը. Деко́лье դէկօլ'տէ, Ама́льгама ամալ'գամ, Дельта դել'տա, Рево́льверь ռէվօլ'վէր և այլն: Բազմաթիվ են նույն օ-

տար բառերի ուղղագրական տարբերակները՝ սարաֆան - սառաֆան, անտրացիտ - անթրացիտ, բազալտ - բասալտ, րոյալ - րոյեալ, կորնէտ - կօռնէտ, կօլենկօր - կոլենկօր, կօլօդիօն - կոլոդիօն, կոնցերտ - կոնցերդ և այլն:

Հայ-ռուսերեն բառարանի նախաբանում Ղաղբաշյանը անդրադառնում է նաև ընդհանրապես հայերենի ուղղագրության խնդրին: Արևելահայ ուղղագրության նախաաբեղանական դրությունը ոչ ոք այնպիսի հմտությամբ չի բնորոշել, ինչպես այս բառարանագիրը: Ղաղբաշյանը դեմ է ուղղագրության մեջ կտրուկ փոփոխություններին: Օրինակ է բերում ռուսական մշակույթը. «Հարկ էր լեզուի ուղղագրութիւնը բարեփոխողներին օրինակ առնել երևելի Գրօտից: Այս հռչակաւոր գիտնականն ևս տուեց ռուս լեզուի ուղղագրութիւնը, բայց որպիսի զգուշութեամբ, որքան նա խուսափել է նորամուծութիւններից, նորամուծութիւնից և ցուցամուծութիւնից» (էջ X): Լեզվական նյութի զննությունից այն եզրակացության ենք հանգում, որ Ղաղբաշյանը ավանդական գրաբարյան ուղղագրությունը անփոփոխելի չի համարում, ինքը ևս որոշ անհրաժեշտ փոփոխություններ է գործադրում: Նա հույս է հայտնում. «Գուցէ ապագայում գտնուի մի քաջահմուտ գիտուն, որ մեր լեզուի ուղղագրութեան բարդ հարցը մշակելով, տայ մի ուղղագրութիւն, որ ընդունուի հանուր հայութիւնից» (էջ X):

Մենք նշված ժամանակաշրջանի ուղղագրության վիճակը ուրվագծեցինք այն նկատառումով, որ այն սերտորեն առնչվում է արհեստագործական անվանումների գրությանը և հետագա քննության մեջ պարզաբանող դեր կարող է խաղալ օրինակների յուրահատուկ գրության ընկալման դեպքում:

Կարևոր է արևելահայ արհեստագործական բառապաշարի գոյացման, ծավալի, յուրահատուկ զարգացման բացահայտման տեսակետից Ղաղբաշյանի բառարանի ընձեռած վիթխարի նյութի հիման վրա արևելահայ արհեստագործական անվանախմբի քննությունը արևմտահայ համապատասխան նյութի համեմատությամբ: Այն կարող է մեկնակետ լինել բառապաշարային ընդհանրությունների և

տարբերությունների դիտարկման ու ցուցադրման առումով:

Արտաքուստ զարմանալի երևույթ է այն, որ Ղաղբաշյանի բառարանում արևմտահայերենի բառապաշարը այնպիսի լայն գործածություն չունի, ինչպիսին գտնում ենք Ա.Հովհաննիսյանի բառարանում:

Ա. Հովհաննիսյանի բառարանում եղած արևմտահայերենի բազմաթիվ արհեստագործական անվանումներ Ղաղբաշյանի բառարանից դուրս են թողնված, կամ այդպիսի բառերից ընտրություն է կատարված տվյալ արհեստագործական հասկացության անվանման ամփոփված հոմանշային շարքերը ներկայացնելիս: Օրինակ՝ Горокон հանքագործ, բովագործ, հանքահան - լեռնագործ, հանքագործ, հանքահան: // Аеронавт օդագնաց, օդաչու, օդանաւորդ - օդանաւորդ, օդագնաց, օդապարիկ դեկավարող: // Мане-моделятель դրամահատ, դրամակոփ - դրամագործ, դրամահատ: // Водолаз ջրասույգ, սուզակ, սուզորդ - ջրասույգ, լուղորդ: // Горное дело բովագործութիւն, հանքագործութիւն - լեռնագործութիւն, հանքագործութիւն: // Столярք կահագործ, ատաղձագործ - ատաղձագործ, սեղանագործ: // Бакалейщик նպարավաճառ, մրգածախ, համեմավաճառ - նպարավաճառ: // Алмазщик ակնագործ - աղամանդահատ, ալմաստագործ, ակնագործ և այլն:

Արևմտահայ արհեստագործական բառերի մի մասն էլ փոխարինված է արևելահայերենում առկա դյուրինաց ձևերով. օր.՝ Бондажист աղէկապ շինող - փաթաթան շինող, պատրաստող: // Батырщик մրազարկ - շարած գիրը թանաքող: // Басонщик ժապաւէնագործ - պուզմէնտագործ: // Шорник ասպազինագործ - ծիու լծասարքի վարպետ: // Банщик բաղնէպան - բաղնիքապան, բաղնիք պահող: // Брошюрировка թղթակազմութիւն - գրքի շուլալելը, կազմելը: // Вереvoчник պարանագործ, մագման - թոկագործ, պարանագործ և այլն: Արևմտահայերենի մի շարք բառեր ուղղակի փոխարինված են փոխառություններով. Картонщик թղթամածոյց, խաւաքարտ, ստուարաթուղթ պատրաստող - կարտոնագործ: // Кондупер շաքարեղեն վաճառող, շաքարագործ - կոնդիտեր, քաղցրագործ: // Баш-

мачник մաշկարար - բաշմակներ, հողաթափեր կարող: // Блондочник ասղնէգործ - բլօնդագործուհի: // Ведерник դուլագործ- վեդրոյագործ: // Жестяник թիթեղնագործ - ժեշտագործ, ժեշտից իրեր շինող արհեստաւոր: // Гальванопластика գալվանածուլութիւն և այլն:

Արևմտահայ տարբերակից բառային ներթափանցումների խնդիրը մանավանդ այն գործընթացում, որը տեղի է ունենում XIX դ. 90-ական թվականներից և շարունակվում է մինչև XX դ. 20-ական թվականները, տակավին չի ուսումնասիրված: Մինչդեռ դա արդի հայերենի տերմինագիտության տեսակետից չափազանց կարևոր է. այդ ուղղությամբ ձեռք բերված արդյունքները ուղենշող դեր կարող են խաղալ արդի տերմինաբանության սկզբունքների մշակման առումով: Հիշյալ գործընթացի վերլուծության և արդի արևելահայերենի լեզվական օրինաչափությունների բացահայտման տեսակետից եզակի գործ է Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» (Թիֆլիս, 1914 թ.) աշխատությունը: Սահմանազատելով արևելահայ գրական լեզվի զարգացման երկու ուղղությունները՝ նազարյանական և աբովյանական, նա մատնանշում է, որ արևելահայ գրական լեզվի զարգացման կենտրոնաձիգ բունը պատկանում է նազարյանական ուղղությանը. ստեղծված ազգային լեզուն գլխավորապես այդ ուղղության արգասիքն է ու այդպիսին է լինելու և հետագայում: Արևելահայ գրական լեզվի օրինաչափությունները ձևավորվել են հասարակական, քաղաքական, ազգային, լեզվական գործոնների կայուն և տևական ազդեցությունների ներքո. ո՛չ կարող է և ո՛չ էլ հարկավոր է հախուռն կերպով վերցնել արևմտահայ «հայաշունչ» բառապաշարը՝ առանց վնասելու արևելահայերենի կենսունակությունը, հատկապես մշակութային մրցունակությունը ռուսերենի հարաբերությամբ:

Ընդամենը 10-15 տարի է բաժանում Ղաղբաշյանի բառարանը Ա. Հովհաննիսյանի բառարանից, և արևմտահայ լեզվական մշակույթի մեջ ստեղծված հարյուրավոր բառեր դուրս են մղված կամ երկրորդաբար են նշված Ղաղբաշյանի բառարանում: Նման երևույթը խիստ զարմանալի է, սա-

կայն զարմանալի է նաև նույն ժամանակահատվածում առհասարակ արևելահայ գրական լեզվի զարգացման հաղթական առաջընթացը:

Արևելահայերենի տակավին անհաստատ, երերուն նորմը, որը զգացվում է նաև բառապաշարի ոլորտում, նկատվում է անգամ XIX դ. 50-ական թվերից: Անկասելիորեն զորեղացող, սակայն 50-80-ական թվերին չկայունացած և թույլ արևելահայ բառապաշարային նորմը բառային վիթխարի պահանջների դեպքում թույլ տվեց փոխառել արևմտահայ մշակույթի մեջ ստեղծված գիտական և գեղարվեստական բառապաշարը: Պահանջը այնքան մեծ էր, որ Ա. Հովհաննիսյանը յուրահատուկ հակում անգամ ցուցաբերեց իր բառարանում դեպի արևմտահայ բառապաշարը: 80-90-ական թվերին գրական արևելահայերենի հուժկու զարգացումը, որը արևելահայ բառապաշարային նորմի ամրապնդման հիմք հանդիսացավ, որոշակի ընտրանք և սահմանափակում թելադրեց գրական արևելահայերենով խոսող զանգվածին: Ռուսական ծովման վտանգը, որը կանխազգացել էին Աբովյանը և Նազարյանը, անկասելիորեն առաջանում էր, սակայն տակավին Աբովյանից, Նազարյանից սկսած աճում և զորեղանում էր դրա դեմ արևելահայության մշակութային պայքարը, որի դրոշակակիրը արևելահայ գրական լեզուն էր: Ռուսական լուսավորյալ բռնապետությունը դիմեց հուսահատ քայլերի՝ հայկական դպրոցների փակմանը, սակայն արևելահայ գրական լեզվի հաղթանակը արդեն իրողություն էր XIX դ. վերջին: Այսպիսի պայմաններում զարգացող արևելահայ գրական լեզուն գործառության ուրույն կետ ուներ, որը ընդհանրական կերպով գործում էր որպես լեզվական նորմ և զգացողություն, մասնավորապես՝ բառապաշարային նորմ և զգացողություն: Բառապաշարի կենսունակությունը, ռուսերենի նկատմամբ մրցունակությունը գերազույն պայման էին: Արևելահայերենի բառապաշարը փորձության էր ենթարկվում լեզվական տևական, չդադարող պայքարում: Պատահական չէ Ռադբաշյանի հետևյալ խոսքերը. «Այսպիսով մեր բառարանը աւելի կենդանի և ինքնուրոյն դուրս եկաւ, քան այն բառա-

րանները, որոնց կազմողները աշխատում են շատ բառարաններ քրքրել» («Նախաբան», էջ V): Ամբողջ XIX դարում և հետո էլ արևելահայերենի բառապաշարը՝ իր իմաստաբանությամբ, բառային ատաղծով, բարգավաճում, զորեղանում էր ռուսերենի հետ ունեցած այսպիսի «անհաշտ մտերմության» (Պ. Սևակ) պայմաններում: Ռուսերենից կատարված փոխառությունները թիրախ դարձրած արևմտահայ, նաև արևելահայ «պուրիստները» (Վ. Տերյանի խոսքերով) կամ չէին ըմբռնում խնդիրը (մանավանդ արևմտահայ մշակույթի կրողները), կամ պարփակված էին կղերական մտածողությամբ, կեղծ ազգայնականությամբ: Ուղղագրական փոփոխությունները ևս մինչև Աբեղյանը և Աբեղյանից հետո վերոհիշյալ լեզվապայքարով էին պայմանավորված:

Արևմտահայ իրականության մեջ գիտական բառապաշարը մինչև XIX դարի վերջերը զարգանում էր գրաբարի թաղանթի մեջ. բուն արևմտահայերեն գիտական բառապաշարը իր կենսունակությամբ, արտահայտչական ուժով զիջում էր արևելահայերենի համապատասխան բառապաշարին:

Վերոբերյալ համեմատական օրինակներից պարզ է, որ արևմտահայ արհեստագործական անվանումների մի զգալի մասը կենսունակության տեսակետից չէր համապատասխանում արևելահայ գրական լեզվի ոգուն. դյուրինաց բառատաղծով չէր կազմված, արտահայտչական զորեղություն չունեին կամ ճիշտ չէր արտահայտում օտար բառի նշանակությունը: Մենք փորձում ենք իրողությունը դիտել առարկայաբար և տվյալ ժամանակի մեջ, ուստի այլ խնդիր է, որ հետազայում արևելահայերենը յուրացրեց արևմտահայ արհեստագործական բառապաշարի բազմաթիվ բառեր:

Դաղբաշյանի բառարանում առկա են արևմտահայերենից վերցված հազարավոր բնագիտական անվանումներ. հանքաբանությանը, բուսաբանությանը, կենդանաբանությանը վերաբերող այդ բառապաշարը արևմտահայերենում դարավերջին բարձր մշակույթի էր հասել, բայց կարևոր էր այն, որ այդ բնույթի բառապաշարի շուրջ շատ ավելի թույլ էր ընթանում վերոհիշյալ լեզվապայքարը: Այս առումով

հատկանշական էր, որ Ղաղբաշյանը չափազանց զգուշավորությամբ է յուրացնում Մխիթարյանների կողմից մշակված քիմիական անվանակարգությունը, որովհետև այն անհարկի հայերենացված էր, տերմինակազմական տարրորոշվածությունը հստակ չէր, բառատաղծը մասամբ խրթին ու դժվարընկալելի էր:

Բառապաշարի կամ բառախմբի տերմինացում հասկացությունը համաժամանակյա, առավել ևս՝ տարժամանակյա քննության դեպքում էապես սահմանվում է լեզվական տվյալ նորմով կամ դրա ընթացային վիճակներով: Լեզվական նորմը լեզվական համակարգ լրացնող, կատարելացնող և փոփոխող՝ տվյալ լեզուն կրող հանրության լեզվագիտակցությունն է. այն գործում է անհատի կամքից անկախ, սակայն նա կարող է մասնակից լինել լեզվամշակմանը՝ գործելով տվյալ լեզվական նորմի հունի մեջ: Որքան մեծ է գիտական ոճի (տվյալ դեպքում՝ արհեստագործական անվանախմբի) մասնագիտական կիրառման պահանջը, այնքան լեզվական նորմատիվային մշակման գործունեությունը եռանդուն (ակտիվ) է ընթանում այդ ոլորտում, դրա բացակայության դեպքում՝ ընդհանուր գրական լեզվի նորմը, ըստ գործառական տարբերության, հավասարապես գործում է և գիտական ոճի ոլորտում: XIX դ. վերջերից ավելի ընդլայնվում են արևելահայերեն գիտական ոճի կիրառման հնարավորությունները արտադրական, տնտեսական, կենցաղային ոլորտներում, սակայն դա որոշիչ դեր չի խաղում գիտական ոճին առանձնահատուկ գծեր տալու գործընթացում, գիտական ոճը կերպավորվում և ուղղորդվում է ընդհանուր գրական լեզվի նորմով: Այստեղ հարկավոր է վերստին նշել այն հանգամանքը, որ արևելահայ գիտական լեզվաոճը անխուսափելիորեն տերմինացման, գիտականացման ուղիներ պիտի փնտրեր, ինչպես նաև մշակեր հիմնական փոխատու լեզվին՝ ռուսերենին, համապատասխան համաձևային (узоморфны́м) արտահայտման եղանակներ՝ ռուսերեն գիտական արտահայտման մակարդակը համարժեքորեն անդրադարձնելու նպատակով: Այս գործընթացը արևելահայ մշակույթի մեջ սկսվել էր արդեն

XIX դ. 40-50-ական թվերից. նույնիսկ արևելահայ մշակույթի մեջ կիրառվող գրաբարի կերպավորմամբ է դա նկատելի: Այդ գործընթացի առաջին գիտակցողներից էր Ստ. Նազարյանը, և նա եղավ արևելահայ գիտական ոճի ստեղծման և մշակման «մեծ աշխատավորը» (Լեո): Արևելահայ գրական աշխարհաբարը, սակայն, պատրաստ չէր բարձր գիտականության նյութերի արտահայտման համար, և Նազարյանի գիտական ոճը, հետագայի համար ոճական ուղղության տեսակետից լինելով ուղենշային, ինքնին մնաց «մի անհարթ բարբառ» (Չարենց):

Ելնելով վերոհիշյալ ըմբռնումներից՝ այստեղ կփորձենք ներկայացնել նշված ժամանակահատվածում արհեստագործական անվանախմբի զարգացումը տերմինացման, տերմինային մշակման և համակարգացման տեսակետից:

Ակնհայտ է, որ արհեստագործական անվանումների տերմինացումը ընդգրկում է և՛ իմաստափոխությունների, և՛ արտահայտման ոլորտները ու ըստ էության ուղղված է ռուսերեն համապատասխան անվանակարգի համարժեք արտացոլմանը: Այստեղ այլ խնդիր է ինքնին ռուսերեն անվանակարգի իմաստաբանական փոփոխությունները և դրանց անդրադարձումը հայերենով, մեկ այլ խնդիր է ռուսերեն անվանակարգին համապատասխան հայերեն արհեստագործական անվանակարգի ձևավորումը՝ նոր ձևերի ստեղծում, մշակում, կարգավորում և այլն: Առաջին խնդրին անդրադառնալ նշանակում է խորանալ լեզվահամեմատական բնագավառների մեջ, որը մեր նյութին հիմնականում չի առնչվում: Տվյալ դեպքում մեր խնդիրը երկրորդն է՝ ցույց տալ տերմինացման ընթացքը, դրա կայուն օրինաչափությունները, որոնք գործում են այժմ էլ, ընդ որում՝ արդի արևելահայերենի արհեստագործական և տեխնիկական բառապաշարի բառակազմական օրինաչափությունները, բառակազմական ատաղձը, ոչ սակավ չափով՝ նաև բառապաշարը սերում են XIX դ. վերջերի և XX դ. սկզբների լեզվական իրողություններից: 1890-ական թվականներից ի վեր ավելի ակնառու է դառնում տերմինացված նշանակման, արտահայտչական ճշգրտման աճը: Դադբաշյանի

հետևյալ խոսքերը. «Շատ սակավ կարդացել ենք նաև պ. Արիստղոմ Յովհաննիսեանի Ռուսերենից հայերեն բառարանը, որովհետև այս բառարանի սխալները ոչ միայն անհանդուրժելի, այլ և անթիւ անհամար են» («Նախաբան», 1906 թ.), ավելի շատ վերաբերում են 60-80-ական թվականներին ռուսերեն տերմինաբանության հայերեն արտահայտման մակարդակին, քան բառարանագրի հմտությամբ: Դադբաշյանը իր բառարանի վերաբերյալ թեպետ նշում է, որ հայ հասարակության և մամուլի կողմից «բարի ընդունելութիւն գտավ», միաժամանակ խոստովանում է. «Ես շատ հեռու եմ իմ գործը անթերի համարելուց»: Լեզվի համակարգային մշակման, արտահայտման, հստակեցման և գործնական առաջընթացը անընդհատ գործունեություն է կենդանի գրական լեզվի համար:

Տերմինային մշակման գործընթացը առաջին հերթին նշանակում էր իմաստային, հասկացական սխալների ուղղում. ինչպես՝ Оловяник անագող, կլայեկող - անագէ աման պատրաստող, գործող: // Бронзовщик արոյրագործ, պղնձագործ - անագապղնձագործ: // Оправщик զարդարող, շինող (մարդ) - շրջանակող (օր.՝ ակնեղէնը): // Общник խաղախորդ, դաբաղ - ոչխարի մորթեր պատրաստող, մշակող, ոչխարի խաղախորդ: // Драпирование զարդով ծածկելը, զարդարելը - դրապել, պաստառով, մահուդով պատել:

Ճշգրտվում են սեռի և տեսակի իմաստները, մոտավոր նշանակումները փոխվում են ավելի ստույգ ձևերով, լեզվական ձևը դառնում է ավելի մատչելի, հասկանալի, ոճը՝ առավել ընդհանրական. օր.՝ Пряничник մեղրահաց թխող - քաղցր հացեղեն թխող և վաճառող: // Бумечник արծաթէ, ոսկէ թիթեղ պատրաստող - մետաղեայ նրբահիւս թել պատրաստող: // Булочник հացարար, հացավաճառ, բուլկի շինող - բուլկիագործ, բուլկիավաճառ: // Точильщик սրող, յեսանող - դանակեղէն սրող, սրոցապան: // Перевозчик նաւավար (գետի և այլն) - լաստավոր, նաւավար ապրանքներ կրող, փոխադրող և այլն: Իմաստաբանական մշակման այս ընթացքի իրողություններից կարելի է համարել նաև հետևյալ օրինակները. Обойщик պաստառ շինող - պատի

թղթեր, պաստառներ պատրաստող: // Отомук տեսաբանական գործիքներ շինող - տեսողութեան գործիքների վարպետ և այլն:

Պաստառ և տեսաբանական բառերը ժամանակի գրական լեզվում միանշանակ իմաստներ չունեին, ուստի կենդանի լեզվի բառարանագիրը իմաստային որոշություն տալու նպատակով օգտագործում է ժողովրդախոսակցական անվանումը՝ **պատի թուղթ**, կամ պարզորոշ նշանակում է տալիս՝ **տեսողական**:

Որպես արհեստագործական բառախմբի տերմինացման կամ արտահայտման գիտականացման իրողություն պետք է դիտել նաև արհեստագործական հասկացություններն արտահայտող հոմանշային - համանշային խմբերի որոշակի փոփոխությունները: Մինչև 80-ական թվականները եղած արհեստագործական անվանումների հոմանշային խմբերի մոտ 40-50 %-ը փոփոխությունների է ենթարկվում. լավագույն դեպքում դա հանգեցնում է եզակի տերմինային ձևի առկայացման: Այդ փոփոխությունների ընդհանուր միտումը լեզվական մշակույթի կատարելացման գործընթացով ռուսերենին համարժեք տերմինի ի հայտ բերումը և դրա առկայացումն էր: Առաջին ակնհայտ փոփոխությունը հոմանշային խմբի անդամների նվազումն է. այսպես՝ Бедерник դուլագործ, քուղա շինող, վեդրո շինող - վեդրոյագործ, դոյլագործ: // Паяльщик հալող, հալելով կպցնող՝ մածուցանող, զօդող, կպցնող: // Полупровник ողորկող, յղկող, փայլեցնող, սրբող - յղկող, ողորկող: // Счетоводец հաշուապահ, հաշուակալ, համարակալ - հաշուապահ: // Счетоводство հաշուապահություն, համարակալություն - հաշվապահություն և այլն:

Գրական լեզուն ձգտում է գիտական բառապաշարի ոլորտ ներմուծել պարզ, միասնական, համակարգային տերմիններ, թրթափել հավելյալ, ոչ տերմինային բեռը, ազատվել «բառերի սոսկալի սիրուց» (Վ. Տերյան): Լեզվական գիտակցությունը լեզվից արտամղում է ընդհանրական արժեք չունեցող բառերը. դրանք կամ «հնաշունչ» բառերն էին, որոնց փոխարինելու էին եկել հասկանալի բառեր,

կամ բարբառային, ժողովրդախոսակցական բառեր, որոնք փոխարինում էին ավելի ընդհանրական բառերով կամ գրական լեզվի հունի մեջ մշակված կենսունակ ձևերով. օրինակ՝ Пахар հերկարար, երկրագործ, հողագործ - երկրագործ, հողագործ: // Сукноделуе մահուդ գործելը, չուխայ գործելը - մահուդ պատրաստելը, մահուդագործություն: // Сыровар պանիր շինող, պանրագործ - պանրագործ: // Пuroжник ծաղարար, կարկանդակավաճառ - կարկանդակագործ, -վաճառ և այլն:

Հոմանշային խմբերի փոփոխությունը նվազման ուղղությամբ հատկանշական իրողություն է, սակայն բացարձակ չէ: Կան բանաթիվ օրինակներ, որոնց դեպքում հոմանշային խումբը ընդլայնվում է: Քանի որ փոփոխությունների միջոցով լեզուն ձգտում է նորանոր կենսունակ ձևերով համալրվելու, ուստի հոմանշային խմբերի ընդարձակումը նույնպես կարող է նույն նպատակին ծառայել, ինչպես պարզ երևում է ստորև բերվող օրինակներից. Омыва́шук ծուլող - ածող, ծուլող, թափող: // Промыва́шук լուացող - լուացող, լուացարար (ոսկի ևն): // Промышленник արհեստաւոր, արհեստագէտ - արհեստաւոր, արդիւնաբերող: // Промышленность արուեստագործութիւն - արուեստագործութիւն, արդիւնաբերութիւն: // Печник վառարան շինող - վառարան շինող, վառարանագործ: // Серб-русьшук արծաթաջրող - արծաթազօծող, արծաթաջրող և այլն: Հատկանշական է, որ որոշ տերմիններ, որոնք Դադբաշյանը երկրորդաբար է հղում, հետագայում հայ իրականության մեջ նախապատվություն ստացան և տերմինային արժեք ձեռք բերեցին (լվացարար, արդյունաբերություն և այլն): Գծիկից հետո դրված հոմանշային խմբերը ավելի կենսունակ, ազգային լեզվամտածողությամբ հատուկ ձևեր են պարունակում, որը և տերմինայնացման առաջընթաց է նշանակում:

Տերմինակազմական բուն կազմություններով գիտական բառապաշարի ձևավորումը նույնպես համակարգայնացման եղանակներից է: Դա նշանակում է բաղադրականության ցածր աստիճան ունեցող անվանումների այնպիսի

փոխակերպում, որը իրականացվում է բաղադրականության ավելի բարձր աստիճանի դրսևորմամբ: Խնդիրը զըլխավորապես վերաբերում է XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին արևելահայ գրական լեզվի բառապաշարային նորմի հնարավորությանը: Երկրորդական նշանակություն ունի այն, որ XVIII դ. պարզ գրաբարով արհեստագործական նշված անվանախումբը ներկայացված է կատարյալ մշակվածությամբ, ըստ բառատաղծի և բառակազմական կաղապարների: Այսպես, орнаментальнук արհեստավոր նշանակող անվանումը Ա. Հովհաննիսյանի բառարանում հայերեն թարգմանված է **դրուագագործ** բառով: Նա տվյալ բառը վերցրել է Ն. Բյուզանդացու ֆրանսերեն - հայերեն գրաբար բառարանից: Նույն բառը Ղադբաշյան թարգմանում է՝ **դրուագող, նախշող**: Եվ **-գործ** ածանցակերպը, և **-ող** ածանցը արհեստագործական, տեխնիկական անվանումներ ստեղծելու մեծ արդյունավետություն ունեն, ընդ որում՝ **-գործ**-ը ավելի մասնավորեցնող, տերմինացնող երանգ ունի: Ժամանակի լեզվագագացողությունը նախընտրելի է համարել **-ող**-ով ձևավորել բառը, որով ընդհանուր առմամբ պահպանվել է բառի տերմինային իմաստը:

Նշված ժամանակահատվածում տերմինային համակարգման եղանակներից է դառնում ժողովրդախոսակցական կաղապարներով արտահայտված արհեստագործական անվանումների վերածումը բաղադրականության ավելի բարձր աստիճանի կաղապարներով արտահայտված անվանումների. օր.՝ Платоншук փամփուշտներ շինող - փամփշտագործ: // печник վառարան շինող - վառարանագործ: // Тележник սայլ շինող - սայլագործ: // Сундучник արկղ շինող, սունդուկ շինող - սունդուկագործ: // Бусершук ուլունք շինող - ուլունքագործ: // Хмельовод գայլուկի բոյս մշակող - գայլուկագործ: // Хмельоводство գայլուկի մշակութին - գայլուկագործութին: // Балалашук բալալայկա շինող - բալալայկագործ և այլն:

Համադրական կայունացող ձևերի կողքին, անշուշտ, մնում են վերլուծական ձևերը՝ նվազող գործածությամբ: Սակայն առաջանում է ոճական նշույթավորում. որպես

բուն գրական ձևեր են ընկալվում բաղադրական ձևերը, իսկ վերլուծական ձևերը՝ ժողովրդախոսակցական կամ գրական լեզվի տարբեր ոճերում գործածվող տարբերակներ: Համակարգման իրողություն են ներկայացնում նաև հետևյալ օրինակները՝ *обжугалъхук* թրծող մշակ - թրծող (աղիւս, կաւեղէն): // *Пороховъхук* մշակ վառօդարանի - վառօդագործ և այլն:

Դժվարընկալ կամ հնացած բառատաղծի դեպքում բաղադրյալ ձևերը, անշուշտ, տեղի են տալիս դյուրինաց, պարզ վերլուծական ձևերին. այսպէս՝ *Бамыръхук* մրագարկ - շարած գիրը թանաքող: // *Правильъхук* ոսկրայարդար - խախտած, դուրս ընկած ոտները հաստատող, տեղը գցող: // *Берстомъхук* տառընկալ - գրաշար և այլն:

Տերմինային ձևավորման կառուցվածքային իրողությունները քննելիս կարևոր է անդրադառնալ **-ում** ածանցին՝ որպէս գործողության անուն իմաստներից արհեստանուն կազմող կարևոր ածանցի: Հայտնի է, որ արհեստանիշ անվանումների մի մասը սերում է գործողության արտահայտման բայական մակարդակից, և այդպիսի անվանումների նախնական ձևը արդի հայերենում փոխանուն անորոշ դերբայն է, որը գործում է որոշյալ հոդով, ըստ որում գրաբարը հոդը չի գործածում այնպիսի անհրաժեշտությամբ, ինչպէս գրական հայերենը: Փոխանուն դերբայական այս ձևը սերտաձած արտահատում է գործողային և արհեստային (հարակրկնվող կայուն գործողություն) իմաստներ: Շարույթը կամ նախադասությունն է ի հայտ բերում, թե որ իմաստով է գործածված տվյալ բառաձևը: Գործողի իմաստի նվազեցումը առաջնային է դարձնում «արհեստ» նշանակությունը, և դա հիմնականում իրականացվում է **-ում** ածանցի միջոցով: Քանի որ գրական լեզվում և նրա խոսակցական տարբերակում գերիշխում էր փոխանուն դերբայի գործողային իմաստը, և **-ում** ածանցը փաստորեն վերացած էր խոսակցական լեզվից, ապա 1880-ական թվերին անգամ **-ում** ածանցի ազատ գործածությունը գրական լեզվի տվյալ ժամանակի նորմը թույլ չէր տալիս, այսինքն՝ դրանով կազմված բառերը հաճախ որպէս չեզոք

բառեր չէին ընկալվում, այլ բարձր ոճի նրբերանգ ունեցող: Հատկանշական է այն, ինչ Ա. Հովհաննիսյանը գրում է. «Խիստ սահման չեմ դրել գրաբար և աշխարհաբար ձևերի մէջ և բառերն ընդունել նրանց վերջին ձևով, եթէ անյարմար է եղել սկզբնական ձևը պահելը (ոլորելը, խախտելը փոխ. ոլորումն, խախտումն և այլն)» («Վերջաբան», էջ II): Գրաբարի **-ումն** ածանցի **-ն** հնչյունը և գիրը միջին հայերենում արդեն սղվել էր: Հյուսիսափայյան շրջանում այս ածանցն օգտագործվում էր գրաբարածէ՝ **-ումն**, սակայն ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ **-ումն** ածանցի ն գիրը 70-80-ական թվերին գրեթե դուրս մղվեց: 70-ական թվականներից աճում է **-ում** ածանցով կազմված բառերի քանակը, և նվազում է փոխանուն դերբայական ձևերի գործածությունը: **-ում** ածանցով կազմված ձևերում «արհեստ կամ մասնագիտություն» իմաստները որոշ չափով ակնհայտ էին դառնում, այդուհանդերձ համատեքստով էր որոշվում, թե տվյալ բառը գործողություն է նշանակում, թե արհեստի անվանում է: Այնուամենայնիվ, **-ում** ածանցը արհեստային իմաստի ավելի հստակ կողմնորոշում էր տալիս, քան փոխանուն դերբայը. *промышание* լուսանալը - տ. *золама* լուացում, լուանալը ոսկու: // *полуда* անագելը, կլայելելը - կլայելում, անագում: // *отлувка* հալելը, ծուլելը - ածելը, ծուլելը, ծուլում: *полумыра* յղկելը, ողորկելը - յղկում, ողորկում և այլն: Արհեստանունների **-ում** ածանցով ձևավորման ընթացքը տակավին 1920-ական թվերին վերջացած չէ, այն ավարտվում է 30-40-ական թվականներին: Մինչև XX դ. 20-ականներին նախկինում դերբայական ձևով արտահայտված արհեստանունները մեծ մասամբ ձևավորվում են **-ում** ածանցով, առկա են մեծ թվով զուգահեռ ձևեր. *пояние* զօղում, զօղելը: // *плавка* հալելը, հալում: // *обжигание* թրծելը, թրծում: // *пломбирование* պլօմբելը, բլօմբում և այլն:

բ. Արհեստագործական անվանումների համակարգը

Նշված ժամանակահատվածում նախկին արհեստագործական անվանումների մեծ մասը (մոտ 60-70 %-ը) պահպանվում է. подковчик ականահատ: // переpleмчик կազմարար: // богарь տակառագործ: // вымачивание սալայատակում: // сыромятник խաղախորդ, «դաբաղ» և այլն: Մշակութային, տնտեսական փոփոխությունների հետ կապված լեզվի մեջ են մտնում նորանոր արհեստագործական անվանումներ, որոնք կան միախառնվում, կան վերաճում են տեխնիկական անվանումների. пусочник տառագործ: // пулеломия գնդակածուլութիւն, -ծուլում: // басменное дело դրոշմագործութիւն, դրոշմագրող: // бытuloчник շշագործ: // дрожняк դրոժագործ: // добывающая հանքային արդյունաբերութիւն, հանքարդիւնագործութիւն: // газовщик գազային գործարանի բանուոր: // телеграфист հեռագրատան ծառայող: // тополистографня տպավիմագրութիւն և այլն:

1800-1920-ական թթ. բարբառային, ժողովրդախոսակցական արհեստագործական անվանումները, հատկապես արևելյան լեզուներից եղած փոխառությունները, գրական տարբերակների ամրապնդմանը զուգընթաց, մեծ մասամբ արտամղվում են գրական լեզվից: Մասամբ դրանք պահպանվում են, սակայն որոշակի նշույթավորմամբ, որը նշանակում է, որ դրանք դուրս են գրական արտահայտման կանոնիկ ոլորտից. наўка մածուցում, զօդում, լէիէմելը - զօդելը, զօդում: // алмазщик ակնագործ, ակնաստ թրաշող - աղամանդահատ, ակնագործ: // подковщик պայտար, «նալբանդ» և այլն: Նույն միտումների արդյունք պետք է համարել հետևյալ տիպի փոփոխությունները. нуромехника ֆշշանքներ պատրաստելու արհեստը - հրագործութիւն, հրարուեստ: // валяльщик լմող, տրորող (վարպետ) - թաղիքադիր: // валяльное ремесло լմելը, տրորելը - թաղիքադրութեան արհեստը: Դադբաշյանի բառարանում կան արհեստագործական բազմաթիվ հասկացությունների անվանումներ, որոնք հայերեն տրվում են բացատրություններ

րի ձևով, այսինքն՝ տերմինային ձևավորում չեն ստանում: Դրանք հիմնականում ռուսական մշակույթին հատուկ արհեստներ և զբաղմունքներ էին, որոնք մուտք չէին գործել Անդրկովկաս. вандовщик կթոցով ձուկ որսացող: // веретовщик ոգորենու կեղևներ ծախող: // гусачник սագակռվի սիրահար: // гудельщик քարայրի որսորդ: // бартонок վայրի մեղուաբոյծ: // бумовщик պատի հիմքը պատրաստող որմնադիր և այլն: Անշուշտ, այսպիսի հասկացությունների մշակութային պահանջ չկար, ուստի տերմինային արտահայտման ջանքեր չեն գործադրվում այս ոլորտում:

գ. Ռուսերեն և հայերեն արհեստագործական անվանումների կառուցվածքային համեմատության ուրվագիծ

Արհեստագործական ոլորտի՝ գործող անձի և գործունեության (արտադրական և զբաղմունքային) անվանախումբը ռուսերենում և հայերենում ունի կառուցվածքային ընդհանրություններ և տարբերություններ: Արհեստագործական իմաստային դաշտը հայերենում և ռուսերենում կադապարների և կառուցվածքային տարրերի բաշխման որոշակի տարբերություն է: Սրա պատճառը և՛ լեզվական ժառանգորդությունն է, և՛ լեզվագիտակցությունը, և, հատկապես, աշխարհընկալման և կենսագործունեության յուրահատկությունը: Ռուսերենը տարբերություն չի դնում արտադրական և ոչ արտադրական գործունեությունների միջև. գործող անձը արտահայտվում է միևնույն ածանցով (сукошник մահուկագործ, балезамировщик բալզամող և այլն): Ռուսերենը պարզապես արտահայտում է գործող անձի առնչությունը արտադրական կամ ոչ արտադրական գործունեության նկատմամբ: Համադրական բաղադրությամբ արտահայտման տեսակետից ռուսերենը զիջում է հայերենին (горное промысел հանքագործութիւն, соляной промысел աղագործութիւն, оружейный мастер զինագործ, мастер шелковых тканей կերպասագործ և այլն): Գործող

անձ (արհեստավոր, մասնագետ) ցույց տվող ածանցները հայերենի համեմատ սակավ են (-щик, -чик, -ник և այլն), դրանք փաստորեն միևնույն ածանցն են և տարբեր բառակազմական հիմքերի վրա դրվում են տարբեր ձևերով: Ռուսերենում երկարմատ համադրական բաղադրությունները, որոնցում երկրորդ բաղադրիչը ցույց է տալիս գործող անձ, սակավ են (сультро-варь բորակագործ, сукно-вал մահուդ պատրաստող, вино-кур օղեգործ, вино-дель գինեգործ, воско-леу մոմագործ և այլն), մինչդեռ դա հայերենում օրինաչափ և արդյունավետ կառուցատիպ է: Վերջնաբաղադրիչ բայարմատ ունեցող բառերը ռուսերենում ստանում են գործող անձ ցույց տվող լրացուցիչ ածանց (золототка-мель ոսկեխոյզ, бормадела-мель թղթագործ, борзотус-ец արագագիր, горнопромышлен-ник լեռնագործ, монотдела-мель դրամահատ և այլն): Հետաքրքիր է, որ հնդեվրոպական **-ar** ածանցով բառեր ռուսերենում ավելի շատ են պահպանվել, քան հայերենում. виноград-ար այգեգործ, блях-ար թիթեղագործ, бот-ար տակառագործ, гонч-ար բրուտ, золот-ар ոսկեզօծող, кос-ар հնձուոր և այլն: Քննարկվող և դրանից առաջ ընկած ժամանակաշրջանում արհեստագործական բառապաշարի ոլորտում չեն նկատվում ռուսերեն լեզվամտածողության ներթափանցումներ: Նշված ժամանակահատվածում արևելահայ գրական լեզվի վրա նշանակալի ազդեցություն ունի միայն ռուսերենի սեռի իրակարգը (կատեգորիան): Հայերենը չունի քերականական սեռի կարգ, սակայն ունի իգական սեռանիշ ածանցներ և ածանցակերպեր, որոնք սակավ գործածություն ունեին գրաբարում, ամենագործածականը **-ուհի** ածանցն է: Ռուսերենի ազդեցությամբ **-ուհի** ածանցով բազմաթիվ ձևեր են մտնում գրական լեզվի մեջ. портниха դերձակուհի, новаруха խոհարարուհի, акушерка մանկաբարձուհի, коверница գորգագործուհի, клешица սոսնձագործուհի, рукодельница ձեռագործուհի, булавогница գնդախեղավաճառուհի, бронзовщица անագապղնձագործուհի, блондогница բլոնդագործուհի, крендельщица կրենդելագործուհի, калбасница կալբասագործուհի և այլն:

Վերը նշված օրինակների մի մասը բացառություններ էին. հայերենի բառակազմության ընձեռած հնարավորության դեպքում սեռի նշումը արտահայտվում է ժամանակի գրական լեզվում, մնացած դեպքերում այն կատարվում է վերլուծական ձևերով. *башмаки*սա հողաթափեր կարող կին և այլն: Նոր գրական լեզվի մշակները, այդ թվում՝ բառարանագիրները, նպատակ չեն ունեցել հայերենի վրա պատվաստել ռուսերենի քերականական սեռի կարգը, պարզապես ռուսերենի հիմքի վրա բնականաբար ընդլայնվում էր հայերենում եղած կառուցածի գործածությունը՝ լեզվական անհրաժեշտ կարիքները բավարարելու համար:

Ռուսերենում արտադրական գործունեությամբ զբաղված անձի անվանումը գերազանցապես երկակի նշանակություն ունի. առաջինը «արհեստավոր», երկրորդը «տվյալ արհեստի արտադրանքը վաճառող» նշանակությունն է: Ոչ սակավ դեպքերում «վաճառող» իմաստն առաջնային է «արտադրող» իմաստի համեմատ: Ռուսերենի մեկ ձևով արտահայտվող երկու նշանակությունը հայերենը իրականացնում է երկու տարբեր անվանումներով, ըստ որում՝ համադրական կազմության դեպքում նույն առաջնային բաղադրիչին ավելացվում են **-վաճառ**, - **ծախ** բայարմատները, վերլուծական կազմության դեպքում բառակապակցության առաջին անդամին ավելացվում են **վաճառող**, **ծախող** դերբայական ձևերը: Հայերենը համադրական կառուցվածքի բավականաչափ բառեր ուներ՝ անկախ ռուսերենի ազդեցությունից, որոնք սկիզբ էին առնում դեռ գրաբարից. գինեծախ, գինեվաճառ, ածխավաճառ, կարավաճառ, գրավաճառ, հատավաճառ, աղավաճառ, ակնավաճառ, մոմավաճառ, մրգավաճառ, գերեվաճառ, ճօթավաճառ և այլն: Ռուսերենի ազդեցությունը հայերեն արհեստագործական անվանումների կառուցվածքի վրա, թերևս, սահմանափակվում է վերոհիշյալ երկու իրողություններով:

դ. Արհեստագործական անվանումների վերլուծական կառուցվածքները

Արհեստագործական անվանումները, ըստ տվյալ լեզվի ընձեռած հնարավորության, ներկայացնում են արտահայտման աստիճանականություն: Գրաբարում արտահայտման ելակետային ձևը, ինչպես ցույց ենք տվել, կազմվում է նախադասությամբ (որ ձուլ է = ձուլողը): Նոր գրական հայերենի համար այս ձևը շրջասություն է, տերմինային առումով այն չի գործածվում: Նոր գրական հայերենում ելակետային ձևը բառակապակցության մակարդակն է: Ելակետային բառակապակցությունը երկանդամ է, այն կարող է ընդարձակվել, դառնալ բազմանդամ: Նոր գրական հայերենի արհեստագործական անվանումները գերազանցապես երկանդամ բառակապակցությամբ միավորներ են՝ սոսինձ շինող, շաքար եփող, արաղ քաշող, դանակեղեն սրող, լապտեր շինող, զենք շինող և այլն: Այս տիպի երկանդամ բառակապակցությամբ կազմության (վերլուծական բաղադրություն) արհեստագործական անվանումները հատուկ են գրական հայերենի ժողովրդախոսակցական տարբերակին և բարբառներին: Նոր գրական հայերենին, մանավանդ XIX դ. վերջերից սկսած, և՛ արհեստավոր, և՛ արհեստ նշանակման ոլորտում հատուկ է արհեստագործական անվանումների արտահայտման համադրական բաղադրության ձևը: Այդ իսկ պատճառով արհեստագործական անվանումների արտահայտման բառակապակցական մակարդակը կոչում ենք ելակետային կամ ենթատերմինային, իսկ համադրական բաղադրությամբ արտահայտված վիճակը՝ բուն տերմինային կամ սոսկ տերմինային: Խնդիրն այն է, որ արհեստագործական անվանումների ենթատերմինային ձևերը ոչ միայն հայոց լեզվի պատմությամբ, ժողովրդախոսակցական լեզվով առկայացված երևույթներ էին, այլև գործում են նշված ժամանակաշրջանի գրական լեզվի մեջ. արհեստագործական անվանումների 30 - 35 % - ը կազմված էր ենթատերմինային կառուցատիպով: Նշված ժամանակահատվածում համադրական

ծները լեզվում այս կամ այն չափով հաստատվելու հետևանքով դրանց բառակապակցական տարբերակները սկսում էին կրել ոճական երանգ. *κολοδчук* կօշիկների «ղալիպներ» շինող, կաղապար շինող - կաղապարագործ: // *ламовщик* լապտեր շինող, լամպաշինող - լապտերագործ և այլն: Համադրական արտահայտման եղանակը մտային ընդհանրացման, հետևաբար լեզվական փոխակերպումների վերառման գործընթաց է. ոչ սակավ դեպքերում այն իրագործելի էր նույնիսկ հայերենի համար: Արհեստների, արդյունաբերության ճյուղերի անընդհատ ստորաբաժանումների հետևանքով արհեստագործական անվանումների բառակապակցական արտահայտման ձևը ոչ միայն անխուսափելի, այլև անհրաժեշտ էր դառնում: Բազմանդամ բառակապակցությունները հիմնականում նորաբանություններ էին, որոնք կամ արհեստների և զբաղմունքների նորանոր ճյուղավորումներ էին, կամ ռուսական մշակույթին հատուկ արհեստներ կամ զբաղմունքներ էին նշանակում. *красограф* փայտի վրա փորագրող: // *галущик* ոսկերեկ ժապավեն շինող: // *декоратор* թատրոնական տեսարանների նկարող: // *зоомарь* ոսկեղեն դիպակեղեն կարող: // *сумасник* կապոյտ, «մալի» գոյներով ներկող: // *подавальщик* բաղնիքում կեծացրած աղիւսների վերայ ջուր ածող և այլն:

Արհեստագործական անվանումները և առհասարակ գործող անձ նշանակող բոլոր լեզվական միավորները նախադասության բայական խմբի բազմանդամ և բազմաստիճան փոխակերպումների արդյունք են: Բայական խումբը ձգտում է փոխակերպումների միջոցով փոխարինել գործող անձի անվամբ ենթակային: Տարբեր լեզուներում այդ ընդհանրական լեզվական գործընթացը, լեզուների բնույթից կախված, տարբեր կերպ և տարբեր չափով է իրականանում: Այս առումով ռուսերենը զիջում է հայերենին: Գործող անձի նկատմամբ արդի գրական հայերենում բայական խմբի փոխակերպման առաջին մակարդակում առկայանում է երկանդամ բառակապակցությունը (նա ծուլում է երկաթ - երկաթ ծուլող): Փոխակերպման երկրորդ մակարդա-

կում առկայանում է համադրական կառուցվածքը (երկաթ ծուլող - երկաթածույլ): Փոխակերպման երրորդ կառույցում ըստ իմաստի առկայանում է զուտ դերբայական ձևը (երկաթածույլ, պղնձածույլ... - ծուլող)՝ կազմելով բուն (իսկական) բարդություն: Առաջ եկած այս ձևերը մեծ ընդհանրացմամբ գործող անձ են նշանակում, ուստի այսպիսի ձևերը սակավ են (շինող, պատրաստող, գործող և այլն) և հենքային դեր են խաղում նոր կազմությունների համար: Երկանդամ բառակապակցությամբ արհեստագործական անվանումները քննվող ժամանակահատվածում երկու հարյուրից ավելի են. դրանց գերիշխող մասը արտադրական գործունեության գործող անձ է նշանակում. *гвоздар* մեխ շինող: // *колесник* անիւ շինող: // *колокольник* զանգ շինող, զանգ ծուլող: // *крахмальщик* կրախմալ հանող: // *кружевник* հաշիա գործող և այլն: Այս կառուցվածքի միջուկը դերբայական ձևն է: Բայարմատը, ի տարբերություն գրաբարի (-իչ), ձևավորվում է ենթակայական դերբայով՝ **-ող**, և հազվադեպ՝ **-իչ**-ով: Այս կառուցվածքի առաջին բաղադրիչը, սակավ բացառությամբ, անցողական բայանվան ուղիղ խընդիրն է: Միանդամ բառակապակցության այս կառուցվածքը կարող է ընդարձակվել բայանվան և ուղիղ խնդրի տարբեր լրացումներով. *маринщик* այլ և այլ մթերքներ քացախող, համեմող: // *клещик* ձկան սոսինձ պատրաստող: // նաևից բեռ կրող և այլն: Արտադրական գործունեության արհեստագործական անվանումների բայական հենքային բաղադրիչը բառերի սակավ շրջանակ է ընդգրկում (շինող, պատրաստող և այլն): Ոչ արտադրական արհեստները, զբաղմունքները գործունեության բազմազան ձևեր կարող են ընդգրկել, ուստի այս դեպքում գործողության նշանակության սահմանափակում չկա. բայական հենքային բաղադրիչ կարող են դառնալ զանազան բառեր. *молотильщик* հացահատիկ ծեծող, կալտող: // *малар* պատերը թղթող: // *меходуэ* փուքս փչող: // *монетчик* դրամ կտրող: // *аэронавт* օդապարիկը ղեկավարող: // *сверильщик* փորող, ծակող գայլիկոնով: // *косарь* գերանդի քաշող: // *монтажник* թելը վիլակի, կարժառի վերայ փաթաթող և այլն: Արհեստավորի

նշանակությունը արտահայտվում է նաև արհեստի կամ արտադրանքի միջոցով (մեղուապահութեամբ զբաղուող, գէնքի վարպետ և այլն): Այսպիսի կառուցվածքները բավականին գործածական էին ռուսերենում. հայերենում դրանք կարող էին գործածվել ըստ տերմինաբանական անհրաժեշտության, մնացած դեպքերում՝ ոճական իմաստներով:

Ե. Արհեստագործական անվանումների համադրական բաղադրյալ կառույցները

Այս կառուցվածքները, ինչպես պարզ է նախորդ շարադրանքից, առաջ են գալիս բայական խմբի երկրորդ և երրորդ աստիճանի փոխակերպման հետևանքով: Ենթատերմինային ձևերը նյութապես չեն վերարտադրվում փոխակերպման երկրորդ և երրորդ աստիճաններում. օր.՝ бумажоделатель թուղթ շինող, թղթագործ, суконщик մահուդ պատրաստող - մահուդագործ, валяльщик լմող, տրորող (թաղիք) - թաղիքագործ և այլն: Համադրական կամ զուտ տերմինային մակարդակի արհեստավորանիշ անվանումները բաժանվում են ածանցավոր և բարդ բառերի: Առաջին դեպքում վերջնաբաղադրիչը ածանց է կամ ածանցակերպ, երկրորդ դեպքում՝ բայարմատ: Մինչև 1920-ական թվականները **-գործ** ածանցակերպով կազմված բառերի քանակը ըստ բառարանագրական տվյալների մոտ 600 է, որ կրկնակի շատ է 1880-ական թվականներին եղած համապատասխան ձևերի համեմատ: Բառային ատաղձի աննշան փոփոխություններով կամ անփոփոխ՝ վերջին ձևերը գործում են մինչև 1920-ական թվականները ստեղծված բառապաշարի մեջ, ինչպես՝ слесарь փականագործ: // шубник մուշտակագործ: // шелковыи фабриканти մետաքսագործ: // мастер приготовляющии диадемы խոյրագործ: // полотнянныи мастер կտավագործ // черепушник կղմինդրագործ: // мраморщик մարմարագործ, մարմարիոնագործ և այլն: Մինչև 1920-ական թվականները ստեղծված նորաբանություններից են. санник սահնակագործ: // мостовщик կամրջագործ: // гулочница գուր(լ)պա-

յագործ: // мастер приготавливающий халву հրուշակագործ:
// щетчик խոզանակագործ: // котельник կաթնայագործ: //
валяльщик թաղիքագործ: // коверница գորգագործուհի: //
ведерник դոլլագործ: // кошелечник քականագործ: // горно-
промышленник լեռնագործ, հանքագործ: // формовщик կա-
ղապարագործ: // челодчник կկոցագործ: // бронзовщик ան-
ագապղնձագործ և այլն:

Առաջին անգամ հայերենի մեջ են մտնում փոխառյալ
առաջնաբաղադրիչով տասնյակ բառեր, ինչպես՝ дрожник
դրոժագործ, դրոժավաճառ: // металлург մետաղագործ,
մետաղաբան: // крендельщик կրենդելագործ: // сигароч-
ник սիգարագործ, սիգարավաճառ: // балалайщик բալա-
լայկագործ: // паркетщик պարկետագործ: // блондник
բլոնդագործ: // салонца սալոպագործուհի, կանանց վե-
րարկուներ կարող կին, աղջիկ: // матрацник մատրացա-
գործ: // макаронщик մակարոնագործ, մակարոնիագործ: //
корсажник կորսաժագործ և այլն:

Այս բառախմբի մեծագույն մասը և դրանց իմաստա-
ձևային կաղապարը փոխանցվեցին խորհրդային շրջանում
բուռն զարգացող արևելահայ գրական լեզվին: Մանրա-
մասն անդրադառնալ այս կառուցվածքի առաջին բաղադ-
րիչի ձևակազմությանը (հիմքակազմությանը), հնչյունափո-
խական երևույթներին և իմաստաբանությանը հարկ չենք
համարում: Գրական լեզուն ժողովրդական լեզվամտածո-
ղությամբ, բառապաշարով (հատկապես անվանակարգա-
յին - տերմինային ոլորտի) տոգորելու 1890-ական թվերից
ծավալվող շարժումը, որն ուղղված էր գրական լեզուն ազ-
գային լեզվամտածողությամբ մշակելուն, արգելակում է վե-
րոհիշյալ կառուցվածքի լիակատար իրացումը, և, ինչպես
նշել ենք, արհեստագործական անվանակարգի մոտ 30 %-ը
գտնվում էր ենթատերմինային արտահայտման փուլում:
Նույնիսկ կարելի է նկատել հակառակ երևույթներ. Ա. Հով-
հաննիսյանի բառարանում **мебельщик** բառի դիմաց դրված
է՝ **կահագործ**, որը հեղինակը մեքենայաբար վերցրել էր Ն.
Բյուզանդացու գրաբար բառարանից: Քանի որ ժողովրդա-
կան լեզվում կար՝ **կահ** - **կարասիք**, ուստի **կահագործ** բա-

նը արհեստական էր. Դադբաշյանը դնում է՝ **կահ - կարա-սիք պատրաստող**, այսպես և՛ մուշտակագործ - մուշտակներ կարող, օձառագործ - օձառ եփող, շաքարագործ - շաքար եփող և այլն: **-Գործ** -ով կառույցը կարող է վերլուծաբար ընդարձակվել (կաղապարագործ գաճի, խաղախորդ եղջերենու և այլն): **-Արար** ածանցը գրեթե չի օգտագործվում (հացարար, խոյրարար և այլն):

Նշված ժամանակահատվածում կան մի քանի տասնյակ արհեստավորական անվանումներ, որոնք արտահայտված են բարդությամբ: Այս անվանումները իրենց քանակով խիստ զիջում են ածանցավոր բաղադրությամբ արտահայտված ձևերին. դա բնական է, որովհետեւ բարդության երկրորդ բաղադրիչը ավելի նեղ ծավալի գործող անձ է նշանակում, քան գործող անձ ցույց տվող ածանցը:

Արհեստավորական այս անվանումները արտահայտող բարդությունը երկբաղադրիչ է և մեծ մասամբ կազմված է երկու հիմնական ձևություններից (արմատից): Վերջին բաղադրիչը բայարմատ է, որը, ըստ իր դիրքի, արտահայտում է գործող անձ: Բարդության այս կաղապարի մասին մենք արդեն խոսել ենք առաջին գլխում արհեստագործական անվանումների պատմությունը ուրվագծելիս, ուստի այստեղ միայն նշենք, որ այս բազմիմաստ կաղապարը նոր գրական հայերենում գրեթե դառնում է միանշանակ, այն է՝ բայարմատը ցույց է տալիս գործող անձ, և համատեքստից դուրս էլ տվյալ կազմության բառերը ընկալվում են իրենց միակ՝ գործող անձի նշանակությամբ: Այս կաղապարը գերազանցապես սերում է ենթակայական դերբայ ունեցող ենթատերմինային՝ վերլուծական բաղադրությունից: Թե ինչ չափով այս ենթատերմինային վերլուծական ձևերը կարող են նյութականանալ բարդության ձևով, այդ կախված էր գրական լեզվի բառային նորմից, մասնավորապես հեղինակի՝ գիտական լեզվաոճի նուրբ զգացողությունից: Մինչև XX դ. 20-ական թվերը գրական լեզվի չձևավորված նորմը այս վերլուծական ձևերին՝ բարդության վերածվելու լայն հնարավորություն չէր ընձեռում (այստեղ հաշվի չենք առնում **-վաճառ** վերջնաբաղադրիչով ձևերը): Նշված ժամա-

նակաշրջանում նշված կաղապարի թույլ և անկանոն օգտագործման երկրորդ գլխավոր պատճառն այն էր, որ ազգային արտադրական - տնտեսական նշանակալի գործունեություն չկար հայ իրականության մեջ, և գիտական բառապաշարի նորմատիվ զգացողությունը գրեթե համընկնում էր լեզվի ընդհանուր նորմին: Բերենք այս կաղապարով կազմված մի քանի օրինակ. *малыар* պատածեմի: // *ру-докон* հանքահան: // *мунцпробуер* դրամափորձ: // *монет-моделателъ* դրամահատ, դրամակոփ: // *наборщик* գրաշար: // *механик* մեքենագետ: // *скотовод* անասնաբոյժ: // *машинист* մեքենավար: // *производящын* брешь խրամահատ: // *водолаз* ջրատոյգ: // *переплетчик* կազմարար: // *брилиантщик* ադամանդահատ: // *подкопщик* ականահատ: // *аэронавт* օդաչու, օդագնաց: // *гарнущик* հարպունաձիգ: // *пуromexник* հրարուեստագետ: // *переплет-чуща* կազմարարուհի: // *перевозчик* լաստավոր և այլն: Այս կազմության ձևերը ուղղակի չեն վերարտադրում վերլուծական բաղադրության բառատաղձը. *монетчик* դրամ կտրող, շինող - դրամահատ: // *плодовод* լավ պտուղներ մշակող - պտղաբոյժ և այլն: Բարդության դեպքում տեղի է ունենում վերլուծական բաղադրության բառիմաստների վերառման - վերացարկման ընթացք, ուստի բարդությունը գրեթե ազատ է իր բառատաղձի ընտրության մեջ:

Նկատելի է, որ արևելահայ գրական լեզուն ձգտում է դյուրինաց բառատաղձ գործածելու. դուրս են մղվում կամ սակավ գործածական են դառնում խրթին արմատները և կազմությունները. *колпачник* գշտակար - փեղոյրագործ: Սակավաթիվ արհեստագործական բարդ բառեր կան, որոնք ունեն **-ող** ձևույթը. *смереотсущик* ստերեօտպող: // *промышленник* արդիւնաբերող և այլն: Այս կաղապարը սակավ գործածությամբ հայտնի է անգամ V դարի գրաբարից: Այս կաղապարի օգտագործումը հաճախական է դառնում XIX դարի գրաբարում: Այն լայնորեն գործադրվում է արևելահայ գրական լեզվի զարգացման խորհրդային շրջանում՝ պայմանավորված հիմնականում գիտատեխնիկական տերմինաբանության մեծ պահանջարկով:

Համադրական բաղադրություն է նաև արմատ + ող կաղապարը: Միանդամ բառակապակցությունը դիտարկելիս տեսանք, որ նրա միջուկն է կազմում ենթակայական դերբայը: Այս կազմության փոխակերպման երրորդ աստիճանը փաստորեն վերադարձ է ելակետային վիճակին (երկաթ ծուլող - երկաթածույլ - ծուլող), սակայն առանց լրացման: Այսպիսի ձևերի առաջացումը՝ որպես արհեստագործական անվանումներ, արդյունք է մարդկային տևական կենսափորձի և ընդհանրացման: Այս կաղապարով կազմված ձևերը նշված ժամանակահատվածում մեծ քանակ չեն կազմում: Ուսերենում գործողություն կատարողի և մասնավորապես արտադրական, զբաղմունքային գործողություն կատարողի իմաստ արտահայտող բառերը տարբեր կերպ են ձևավորվում. առաջինի ձևը կազմվում է երկրորդից. ավելանում է սեռային վերջավորություն, և քերականորեն նրա իմաստը ածականական - լրացումային է: Հայերենում միայն ենթակայական դերբայով արտահայտվում է ռուսերենի այս երկու իմաստները: Այդ հայերենի համար դժվարություն է ներկայացնում ռուսերենի համապատասխան ձևերը արտահայտելիս, և հաճախ դա իրականացվում է լրացուցիչ բառերով. *пробыавальщик* լուացող (հանածոյի): // *отлущивщик* (մետաղեղէն) ածող, ծուլող, թափող: // *молотильщик* հացահատիկ ծեծող: // *набоущик* չիթ տպող, դաջող և այլն: Անշուշտ այս կաղապարով որոշ քանակի տերմիններ ժամանակի գրական լեզվում իրացվում են, ինչպես՝ *прядильщик* մանող: // *сновальщик* հինող: // *бальзамировщик* զմռռող: // *ворсильщик* գզող, գզար: // *двощильщик* թորող, թորիչ: // *лощильник* կոկող, ողորկող և այլն: Ամենադյուրին կերպով այս կաղապարը կիրառվում էր, երբ դերբայի արմատը գոյականական ծագում ուներ, ինչպես՝ *смолильщик* կարող, խայծղնող: // *фанерщик* դրուագող, դրուագիչ: // *формовщик* կաղապարող: // *золотильщик* ոսկերիչ: // *лакуровщик* ջնարակող, վեռնիճող, լայքայող: // *оловяник* անագող, կլայելող: // *орнаментальщик* դրուագող, նախշող: // *гравёр* փորագրող: // *закроущик* ձևող և այլն: **-իչ** ածանցը շատ քիչ է գործածվում. *фотограф* լուսանկարիչ: // *плавильщик*

հալիչ: // волочес սափրիչ և այլն: **-իչ** ածանցի շատ քիչ գործածության պատճառն այն էր, որ գրական լեզուն, ուղղորդվելով իր խոսակցական հիմքով, սահմանափակ գործածություն էր թույլատրում: Ժամանակի արհեստագործական բառապաշարը կազմվում է նաև այլ ածանցներով, ինչպես՝ ключник բանելապան: // кочевар հնոցապան: // угольщик գործելապան: // аэронавт օդանւոր: // косарь գերանդաւոր և այլն: Այս կաղապարի ընդարձակված ձևերը ոչ մի տարբերություն չեն ներկայացնում բարդությամբ արտահայտվող անվանումների ընդարձակված ձևերի նկատմամբ: Այս կաղապարը լայնորեն գործադրվում է խորհրդային շրջանի գիտատեխնիկական տերմինաբանության մեջ:

Արհեստանունները ածանցավոր համադրական բաղադրություններ են, և նրանց կաղապարները գրեթե անփոփոխ են և գրաբարում, և՛ արդի հայերենում, և՛ քննվող ժամանակահատվածում: Արհեստանունների մի մասը կազմվում է հոդավորմամբ կամ ածանցմամբ, մյուս մասը՝ միայն ածանցմամբ: Գործունեություն ցույց տվող անորոշ դերբայի հոդավորմամբ կամ բայրամատի **-ում**-ով ածանցմամբ կազմվում է արհեստանունների առաջին խումբը, **-ություն (ութին)**, մասամբ **-ում** ածանցներով ածանցմամբ՝ երկրորդ խումբը: Մի դեպքում բաղադրման հիմքը դերբայը կամ բայրամատն է (ոսկեզօծելը, ասկեզօծ-ում), մյուս դեպքում՝ արհեստավոր նշանակող համադրական բաղադրությունը (ածանցավոր բառ կամ բարդ բառ) (ածխագործ + ություն, աղամանդահատ + ություն): Արևելահայ գրական լեզվի խոսակցական հիմքը և Արարատյան բարբառը որպես այդպիսին **-ում** ածանց չունեն. այն պահպանվել է ավելի հաճախ **-մունք** ձևով (էրեր-մունք, արար-մունք և այլն): Փաստորեն **-ում**-ը գրական լեզվի մեջ գործուն ածանց է դարձել գրաբար բառապաշարի յուրացման միջոցով: Այդ է պատճառը, որ նկարագրվող ժամանակաշրջանի գրական հայերենում, հատկապես՝ արևելահայերենում, այն դժվար է արմատավորվում: Տակավին 1920-ական թվականներին արհեստանունների մեծ մասը արտահայտվում է որոշյալ հոդով օժտված անորոշ դերբայով, ինչպես՝ ոслухованне յղկելը, ո-

դորկելը: // вызолочение ոսկեզօծելը, ոսկեջրելը: // лаку-
ровка ջնարակելը, լաք քսելը: // мятое ծեծելը, քրքրելը
(կտաւատ):// молотьба կա(լ)սելը, ծեծելը: // сахаро-
варенье շաքար եփելը: // подкованіе պայտելը, «նալելը»:
Արհեստանունները, անշուշտ, այս կերպ պատշաճ չէին
արտահայտվում, և «հայոց անմշակ, աղքատ գրական լե-
զուն» (Րաֆֆի հ. 10, 1964, էջ 158) իր զարգացման ընթաց-
քում գրաբարից յուրացնում է գիտական նշանակման որո-
շակի արտահայտչություն ունեցող **-ում** ածանցը: Այս ա-
ծանցը լիովին գործուն է դառնում խորհրդային շրջանում:
Այսուհանդերձ, **-ում** ածանցի գործածման աճը նշված ժա-
նանակահատվածում ակնհայտ է 1980-ական թվականնե-
րի համեմատությամբ: Մինչև 1920-ական թվականները,
բնականաբար, մեծաթիվ են զուգահեռ ձևերը, ինչպես՝
сленка ծեփելը, ծեփում: // полумура յղկում, ողորկում: //
балзамирование զմռսելը, զմռսում: // амалгация սնդկազօ-
դելը, զնդկազօդում: // бронзирование արոյրելը - անագա-
պղնձում: // спайка զօդելը, զօդում: // градуирование աղը
զատելը, աղազատում: // сверление գայլիկոնելը, գայլիկո-
նում: // смоление կպրելը, կպրում: Հետաքրքիր մի իրողու-
թյուն. արևելահայ գրական հայերենը XIX դ. վերջերին **-ում**
ածանցով գոյական է կազմում հետևյալ կերպ՝ стеклова-
ние ապակիացնելը, ապակիացնում: // цементация ցեմեն-
տացնելը, ցեմենտացնում և այլն:

Արհեստանունների երկրորդ խումբը, ինչպես ասա-
ցինք, կազմվում է **-ություն (ութին)** ածանցով, որը դրվում է
արհեստավոր նշանակող բառի վրա, ինչպես՝ суконщик
մահուդագործ - сукноделіе մահուդագործութին, теле-
жник սալլագործ - тележное ремесло սալլագործութին,
кожевник կաշեգործ - коженное дело կաշեգործութին և
այլն: Նույն է բարդության դեպքում, ինչպես՝ դրամահատ -
դրամահատութին, նախշքար - նախշքարութին, դերձակ -
դերձակութին, бритуантщик աղամանդահատ - бритуант-
ное ремесло աղամանդահատութին, аэроавт օդաչու,
օդագնաց - аэроавтика օդաչուութին, օդագնացութին և
այլն: Ռուսերենը արհեստների անվանումը հաճախ իրաց-

նում է վերլուծական ձևերով, ինչպես՝ *тележное ремесло, токарное мастерство, слесарная работа, горное дело* և այլն: Հայերենը կարիք չուներ այսպիսի կադապարների, սակայն երբեմն կազմում է նման ձևեր, ինչպես օղի քաշելու արհեստը, տակառագործության արհեստը և այլն: Տվյալ դեպքում առաջին բաղադրիչով նշանակվում է գործունեությունը, իսկ լրացյալով որոշվում է դրա արհեստ լինելը: Մինչև 1920-ական թվականները վերոհիշյալ տիպի ձևեր չկան հայերենում: Խորհրդային շրջանում **արհեստ, մասնագիտություն** նշանակելու հազարավոր բառերի պահանջի պայմաններում սկսում են գործածվել նաև վերլուծական ձևեր՝ մեծ մասամբ ռուսերենի պատճենմամբ:

գ. Արհեստագործական բառախումբը արևելահայ գրական լեզվի զարգացման հունի մեջ

XIX դարի սկզբներից գրավոր դարձած արևելահայերենը զանազան մանր փոփոխություններով տարերայնորեն առաջ է ընթանում մինչև 50-ական թվերը: 50-ական թվերից այն մտնում է իր զարգացման գլխավոր հունը, և այդ ուղղության հիմնադիրը և առաջին արգասաբեր մշակը Ստ. Նազարյանն էր՝ իր «Հյուսիսափայլ»-ով: Արևելահայ պատմաքաղաքական, ազգային, մշակութային տևական և գորեղ գործոնների հետևանքով լեզվական մշակման ուղիները կանխորոշվեցին «Հյուսիսափայլի» շնորհիվ: Այդ բանում հավատացած էր և դա հստակ գիտակցում էր Նազարյանը՝ «Նահապետը հայոց մեր նոր քերթության» (Զարենց):

Մշակութապես զարգացած լեզուներից փոխառություններ կատարելու Նազարյանի ըմբռնումները 60 տարի հետո նույն խորիմաստությամբ արտահայտում է Վ. Տերյանը: Արևելահայ գրական լեզուն փոխառությունների հարցում ըստ այդմ էլ ընթացավ: Սա արևելահայ լեզվական մշակման՝ արևմտահայերենի նկատմամբ ունեցած առաջին կարևոր տարբերությունն էր՝ առանց ստրկանալու բարբառներին կամ հին լեզվին: Ստ. Նազարյանը դրեց նոր

գրական հայերենի բացառապես ինքնուրույնաբար մշակման խնդիրը և առանձնակի կարևորություն տվեց նոր գրական հայերենի գիտական լեզվառճի մշակմանը: Ազգային գրական լեզվի մշակման ճանապարհին, որպես գրաբարի և օտար լեզուների օգտագործման բացասական երևույթներին հակակշիռ, արևելահայ մշակույթի մեջ 1880-90-ական թվականներից դրվեց ժողովրդական լեզվամտածողությամբ, բառապաշարով գրական լեզուն կենսավորելու խնդիր, և գրական լեզվի ընթացքը որոշակիորեն հակվեց դեպի այս ուղղությունը, որը շարունակվեց մինչև XX դ. 40-50-ական թվերը:

Արհեստագործական անվանումները արևելահայ գրական լեզու մուտք են գործում հիմնականում ոչ մասնագիտական նյութերի միջոցով՝ քաղաքական, հասարակական, ազգագրական և գեղարվեստական գրականության նյութերի բերումով և մեծ մասամբ մամուլում:

Արևելահայ իրականության մեջ արհեստագործական բառապաշարի բառարանագրական գրանցման առաջին արժեքավոր գործը պետք է համարել Գ. Երեցվոխյանի ռուսերեն - հայերեն բառարանը (առաջին տպ. 1855 թ., երկրորդը՝ 1872 թ., գրեթե անփոփոխ): Այս բառարանը թեպետ գրաբար էր և ներկայացնում էր նաև արևմտահայ գրավոր մշակույթի (գրաբար, արևմտահայերեն) արհեստագործական անվանակարգությունը, բայց այնտեղ գրանցված էին նաև արևելահայ ժողովրդախոսակցական արհեստագործական մի շարք բառեր: Արհեստագործական անվանակարգության առաջին ընդարձակ գրանցումը կատարվում է Ա. Հովհաննիսյանի ռուսերեն - հայերեն աշխարհաբար բառարանում (1889-1891 թթ.): Բառարանագիրը, ընդգրկելով արևելահայերենի արհեստագործական բառապաշարը և դրան զուգորդվող ժողովրդախոսակցական, մասամբ նաև բարբառային անվանումները, հետևյալ մոտեցումն է ցուցաբերել. ռուսերեն բառերի համարժեքները չգտնելով ժամանակի արևելահայերենում՝ դրանք ուղղակի վերցրել է արևմտահայերենից (գրաբար, արևմտահայերեն): Արևմտահայերենից և գրաբարից մեքենայաբար

վերցված բառերի զգալի մասը հետագայում յուրացվեց, մնացածը դուրս մնաց արևելահայերենից: Արհեստագործական անվանակարգության լեզվական մշակույթի, այդ բնագավառի բառապաշարի ամենաընդարձակ ընդգրկման և ամենակարևորը կենդանի, իրական արտացոլման տեսակետից անգնահատելի բառարանագրական հուշարձաններ են Դաղբաշյանի ռուսերեն - հայերեն և հայերեն - ռուսերեն բառարանները: Ռուս - հայերեն բառարանը ստույգ արտացոլումն էր XX դ. սկզբների արևելահայ գրական լեզվի և այնքան ընդարձակ ու լիակատար էր, որ արևելահայ մշակույթի մեջ այն գործածական մնաց մինչև XX դ. 30-ական թվականները: Մինչև 20-ական թվականները արևելահայ իրականության սակավաթիվ արհեստագործական անվանումներ են պատահում, որոնք գրանցված չեն Դաղբաշյանի բառարանում, որը նշանակում է, որ ըստ էության ընթանում է տերմինացման, տերմինային հղկման, հոմանշության նվազման մասնակի գործընթաց:

Արևելահայ գրական լեզվի երկրորդ՝ աբովյանական ուղղությունը, նշանակալի լեզվական զարգացում չապրեց: Աբովյանական ուղղության մասին Րաֆֆին գրել է. «Երկար ժամանակ վիպագրությունը նույն նեղ, միակողմանի շավղով ընթանալով, նույն շավղի վրա մնաց և քարացավ, առանց որևէ առաջադիմություն գործելու: Նա չկարողացավ նոր լեզու մշակել, որովհետև գրվում էր գեղջկական բարբառով» (Րաֆֆի, էջ 153): Այս իսկ պատճառով աբովյանական լեզվական հունի մեջ գործող արհեստագործական անվանակարգությունը գոյության իրավունք չունեցավ, այն, սակավ բացառություններով հանդերձ, դարձավ նազարյանական հունով զարգացող գրական լեզվի արհեստագործական բառապաշարի՝ ժողովրդախոսակցական, բարբառային հստակ տարբերակվածություն ունեցող բառաշերտ, որը, գրական լեզվի ազգային կերպավորմանը զուգընթաց, սկսեց արագորեն նվազել:

Մինչև 1920-ական թվականները ձևավորված արևելահայ արհեստագործական անվանումների կառուցվածքները, լեզվաոճական ուղղվածությունը, ինչպես նաև հիմնա-

կան բառապաշարը, բառային ատաղձը, ածանցման միջոցները 1920-ական թվականներից հետո ուղղակիորեն անցնում են արևելահայ գրական հայերենին: Արդի հայերենի արհեստագործական, տեխնիկական - մասնագիտական անվանումների գոյացման համար բավարար հիմք է ծառայել մինչև 1920-ական թվերը եղած լեզվական մակարդակը: Նշված ժամանակից ի վեր՝ արևելահայերենի զարգացումը ցայսօր արհեստագործական անվանումների առումով բնութագրվում է դրանց կադապարների բարդացմամբ ու կատարելագործմամբ, բառաշարային հարստացմամբ և մշակմամբ, ուստի արդի արևելահայերենի տվյալ բառախմբի վերլուծությունը համապատասխան բնույթ և ուղղվածություն ունի:

2. ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՅՐԱՏԱՐԱԿԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1800-1920-ական թթ. ժամանակաշրջանում արևմտահայ մշակույթի մեջ արհեստագործական անվանակարգությունը զարգանում է երկու հունով՝ գրաբարի և արևմտահայերեն գրական լեզվի: Գիտական ընդարձակ և խոր բովանդակությունը լեզվամշակման է ենթարկվում բացառապես գրաբարով, և դա շարունակվում է մինչև 19-րդ դարի վերջը: 20-րդ դարի 10-ական թվականներին տպագրվում է Գ. Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն երկհատոր ստվարածավալ բառարանը, որով արևմտահայ մշակույթի մեջ փակվում է գրաբար բառարանագրության փուլը: Արհեստագործական անվանախումբը իր լայն ծավալով և գիտականությամբ մասամբ է մշակվում կամ գործածվում գրաբար տեքստային շարադրանքներում զուտ արհեստագործական բնույթի նյութերի սակավության պատճառով. գրաբար տեքստում արհեստագործական անվանումներ կարելի է գտնել պատահական գործածմամբ և սակավ քանակով: Արհեստագործական տերմինաբանությունը հարստանում, հղկվում, մշակվում է գերազանցապես գրաբար բառարանագրության մեջ: Չպետք է մոռանալ այն առանձնահատուկ կարևորությունը, որ ունեցել են բառարանները հայ մշակույթի մեջ 18–19-րդ դարերում. «Ձի որպէս տկարանան արուեստագէտք շինել ինչ առանց գործեաց, նոյնպէս ուսումնասէրք արտադրել ինչ ըստ կարգի՝ առանց օրինաւոր բառարանի» (Մխ. Աբբա, Հայկազ բռ., «Բան առ ընթերցողս», էջ 4): Բառարանը ոչ միայն «քանոնն էր» (Մխ. Աբբա) լեզվի, այլև առաջին հերկարարը լեզվապես կարոտ անդաստանի: 19-րդ դարից արդեն օտարները չէ, որ զբաղվում են հայ լեզվի բառարանագրությամբ, այլ ազգային ոգով համակված և մեծատաղանդ հայ մտավորականները: Նշված ժամանակաշրջանում եվրոպական լեզուներին առնչվող գրաբար հայ բառարանագրության գագաթներն են Մ. Ջախջախյանի իտալերեն-հայերեն-տաճկերեն և հայերեն-իտալերեն բառարանները (1804, 1837), այնու-

հետև՝ 1846 թ. տպված նոր իտալերեն-ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն բառարանը, որի հեղինակը Մխիթարյան միաբանության հայրերն են, հաջորդը՝ Նորայր Բյուզանդացու ֆրանսերեն-հայերեն բառարանը (1884): Բառարանագրական այս շարքը պսակում է Մանվել Քաջունու «Բառգիրք գիտութեանց և արուեստից և գեղեցիկ դպրութեանց» երկհատոր հանրագիտարանային բառարանը: Գուիտոն Լուսինյանի «Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ» (Փարիզ, 1900, 1903 և Կ. Պոլիս, 1909–1910) պարունակում է հայոց լեզվի ամենաճոխ բառամթերքը, «որ սակայն ունի նաև իւր մեծ թերութիւնները, հեղինակի կարճ հայակերտ բառեր որոնելու, բառակրճատելու և երբեմն տարօրինակ նորածներ կերտելու ծգտումով» (Տաշեան 1926, էջ 48): Այսպիսով, լեզվական արվեստը, որ միշտ առաջնորդող է եղել գրաբար բառարանագրության մեջ, ավարտվում է Քաջունու բառարանով: Մեր աշխատանքի բուն խնդիրը չէ վերլուծել այդ բառարանների կազմման շարժառիթները, բովանդակությունը, հեղինակների բառակերտման ըմբռնումները, իրականացման արվեստը, բառատաղծի, բառակազմության մշակման, հոմանշային դաշտի, դրա փոփոխության և այլ խնդիրները, որովհետև մեր նպատակը արհեստագործական անվանումների քննությունն է, և այս ողջ նախապատմությունը նպատակ ունի միայն մատնանշելու այն բազմաթիվ մանր ու մեծ վտակները, որոնցից սնվել և կազմվել է արդի արհեստագործական և գիտատեխնիկական տերմինաբանությունը: Այդ իսկ պատճառով ամենաընդհանուր և ամենաեական գծերով ենք բնութագրելու 19-րդ դարի գրաբար արհեստագործական անվանումների զարգացումը:

Ջախջախյանի բառարանում մշակվել և մեծապես հարստացել է 18-րդ դ. արհեստագործական բառապաշարը: Այս բառարանով առաջին անգամ լայն չափերով հայ մշակույթի մեջ է մուծվում եվրոպական գիտական, արհեստագործական, տեխնիկական բովանդակությունը: Այս առումով այն եվրոպական մշակույթին հաղորդակցող առաջին գիտական բառարանն է և նախատեսված է ոչ «դեռավարժների կամ ռամկաց» համար. «Ի յօրինել անդ զԲառա-

րանս՝ ընտրելի դատեցանք կարգել զսա ո՛չ ի պէտս դեռավարժից կամ ռամկաց և եթ, որոց շա՛տ էր ունել ՚ի ծեռին գհամառօտ բառագիրք բացատրիչ հասարակագոյն բառից, և մեզ իսկ դոյզն վաստակ և սակաւաքիրտն ջան, այլ առաւել դէտական կալաք ՚ի պէտս զարգացելոց և հետամուտ բանասիրաց, որք դեգերին, կամ դեգերել ախորժեն յազգս ազգս դպրութեանց, և ՚ի զանազան իտալական մատենաս նախնի պերճախօս մատենագրաց, և ՚ի բազմանիւթ գիրս արդեաց ամենազան գիտութեանց և արհեստից ՚ի հմտանալ կամ ՚ի փոխատրել զայնոսիկ ՚ի հայ բարբառ» («Յառաջաբան», էջ Ե-):

Բառարանի թուրքերեն մասը որոշակի նպատակադրում ունի. թուրքերենը, որին ընտելացել և հայ բառերի հետ շաղախված օգտագործում էր մանավանդ արևմտահայութիւնը, ծառայեցնել հայերենի վերականգնմանը, վերահաստատմանը. «Ի դիրել համբակաց և ռամկաց, կամ որոց չեն գիտակ հայ բարբառոյն՝ զկիրառութիւն Բառարանիս, կամեցաք յօրինել զսա Եռալեզուեան, յարելով և զտաճիկ բարբառ ըստ հասարակագոյն սովորութեան ռամկին. բայց չեղաք առաջի անսովոր՝ դժուարին կամ ուսումնական բառից, որոց տեղեկութիւն անկ է գիտնականաց և եթ. նոյնպէս չեղաք առաջի ամենայն զանազան նշանակութեանց մի և նոյն բառի, կամ առաջի ամ ածանցեալ անուանց. այլ սովորաբար նշանակեցաք առաջի հասարակագոյն բառից. բազում ուրեք ևս եղաք զտաճկականն ի բացատրութիւն և եթ հայկականին, կամ առ դիւրագոյն իմացունմ» (ն. տ., էջ Ը-): Հայերեն գիտական բառապաշարի, հատկապէս արհեստագործական բնագավառի բառախումբը լեզվական գիտակցում է դառնում և վերստին գործածվում, գործածական է դառնում թուրքերենի միջոցով: Եփրեմ Չազըճյանի՝ 1846 թ. տպված հայերեն-թուրքերեն բառարանը գրախոսելիս հողվածագիրը վերջում նշում է. «Որովհետև գործքին կամ հեղինակին դիտումը տաճկերէն սորվեցնել չէ, հապա տաճկերէնը իբրև գործիք առնելով՝ հայերէն սորվեցընել» («Եվրոպա», էջ III):

Ժամանակի եվրոպական զարգացած լեզուներից մեկին՝ իտալերենին, առնչվող այս բառարանը արհեստագոր-

ծական նախորդ շրջանից (18-րդ դ.) ժառանգված բառապաշարի մշակման, բովանդակային և լեզվական հարըստացման առաջին հիմնավոր գործն է: Բառարանը նախորդ շրջանի բառապաշարը հարստացրել է մոտ 300 նոր հասկացության արհեստագործական անվանումներով, որոնց մեծ մասը գործածական դարձավ արևմտահայ և արևելահայ գրավոր մշակույթում, և զգալի մասը այժմ էլ մեր արդի արհեստագործական և տեխնիկական բառապաշարի գործածական բառաշերտին է պատկանում: Արհեստագործական բառերի զգալի մասը ուղեկցվում է փակագծում տրվող հակիրճ բացատրություններով կամ սահմանումներով՝ ելնելով հասկացության նորությունից կամ անսովորությունից և կամ բարդությունից. ստորև բերվող օրինակներում մենք դրանց մեծ մասը դուրս ենք թողնում աշխատանքի ծավալը անհարկի չմեծացնելու համար: Նույն նկատառումով այս բառարանից բերվող օրինակներից հանել ենք նաև իտալերենով տրվող տերմինը:

Նորակերտ բառեր. հրացանագործ: թիւֆեկձի, ոսկեման (ոսկու թելեր քաշող և հիւսող), ձուլող թնդանօթից: թօփձու, բաղիստրագործ, քսակագործ, զառեկագործ, (ոսկւոյ և արծաթոյ). թիթեղնագործ: վառաղգձը, ոսկեզօծարար, անրագործ. յօրինօղ փողպատից, դրուագումն (յատակաց, կամարաց, ևւն), թղթագործ, բւեռագործ: էսիէրձի, գորգագործ. օթոցագործ, գուրպայագործ, որ հիւսէա, թաղարագործ. կոնքագործ, խողովակագործ, որ գործէ ագուգայո վասն ջրմղաց, ոսպնիագագործ: ապան օգձու, դրամանենգ, գալպագան, իլագործ կամ իլիկագործ, մկրատագործ, պանրագործ, բաճկոնագործ, փոնապան, հնոցեփեաց, կղմինտրագործ, մուշտակագործ: քիւրիձի, թաթապանագործ: էլտիվէնձի, փորագրող, ճարտարագործ, մեքենագործ, լապտերագործ, լուսանկարութիւն, անկողնագործ. տէօշէկձի, հանքագործ, սուզակ. ծովասոյգ: տալկձը մետաղագործ, - ութիւն, ակնոցագործ, ժամագործ, արուրագործ: փիրինձի, վառօդագործ: պարութձու, սանտրագործ, թարգաձը արծանագործ. անդրիագործ. արծանածոյլ, պրօնագործ: թիֆտիկձի, հայելագործ: այնաձը, օձա-

ռագործ. սապունճու, հեռագրութիւն, առագաստագործ, դրամափոխ, պայուսակագործ: թերքիճի, սանդալագործ, կառագործ. հիւսն կառաց:

Բառարանագիրը առաջին հեղինակն է, որ, թեպետ հարևանցի, օգտվել է Նոր հայկազյան բառարանից, որը դեռևս ձեռագիր վիճակում էր և 1837 թ. տպագրվածից մոտ երեք անգամ ընդարձակ ծավալով էր, իր մեջ ամբարել էր հայոց լեզվի անհուն գանձերը, նաև մշակում է ժառանգված նյութը: Գրաբարյան լեզվատարբերակային կողմնորոշման մասին թռուցիկ նկատենք, որ հեղինակը (ինչպես և ժամանակի կողմնորոշումն էր), ուղղորդվելով Հին հայկազյան բառարանում մշակված պարզ գրաբարի նորմով և զգացողությամբ, նկատելի ընդարձակում է և՛ բառակազմության, և՛ բառական ատաղձը՝ նպատակ ունենալով գրաբարի գանձերի ավելի լայնորեն օգտագործմամբ առավել ճշգրիտ, առավել արտահայտիչ գիտական լեզվի մակարդակ իրացնել, համարժեք դարձնել գիտական լեզվի արտահայտչական արվեստը կենդանի լեզվին: Ահա այս հանգամանքներով պայմանավորված՝ նախորդ արհեստագործական նյութը այս բառարանում մշակված է բառընտրության, բառախմբային փոփոխության, բառատաղձի և բառակազմության տեսակետից: Առաջին ամենաականառու առաջընթացը արհեստագործական բառերի ածանցային համակարգի համակարգայնացման, միասնականացման միտումն է. այսպես, մոմակերտ – մոմագործ (ՀՀԲ), սալագործ – սալարար (Զ.), սալագործ, մեքենայագործ – մեքենայարար –մեքենագործ, մեքենագիտ, մուշտակակար – մաշկեկար – ճոն – մուշտակագործ, կղմինդրաշեն – կղմինտրար – կղմինդրագործ են:

Երկրորդ ականհայտ երևույթը նախորդող նյութի հոմանշության նվազումն է, որի հետևանքով ընդհանուր գործածության անվանումները տերմինային ճշգրտություն են ստանում: Այսպես, ՀՀԲ-ի **մուշտակակար, մաշկակար, մորթեգործ, խազախորդ**, բառերի դիմաց Զախջախյանն ունի միայն **մուշտակագործ**:

Հետաքրքիր է բառային մշակումը. թուրքերեն **օյմա-ճը**-ն ՀՀԲ-ն ունի **փորոքարար, դրուագարար** ևն, Զախ-

ջախյանը կերտել է **փորագրող**, որ և կենդանի է այժմ:

(ՀՀԲ) պատենագործ,- արար,- շէն – (Ջ.) պարենագործ
// բռիչ, բռարար, սպիտակարար, սպիտակիչ – (Ջ.) բռիչ,
բռարար // արծնարար, արծնագործ, արծնիչ, յղկիչ, փայլե-
ցուցիչ, պայծառացուցիչ – (Ջ.) յղկիչ, ողորկիչ: ճիլաճի //
քարագործ, քարահատ քարակիտր, քարակտուր, քարա-
կուռ, քարակոփ, վիմակոփ, վիմագործ, վիմահատ, գաղա-
տոս – (Ջ.) քարակոփ, քարահատ. գաղատոս // կիտուկա-
գործ, կիտուածարար: մինէճի – (Ջ.) կիտուկագործ ևն:

Նախկինում գրաբարի մեջ չեղած, սակայն խոսակցա-
կան ձև ունեցող հասկացությունները «գրաբարակցվում»
են: Այսպես, Ջախջախյանը կերտում է **փքագործ** բառը ժո-
ղովրդական խոսակցության **փուքս շինող** բառից, **բրդգգիչ՝**
բուրդ գգող բառից ևն: Արհեստագործական հասկացու-
թյունների մեծ մասը արդեն կար և լեզվական դրսևորում
էր ստացել, մի մասն էլ տակավին արհեստային որոշա-
ցում չէին ստացել՝ արտադրատնտեսական թույլ զարգա-
ցած հարաբերությունների և տնտեսավարման այլաձևու-
թյան պատճառներով: Սրանք հետագայում արհեստներ
ընկալվեցին տնտեսական հարաբերությունների զարգա-
մամբ, և Ջախջախյանի բառերը լավագույնս համապա-
տասխանեցին այդ նոր հասկացություններին (պանրա-
գործ, պղնձածույլ, թղթագործ ևն): Բառարանում արհես-
տագործական հասկացությունների որոշ մասը եվրոպա-
կան մշակույթի ոլորտին են պատկանում կամ եղած ար-
հեստների ստորաբաժանումներն են նշանակում. գծագ-
րող: ռէմէսճի, սանձագործ: կէմճի, մկրատագործ: մաքառ-
ճը, փերեզակ երկաթոյ, կնքագործ: մօհիւրճու, թմբկագործ,
հիւսն նաւուց, լուսացող սկուտեղաց, դոմաճագործ: էվրիշ-
տէճի, միտալախոյզ, սափորագործ, ոսկեզօծարար մոր-
թուց, որ ոսկով օծանէ զմորթս: զառեկան, հրարուեստու-
թիւն կամ հրագործութիւն, յօրինօղ հովանոցաց, թիագործ:
քիւրէկճի, դրուագիչ արծաթով. որ պատէ արծաթով, պղն-
ձագիր. այսինքն փորագրող պղնձոյ. փորագրող, մաքրիչ
ջրհորաց, ոսկրագործ. քէմիքճի, փորձիչ. ոսկեփործ և այլն:

Այս բառապաշարը օգտագործվեց թարգմանական

գրականության մեջ և մասնագիտական տեքստերում, հետագայում, տնտեսական զարգացմանը զուգընթաց:

Այստեղ առաջին անգամ լայնորեն օգտագործված է **-վաճառ** բաղադրիչը. հայտնի է, որ եվրոպական լեզուներում և ռուսերենում արտադրողը և վաճառողը մեկ ձևով են արտահայտվում: Հայերենում **-վաճառ** բաղադրիչով բառերի ընդարձակ գործածությունը իհարկե եվրոպական լեզուների հետ է առնչվում (ակնոցավաճառ, դփավաճառ, քսակավաճառ, դոմաճավաճառ, մկրատավաճառ): Անշուշտ, բառարանում հասկացություններ կան, որոնց արտահայտությունը ճշգրիտ գիտական չէ, կամ այդ կողմը տարտամ ու թույլ է, հազվադեպ չունեն նաև տերմինային դրսևորում. Zzie՝ Յօրինող պաստառակալաց: հալճը, կերպարանիչ. արարող կազմից, Modelatore Որ գործէ գկադապար: Կերպարանիչ են, իմաստային պատճենումների գրեթե չկան. («grosseria խոշորագործութիւն. (է արիեստ գործելոյ յոսկւոյ, կամ արծաթոյ խոշոր գործածս): Արիեստագործական անվանումների ստացվածքը հետագայում մշակելու, ընդարձակելու գործընթացը հատուկ է գրաբարի ոլորտում զարգացող գիտական բառապաշարին: Փաստորեն լեզվաքննության համար կարևոր են դառնում վերը նշված գործընթացների իրականացման ուրույն ուղիների բացահայտումը, լեզվամշակույթի առաջընթացի հարցերը՝ մի կողմ թողած մանրամասնությունները: Այսպես, օրինակ՝ Abborzature Որ կազմէ զուրուականն. գծագրող. ստուերագրող: // Abborzatura Կազմութիւն ուրուականին. ուրուականն գծագիր. գծագրութիւն. ստուերագրութիւն: ռամկ. թաւազ: // Affetatura Արիեստ խորշանկելոյ զկտաւս: // Coreggiajo Յօրինող մաշկեղեն գօտեաց: // Confettatore Յօրինող, կամ վաճառող քաղցրաւենեաց և շաքարեղինաց: // Tavolacciajo Յօրինող փայտակերտ վահանաց: // Goñfia Որ գործէ զապակի շնչով ի բոց ճրագի:

Ազգային-քաղաքական ուղղվածության եվրոպական միտումը, որը կողմնորոշում դարձավ 19-րդ դ. 60–80-ական թվականներից, դրա հետ կապված՝ եվրոպական գիտական և մշակութային արգասիքները յուրացնելու եռան-

դուժ գործունեությունը 19-րդ դարի գրաբարի առջև դնում են մեծամեծ խնդիրներ՝ անհավատալի չափերով հարըստացնել 18-րդ դարից ավանդված միսիթարյան պարզ գրաբարի տարատեսակը, կատարելագործել տերմինաբանական մշակույթը: Այս խնդիրների առաջին և պատշաճ կատարումը մենք տեսնում ենք Մ. Ջախջախյանի իտալերեն-հայերեն բառարանում: Բառարանագիրը ոչ միայն հմտորեն օգտագործել էր նախկինից ժառանգված բառապաշարը, այլև գրաբարի հմուտ մասնագետի և գրաբարի ոճերի՝ վարպետությամբ տիրապետող հեղինակի ընտրողությամբ բառարանի մեջ էր ամել նորակերտ բառապաշարը: Բառարանագիրը «Յառաջաբան»-ում բառարանի աղբյուրների վերաբերյալ հետևյալն է մատնանշում. «Ուր ուրեք ո՛չ գտաներ բառ ինչ հայկական յատուկ և համեմատ՝ ի տպագրեալ բառարանին (նկատի ունի Հին հայկազյան բառարանը – Լ. Ա.), աշխատութիւն յանձն առաք... սուղ ժամանակիս խուզել և դեգերել ի ճոխագոյն ձեռագիր բառարանին, (գորոյ յաջողեցէ՛ տէր գկատարումն և գտպագրութիւն)»: «Ձեռագիր բառարան»-ը 1837 թ. տպագրված Նոր հայկազյան բառարանի՝ ծավալով դրանից երեք անգամ ընդարձակ ձեռագիր բնագիրն էր: Ժամանակի պարզ գրաբարի բառապաշարը, որը հիմնականում բառարանագրական արձանագրում էր ստացել Մխիթար Աբբայի բառարաններում, չէր բավարարում արդի եվրոպական միտման հետ կապված լեզվական պահանջները մանավանդ նոր և նորագույն տերմինաբանության առումով:

Ջախջախյանը ըստ հարկի և «ըստ ներելոյ սուղ ժամանակին» ավանդված պարզ գրաբարի բառապաշարը լրացրեց գրաբարի հին շրջանի բառերով, մեծ արդյունավետությամբ և որակի կարգավորմամբ օգտագործեց պարզ գրաբարի բառակազմությունը և գրեթե չկիրառեց գրաբարի հին շրջանին հատուկ բառակազմական ձևեր և միջոցներ: Այսպիսով, լեզվական կարիքների բավարարման համար պարզ գրաբարի ներքին բառակազմական միջոցների գործուն օգտագործումից բացի՝ անմիջական աղբյուր էր դառնում գրաբարի հին շրջանի բառապաշարը: Կար մի կարևոր խնդիր նույնպես. 18-րդ դարի բառապաշարում

«գիտուն ոճի» առումով տարբերակվում էին «ուսումնական» և «հասարակ» բառային շերտավորումներ: Առաջինը հիմնականում լատինաբան «գիտական ոճի» արտադրանքն էր և ամենաբարձր գիտական արտահայտչության համարում ուներ. այդ բառաշերտը սերտաճում էր հունաբան դպրոցի գիտական բառապաշարին, բառակազմական և բառատաղծային ընտրությամբ բավականին համընկնում էր նրան՝ անշուշտ ներկայացնելով որպես դրա հոռի շարունակություն, որը իբրև թե արդարացված էր նոր գաղափարների, հասկացությունների ճշգրիտ արտահայտմամբ:

1800–1920 թթ. արևմտահայ իրականության մեջ այն ժամանակահատվածն էր, երբ գրաբարի մեծագույն բառարանագիրները նաև մշակել էին իրենց ժամանակի գիտական ոճն ու բառապաշարը: Նրանց հետ գործում և հմտանում էին իրենց մեծատաղանդ աշակերտները՝ Մ. Ջախջախյանը, Արսեն Բագրատունին, Հյուրմուզյանը և ուրիշներ: Լատինաբան ոճի, գիտական բառապաշարի մասին առաջինը բացահայտ արտահայտվել է Ա. Բագրատունին և, իրավամբ, տվել սպառիչ բնութագրում. «Առ մեզ յերեք տասան և ի չորեքտասան դարին ծաղկէին իմաստասիրական բանիւք վանական վարդապետ, Վարդան մեծն, Յովհան Երզնկացի, Եսայի Նչեցի, և այլք. բայց սոցա դեռ անծանօթ էր դպրոցական ոճն, որ եմուտ ճարակեցաւ յազգս մեր ի նմին չորեքտասան դարուն ի Բարթողիմէոսէ լատինացւոյ, ի Ներսիսէ Պաշինց և ի Յակոբայ թարգմանէ և ի Զակեցւոց, մանաւանդ ի գրոցն Առաքինութեանց և Մոլորութեանց. և այնմ ոճոյ իբրև լաւի իմիք և գիտնականի հպատակեցին և այլ բանիբունք և իմաստասերք ժամանակին, քաջ ի բաց անկեալք ի լուսահետ շաւղաց նախնի ճարտարացն. և սակաւք ոմանք ազատ մնացին ի նորաձևութենէ անտի, մանաւանդ թէ յապականութենէ. որով և պղծեցաւ ոչ միայն իմաստասիրութեանն և կարգաբանութեանն ոճ այլ և հայերեն յստակ շարագրութեանն» (Արուեստ Բանական կամ Տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սոււէի. փոխեաց ի Հայ Հ. Արսէն վ. Անթմուեան Մխիթարեանց. ի Վենետիկ, 1825, էջ 46):

Առաջին անգամ հայ մշակույթի մեջ քննության և զգուշավոր քննադատության է ենթարկվում հունաբան հեղի-

նակների գիտական ոճի և բառապաշարի օտարաբանությունը: Անշուշտ, զգուշավոր վերաբերմունք կար հունաբան ոճի և բառապաշարի հանդեպ նաև 18-րդ դ., սակայն բացահայտ գնահատում և հրահանգներ այդ ոճի մասին չէր լինում: 19-րդ դարում արտահայտման գիտական ոճի վիթխարի պահանջները կարող էին տերմինաբանության զարգացմանը «հունաբան» հակում տալ, այդ պատճառով բացահայտ ահագանգվում էր: Ա. Բագրատունին, նոր գործի մեջ ոչինչ պարսավելի չասելով մինչև հունական հեղինակները եղած մատենագիրների մասին, գրում է. «Ձկնի նորա (Եզնիկ Կողբացու – Լ. Ա.) պայծառացաւ Դաւիթ Անյաղթ ներգինացի գրովքն Սահմանաց, յորում ոչ սակաւ հմտութիւնք երևին և կարգաբանութիւն. թարգմանեաց և մեկնեաց և զգիրս ինչ Արիստոտելի, եթէ արդարեւ մեծին Դաւթի իցեն այն թարգմանութիւնք և լուծմունք, բարի կամելով առնել ազգին. բայց եթէ ոչ այնպիսի այլանդակ ոճով և լեզուաւ էր վարեալ յայն շարագրածս, թերեւս փոքր մի աւելի օգուտ գործէր» (ն. տ., էջ 36):

Փոխառությունների վերաբերյալ ևս հստակ դիրքորոշում է մշակվում, որովհետև գրաբարի առաջ լրջորեն ծառանում է փոխառությունների խնդիրը մանավանդ գիտական բառապաշարի ոլորտում: Մ. Ջախջախյանի բառարանում **հանրահաշիվ** բառը (ստեղծվել է 19-րդ դարի 60-ական թվերին) ներկայացված է հին միջնադարյան փոխառությամբ՝ ալճեպրա, որը կայուն գործածական բառ էր նաև գրաբարում: Այս փոխառյալ բառի մասին Բագրատունին հետևյալ նշումն ունի. «Գրահաշիւ ընտենք կոչել զԱ՛լճեպրա, զոր ամենայն ոք դիւրավ իմանայ ազգ ինչ հաշուի լինել գրովք. զի հաւանեալ ենք ազգային ծայնիւք իմանալի անուանս տալ իրաց. քան այլազգիս, զի մուրացածիւ անիմայ մնալ և զլեզուն խժոժել» (ն. տ., էջ 72): Մեր խնդրից դուրս է ներկայացնել 19-րդ դ. առաջին կեսին մշակված տերմինագիտական զանազան խնդիրները: Վերը շարադրվածը միայն նպատակ ուներ ներկայացնելու այն ակունքները, որոնցից 19-րդ դարի 40-ական թվերին գոյացավ գրաբարի մշակույթի մեջ այն հեղաշրջումը, որը կոչվում է դասական

հայերենի գյուտ: Մինչ այդ վերը նշված ուղիով հանդարտ առաջանալով՝ 1840-ական թվականներին ինչպես և ողջ գիտական բառապաշարը, այնպես էլ արհեստագործական անվանախումբը ժամանակավորապես հեղաբեկման է ենթարկվում:

1834–1837 թթ. տպագրվում է Մ. Ջախջախյանի (Ջախջախեան, 1834-1837) երկրորդ կոթողային գործը՝ հայերեն-իտալերեն բառարանը, որը, հիրավի, գանձարանն էր հայերեն և իտալերեն լեզուների՝ «գանձ երկաքանչիւր լեզուաց» («Յառաջաքան», էջ 1): 1837 թ. տպվում է «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր մեծաաքանջ բառարանը: Արհեստավորանիշ անվանակարգի առումով նոր բառեր Ջախջախյանի բառարանում չկան, սակայն այստեղ՝ Նոր հայկազյանում, կան երկու տասնյակից ավելի արհեստավորանիշ անվանումներ, որոնք չկան Հին հայկազյանում: Դրանք հիմնականում հնագույն, սակավ գործածված, հետազայում այլ համարժեքներով փոխարինված բառատարբերակներ էին և ժամանակի արհեստավորանիշ անվանումների գործուն համակարգի մեջ չեն ամրանում, թեպետ մասամբ կիրառվում են: 19-րդ դարի գրաբարի ձևավորված, հարաբերականորեն փակ բառապաշարային համակարգը չնայած միտումնավոր կիրառման համառ ջանքերին, չէր ընդունում հին գրաբարի արհեստագործական անվանումները: Ուստի մանրամասն անդրադարձը այս երևույթներին ավելորդ ենք համարում:

Լեզվամտածողության արտահայտման ազգային ձևի խնդիրը, որը գերակա գաղափար էր Մխիթար Աբբայից ի վեր, 19-րդ դարում, մանավանդ դարակեսին, երբ գրական արևմտահայերենը «սպառնում էր» շուտով միահեծան գրական լեզու դառնալու, որոշակի նոր իմաստ ստացավ. Մխիթարյանների համար գրաբար լեզվամտածողության անադարտ արտահայտման ընդհանրական ազգային ձևը սկսեց ըմբռնվել որպես այն միակ ամրագույն հենարանը, որի վրա հաստատված լինելով՝ գրաբարը կարող էր գոյատևել և ազգի ընդհանուր լեզու լինել (ակնհայտ էին արևելահայերեն և արևմտահայերեն ճյուղավորումները):

Վիեննական Մխիթարյանների կողմից դասական հայերենի՝ ոսկեդարյան գրաբարի լեզվամտածողությունը, արտահայտչամիջոցները և կերպերը վերածնելը, հարություն տալը այս ներքին շարժառիթն ունեին: Վիեննայի Մխիթարյանների լեզվական մշակույթը ուսումնասիրվել է իրենց՝ վիեննական դպրոցի հեղինակների և այլոց կողմից (Մենկիշեան, 1903, էջ 116–129: Ակինյան, 1934, էջ 148–154: Աճառյան, հ. 2, էջ 86–93): Հայերեն նորագույն տերմինաբանության ստեղծման սկզբունքները և համակարգված դրսևորումները, որոնց ծանոթությունների, դիտողությունների, դիտարկումների ձևով ցանուցիր պատահում ենք մինչ այդ եղած 18-19 -րդ դարի հայ մատենագրության մեջ, առաջին անգամ ամբողջական շարադրվում է Վիեննայի Մխիթարյան դպրոցի կողմից: Մեր խնդրից դուրս է դրանց հանգամանալից անդրադառնալը. միայն ասենք, որ գլխավոր ուշադրությունը սևեռվում է բառային ատաղծի, բառընտրության, բառի գիտական արտահայտման ճշտության վրա: Փոփոխությունների և նորարարությունների դեպքում առաջնորդվում են խստագույն չափավորության սկզբունքով. «Աշխատ եղեաք զգոյշ լինել և զգուշացուցանել յամենայն օտարոտի և ի մուրացածոյ բանից և անուանց, որ սպրդեցին մտին ի լեզու մեր, յամենայն խոտոր նշանակութեանց, որ և ի միտս բազմաց մինչև ցայսօր տնկեալ կան» (Nuovo Dirionasio Italiano–Francese–Armeno–Turco, Compito dai padri della Congregazione Mechit aristica. Vienna, 1846, Յառաջաբան):

«Վիեննական, ոսկեդարյան» գյուտի գլխավոր հեղինակներն էին Հովսեփ Գաթըրճյանը, Ղուկաս Հովնանյանը, Մադաթիա Գարագաշյանը, նրանց գործակցում էին Հ. Ազարյանը, Փ. Ճամճյանը, Ս. Էմինյանը և ուրիշներ, որոնք ուսումնասիրելով գրաբարը, առանձնացնում են երկու տարբերակ՝ դասական և հետդասական: Նրանք բանասիրական քննության են ենթարկում դասական հայերենի բառապաշարը, բառակազմությունը, քերականությունը, կազմում են դասական հայերենի բառարան, որը ծեռագիր վիճակում պահպանվում է Վիեննայի Մխիթարյան գրադարանում,

կատարում են բառաձևային, իմաստային մեծաքանակ ճշգրտումներ: Այդ «դասական հայերենի» բառապաշարով, քերականությամբ և առհասարակ լեզվամտածողության արտահայտչաձևերով կատարում են թարգմանություններ հունահռոմեական հեղինակներից և այդ լեզվով էլ շարադրում գրաբար ինքնագիր երկեր: Ժամանակի մշակութային կյանքին վերաբերող նյութերը քիչ են (Ղ. Հովնանյանի «Գիտութիւն տէրութեանց Եւրոպայ» (հտ. Ա, 1847), Հ. Գաթըրձյանի «Տիեզերական պատմութիւն» (հտ. Ա, 1849) աշխատությունները): Վիեննական դպրոցի աշխատանքները, լայն չափերով առնչված չլինելով ժամանակի գիտական, արհեստագործական, տեխնիկական բնագավառներին, հստակ պատկերացում չեն տալիս, թե որքանով է դասական հայերենի գիտական ոճը բավարարում ժամանակի եվրոպական գիտատեխնիկական բովանդակությունը հայերենով պատշաճ արտահայտելու պահանջները: Միակ աշխատությունը, որը անդրադարձնում է ժամանակի գիտատեխնիկական բովանդակությունը, 1846 թ. տպված իտալերեն-ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն նոր բառարանն է: Այստեղ են միայն բացահայտ երևում վիեննական դպրոցի դասական հայերենի բառապաշարը, բառակազմությունը, դասական հայերենի լեզվամտածողության օգտագործման բազմազան ձևերը հատկապես նոր բառեր կերտելիս: Այդ բառարանը հեղինակ չունի. այն խմբային աշխատանքի արդյունք է, թեպետ հատկապես օտար լեզուների մասով մեծ գործ է կատարել բազմաթիվ լեզուների քաջատեղյակ, փայլուն տաղանդի տեր վաղամեռիկ Փիլիպոս Ճամձյանը:

Այս բառարանի արհեստագործական հասկացությունները, բնականաբար, հիմնականում համընկնում են նախորդ շրջանին, սակայն դրանց արտահայտման կերպը միայն 15–20 %-ով է նույնանում նախորդ արհեստագործական բառապաշարին: Այդ նույնական կամ հարանման ձևերը, պարզվում է, այն բառերն են, որոնք ստեղծված են եղել գրաբարի դասական շրջանում և վերաբերում են գրաբարի՝ 18–19-րդ դարերի շրջանում ստեղծված անվանումներ:

րին՝ ապակագործ, ապակարար–ապակեգործ // իւղե-
 փեաց, իւղագործ (Ջ., Ճ.) // ոսկերիչ, արծաթագործ (Ջ., Ճ.)
 // ակնագործ (Ջ., Ճ.) // ասրագործ, ասուագործ–ասրագործ
 (Ճ.) // խաղախորդ, մորթեգործ // խոյրարար (Ջ., Ճ.) // մշակ,
 երկրագործ, հողագործ // այգեգործ, մշակ, այգեպան–այգե-
 գործ // բրուտ, կաւագործ: 18–19-րդ դարերում ստեղծված
 մի քանի համընկնող բառեր կան՝ ճախարակագործ (Ջ.,
 Ճ.), թմբկագործ // փորձիչ (ոսկւոյ) // թամբագործ // վահա-
 նագործ // սանտրագործ–սանդրագործ // սանդալագործ
 (Ջ.) – սանդաղագործ, կղմինտրագործ–կղմինդրագործ և այլն:
 Բերված օրինակներում կան բառային տարբերակներ,
սանտր, կղմինտր բառերը ժամանակին նորմատիվ ձևեր
 էին, սակայն վիեննական բանասերները պարզել էին, որ
 դրանց նախնական առաջին վկայությունը **սանդր, կղմինդր**
 ձևով է: Այդպես նրանք նաև ճշտեցին, որ նախնական վկա-
 յությամբ **ապակեգործ, ապակագործ** ձևերը նույն հաճա-
 խությունը չեն ունեցել դասական հայերենում: Նույնը վե-
 րաբերում է **խեցագործ–խեցեգործ** (Ճ.), **սանտալ–սանդալ**
 ձևերին: Հեղինակները պարզել էին, թե որն է ավելի գործա-
 ծականը և հինը, ինչը ՆՀԲ-ն տվել էր զուգահեռաբար:

Ասացինք, որ արհեստավորանիշ անվանումները սույն
 բառարանում տարբեր են նախորդ ժառանգված բառապա-
 շարից. այդ տարբերությունները բառակազմական են, բա-
 ռատաղծային, բառընտրանքային և մասամբ ածանցային:
 Բառակազմական տարբերությունները ընդգրկում են այս
 խմբի հիմնական զանգվածը, և տարբերությունն այն է, որ
 համադրական բաղադրությունը վերածված է շարույթային
 (վերլուծական) բաղադրությունների, և ոչ սակավ դեպքե-
 րում դրանք հանդես են գալիս նախադասության ձևով, որը,
 գրաբարում լինելով պարզ նախադասություն, արդի լեզվա-
 կան կանոնով բարդ ստորադասական նախադասություն է:
 Այս երևույթի մասին պատկերացում տալու համար բերենք
 մի քանի օրինակ, որոնք կգուգադրվեն Ջախջախյանի՝ հա-
 մապատասխան արհեստագործական բառերի հետ. առա-
 գաստագործ, առագաստավաճառ – գործիչ, վաճառող ա-
 ռագաստից // պայուսակագործ – կազմիչ, յօրինիչ պայու-

սակաց // հայելագործ – ճարտարապետ հայելույ // օշարակագործ, օշարակավաճառ – որ յօրինէ զօշարակ // ոսանիագագործ – ճարտարապետ երենաց // տփագործ, տփավաճառ – որ գործէ, վաճառէ տուփս // մտրակագործ – արուեստագետ կարթի, խթանի կաւշկաց են:

Ե՛վ գրաբարում, և նոր գրական հայերենի ու առհասարակ հայերենի որևէ համակարգում (միջին հայերեն, բարբառներ) գործող անձի իմաստի արտահայտման ելակետային կառուցվածքը նախադասությունն է. նոր գրականում այն ստորադասական նախադասության որոշիչ երկրորդական նախադասությունն է: Գրաբարը գերադասում է այդ իմաստը արտահայտել պարզ նախադասությամբ՝ **որ** հարաբերական դերանվամբ և բայի դիմավոր ձևով («Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ», «Ձեզ լսողը՝ ինձ է լսում»): Գրաբարի հատկապես դասական շրջանում **որ** հարաբերական դերանունը տակավին այնքան թանձրացական իմաստից զերկված չէ, ինչպես այն հանդես է գալիս նոր գրական հայերենում, որի առկայությամբ է պայմանավորված պարզ նախադասությամբ գործող անձի իմաստ արտահայտելը որպես նորմատիվ ձև: Հաճախ չարտահայտված հարաբերյալի փոխարեն բայի վրա դրվում է **Ն** հոդը. օրինակ՝ «... Որ շարժին և փոփոխին (=շարժվողը և փոփոխվողը)՝ չէ էական» (Եզնիկ Կողբացի, I, Բ, էջ 9): Գրաբարի դասական շրջանում գործող անձի՝ նախադասությամբ արտահայտման ձևը լեզվական նորմատիվ երևույթ է և ենթակայական դերբայով, **-իչ** մասնիկով դերբայական ձևով և այլ ածանցներով (մահացու=մահացող, գործօն=գործող են) արտահայտման ձևերի նկատմամբ գերադաս բաշխական հարաբերության մեջ է գտնվում (Ա. Աբրահամյան, հ. բ, 1953, էջ 229–235): Գրաբարի զարգացման ընթացքում արդեն 6-րդ դարում նախադասությամբ արտահայտչակերպը նվազում է հատկապես գիտական բնույթի երկերի լեզվում: 18–19-րդ դդ. գրաբարում այդ եղանակը գրեթե չի գործում. այն հաճախ գործածվում է որպես համադրական բաղադրության իմաստի մեկնաբանման, բացատրման ձև նաև այն դեպքերում, երբ գրաբարը դժվարանում է և չի կարողանում տվյալ օտար հասկացությունը արտահայտել հայերենով

(օրինակները շատ են Ջախջախյանի բառարանում). տվյալ դեպքում ևս նպատակը նույնն է:

Բերենք նախադասությամբ արտահայտված մի քանի օրինակ. Torniajo ճախարակագործ – արուեստագետ, որ գործ է ճախարակադիր // (Minatore) Ականահատ – որ փոր է գետնափորս // Copiatore Պատճենագիր – որ առնու զհաւասարն. դպիր // Scatoliere Տփագործ. տփավաճառ – Որ գործ է, վաճառ է տուփս // Battirecca Դրամահար – որ դրամ հարկան է // Stuccatore - որ յօրին է պեսպես գործածս ի կրախառն կճոյ // Cantucchiajo Յօրինող շաքարախառն պաքսիմատից – որ յօրին է պաքսիմատս շաքարաւ // Panierajo Կողովավաճառ – որ վաճառ է զկողովս // Feratore // Vajajo - որ հանդերձ է, կամ վաճառ է զմորթս // Vaja կենդանւոյն: (Ջ.) // Modelatore – որ գործ է զկաղապար (Ջ.): Divettina թօթափիչ զգաթից – որ ծեծ է զգեղմն: Պայտառ – որ բւեռէն երկաթ յոտս անասնոց ևն:

Գիտական հասկացությունների արտահայտման ոլորտում այս եղանակը սակավ է: Դասական հայերենի անգերազանց հմտություն ունեցող գործիչները անշուշտ նկատել էին, որ դասական հայերենը ինքնին տարբերում է զուտ գիտական արտահայտման եղանակը արտահայտման այլ եղանակներից: Բառարանի հեղինակները հարազատ էին մնացել դասական հայերենի տվյալ առանձնահատկությանը: Ամենահաճախված կառուցվածքը բաղադրյալ վերլուծական ձևերն են (մոտ 300 օրինակ). դրանք գրեթե միշտ երկբաղադրիչ կառուցվածքի են. առաջին բաղադրիչը, որը հիմնականում կազմված է -իչ մասնիկով դերբայական ձևից, ցույց է տալիս գործող անձ, իսկ երկրորդը՝ գործունեության տեսակը՝ ըստ արտադրական առարկայական հարաբերության. Remajo թիագործ – գործիչ թիակաց. յօրինիչ դեկաց // Mettilo're ոսկեզօծարար – դրուագիչ, օծիչ ոսկուով // Manticiaro փքագործ – վաճառական, գործիչ փքոց // Girellago ճախարակագործ, ճախարակավաճառ – յօրինիչ ճախարակի // Frenajo սանձագործ – գործիչ սանձուց // Fusajo իլագործ. իլիկագործ – գործիչ իլոյ // Forrerinajo արկղագործ – գործիչ արկեղաց // Formagiajo պանրագործ - գործիչ, վաճառական պանրոյ // Fo-

ruciajo ժապաւինագործ – գործիչ ժապաւինաց // Chiodajuso բւեռագործ – գործիչ բւեռաց // Ciompo բրդգիւղիչ – գգիւղի բրդոյ // Zanternajo լապտերագործ, լապտերավաճառ – վաճառական, գործիչ լապտերաց // Nastrajo ժապաւինագործ – գործիչ ժապաւինի // Bastiere համետագործ – գործիչ համետից // Briglinajo սանձագործ, սանձավաճառ – գործիչ, վաճառական սանձոց // Bilanciajo կշռագործ, կշռավաճառ – գործիչ ևն:

Բացի **գործիչ, յօրինչ** բառերից՝ կարող են հանդես գալ թանձրացնական բայիմաստներով բառեր. Feretatore պայտառ – պնդիչ երկաթով // Faesmonete դրամանենգ – նենգիչ դահեկանաց // Alatore նաւաքարշ – ձգիչ նաւոց // Smaltiste կիտուածագործ – արծնիչ ապակեայ = վաճառող: Ամենահաճախականը վաճառական բաղադրիչի օգտագործումն է, ապա՝ վաճառող. սակավ է **-վաճառ** ձևի օգտագործումը որպէս համադրական բաղադրության վերջնաբաղադրիչ:

Փոխանուն դերբայական մասը օրինակներից մի մասի մեջ փոխարինված է զուտ գոյական արիեստավորանիչ բառերով. Macchine'tta մեքենագործ – ճարտարապետ կամ վաճառական մեքենայից // Fontaniere աղբերագործ – ճարտարապետ աղբերաց // Forbiaro մկրատագործ, մկրատավաճառ – արուեստական, վաճառական ձևչաց // Farsettajo բաճկոնագործ – դերձակ ներքին բաճկոնաց // Farbo դարբին երկաթոյ, երկաթագործ – դարբին, ճարտարապետ երկաթոյ // Ebaniste ունիազագործ – ճարտարապետ երենեաց // Corazrajo զրահագործ – ճարտարապետ զրահից // Torniajo արուեստագէտ, որ գործէ ճախարակաւ (Ճ.) // Eponajo մտրակագործ – արուեստագէտ, կարթի խթանի կաւշկաց // Specchiajo հայելագործ – ճարտարապետ հայելոյ // Smaltista կիտուածագործ – ճարտար դրակոնտիկոնի // Ramiere պղնձագործ – ճարտարապետ պղնձոյ // Ottico (Ջախջախյանի բառարանում բացակայում է) – ճարտապետ հայեցիկ գործեաց // Ottinajo արուրագործ – ճարտարապետ արուրի // Oroloja ժամագործ – ճարտարապետ ժամացույցի // Ombrellajo յօրինող հովանոցաց – ճարտարապետ հովանոցակաց ևն:

Ինչպես արդեն նշել ենք, եվրոպական լեզուներում, նաև ռուսերենում միևնույն արհեստագործական բառը երկու նշանակություն ունի՝ արտադրական բնույթի արհեստագործության շրջանակում՝ առաջին նշանակությամբ արտադրող, երկրորդը՝ վաճառող. ոչ սակավ դեպքերում առաջնային նշանակությունը «վաճառող»-ն է։ Հայերենը այս իմաստները արտահայտում է տարբեր կազմությամբ։ Վաճառող նշանակությունն արտահայտվում է գրաբարում վաճառել բայից առաջացած տարբեր ձևերով։ Դասական գրաբարում այն սակավ է կիրառվում որպես համադրական բաղադրության վերջնաբաղադրիչ (բանջարավաճառ են), և այն հաճախ կիրառվում է ենթակայական դերբայի ձևով։ Ավելի հաճախված է վաճառական բառը։ Հետագայում՝ 12–13-րդ դդ., այն մասնագիտական և գոյականական իմաստ է ստանում։

Վերը նշված երկու դեպքերում երկբաղադրիչ անդամը ըստ հարկի կարող է ընդարձակվել գործունեության առարկայի մասնավորմամբ. Brochierajo Յորինոյ աղեկապից – գործիչ կապից երանաց // Polversita Վառժապործ – յորինիչ փօշւոյ հրացանից // Ottico ճարտարապետ հայեցիկ գործեաց // Occhialajo Ակնոցագործ – յորինիչ հայեցիկ ապակեաց // Tavolacciajo Յորինոյ փայտակերտ վահանաց (Զ., Ը.), Coreggiajo Յորինոյ մաշկեղեն գօտեաց – գործիչ մաշկեղեն գօտեաց։

Վերոբերյալ հիշված ձևերը խիստ սակավ գործածություն ունեն 18–19-րդ դդ. արհեստագործական ոլորտում արտասովոր երկար կամ խրթին համադրական ձևերից խուսափելու պատճառով։

Քննությունը ցույց է տալիս, որ գործիչ, յորինիչ (յորինոյ), ճարտարապետ, արուեստական բառերի գործածությունը վերոհիշյալ վերլուծական կաղապարներում դասական հայերենի կիրառական բաշխման հարազատ վերարտադրումն է։

Կարևոր է **-ող (-աւղ, -օղ)** և **-իչ** ածանցների գործածությունը և բաշխումը պարզելը։ 18–19-րդ դդ. համեմատ այստեղ **-օղ** մասնակի կիրառությունը խիստ սահմանափակ է. Rastione ծուլող – ծուլիչ // յորինոյ – յորինիչ // Calafao կարածիւթող – կարիչ, ծեփիչ նաւուց կարածիւթով։ **-Ող** (աւղ //

օղ) մասնիկը սահմանափակ կիրառություն ունի նաև 5-րդ դարի գրաբարում. այն ընդարձակում է իր գործածությունը գրաբարի և առհասարակ հայոց լեզվի պատմական ընթացքին համընթաց: 18–19-րդ դարերում **-ոդ**-ի ընդարձակ գործածությունը մի նեղ ոլորտ էր թողել (հիմնականում գործիքների անվանումներ) **-իչ** ածանցի համար:

18–19-րդ դարերում, հատկապես 18-րդ դարի գրաբարում **-օղ** ածանցը ակնհայտորեն հաճախական և լայն գործածություն ուներ «վիեննական գրաբարի» համեմատ, որտեղ հարազատորեն արտացոլված էր 5-րդ դարի ածանցական բաշխումը:

Ամենից ակնառուն ոսկեդարյան գրաբարյանականներին՝ գործածական բառապաշարի և բառատաղծի նկատմամբ այլընտրանքն ու համառ կիրառությունն էր: Ահա մի քանի հատկանշական օրինակներ: Իտալերեն Ebanista բառի դիմաց Ջախջախյանն ունի ոպնիագագործ, իսկ Ճամձյանը՝ ճարտարապետ եբենեայ, համապատասխանաբար՝ Ebano Աբանոս, եբենոս, ոպնիագ – եբենոս: Ջախջախյանը ՀՀԲ-ի նյութերի հիման վրա, ըստ որում՝ դրանք կան նաև ՀՀԲ-ի Ա հատորում և Բ հատորի աշխարհաբար-գրաբար բառարանում, ընտրում է աշխարհաբար-գրաբար բառարանում առաջին անգամ կերտված եբենագործ, ոպնիոգագործ գույգից վերջինը: Ընտրանքը հավանաբար ուղղորդված է այն դատողությամբ, որ ոպնիագ ձևը առավել հայացված տարբերակն է. անշուշտ, եբենոս-ը ուղղակի փոխառություն էր հունարենից, իսկ աբանոս (ապանոս)-ը՝ պարսկերենից: Եվ թեպետ Ebano բառի դիմաց նա բառերը շարում է այսպես՝ աբանոս, եբենոս, ոպնիագ, այսինքն՝ ՀՀԲ-ի բաշխմամբ, սակայն արհեստագործական անվանումը ընտրելիս Ջախջախյանը չի հետևում ՀՀԲ Բ. հատորի դիրքային նշմանը՝ եբենագործ, ոպնիագագործ: Վիեննայի Մխիթարյանները, հետազոտելով 5-րդ դարի բառապաշարը, այլև մեծ հարգ ընծայելով ՆՀԲ-ին, բնականաբար, 5-րդ դարի մատենագրության մեջ առկա եբենոս, աբանոս գույգից ընտրել էին եբենոս-ը: Առավել հիմնավոր էր եղել այս ընտրանքը այն պատճառով, որ 5-րդ դարի դասական գրաբարի շրջանից վկայված էր եբենեայ (եբեն-

նեայ) ձևը: Ոպնիագ ձևը հայտնի էր մեկ վկայությամբ (Յովհաննես կաթողիկոս): Հետագայում ոպնիագ, ոպնիագագործ ձևերը դուրս մղվեցին մեր լեզվից:

Իսկ երշիկ-երեշիկագործ-ամձագործ բառը չկա նույնիսկ ՀՀԲ Ա հատորում և ոչ էլ Բ հատորի մնացորդացում կամ գրաբար-աշխարհաբար բառարանում. բառը կա միայն ՀՀԲ Բ հատորի աշխարհաբար-գրաբար բառարանում՝ **երշիկ-երեշիկ** ձևով: Հետագայում այս բառի ավելի հին վկայություն մեզ հայտնի չէ: ՆՀԲ-ի հավելվածում գրությունում ենք «Երշիկ. Թ. էրիշիկ, սուճուզ» բառահոդվածը՝ որպես «Աշխարհիկ բառք անվկայք ի գրոց առ մեզ եղելոց», որից պարզ է, որ ՆՀԲ-ի հեղինակները ճիշտ ստուգաբանել են, որ աշխարհաբար երշիկ-ը թուրքերենից է: Սակայն ՀՀԲ Բ հատորը ունի ոչ թե երեշիկ-երշիկ, այլ երշկագործ, երեշկագործ, երեշկարար, երեշկավաճառ, երշկավաճառ նորակերտ բառերը՝ որպես հայերեն համարժեքներ սուճուխճի, սուճուքճու բառերի: 18–19-րդ դարերի մշակույթի մեջ ամրապնդվում է երշիկ, երշկագործ ձևերը, և Ջախջախյանը՝ որպես հետևորդ 18-րդ դարի բառային համակարգի, գրանցում է իր բառարանում: Վիեննական հեղինակները, որոնք խստագույնս էին հետևում բառընտրությանը, խոտելի են համարել այդ արմատական բառը և նրանից ածանցյալները ու փոխարինել **ամիճ** գրաբար բառով, որի թանձրացական իմաստը հնարավոր չէր պարզել սուղ վկայության պատճառով (դասական գրաբարը նաև ուներ ամձաբեր՝ «խոհարար խորտիկների», բառը): Բացի հայագիտական հայտնի վկայություններից՝ ուրիշ ի՞նչ վկայություններ են ունեցել հեղինակները՝ երշիկ բառը համարժեք դասելով ամիճ բառին, մեզ անհայտ է: Հավանաբար ընդհանուր իմաստային հիմքի առկայությամբ տերմինացրել են **ամիճ** բառը: Որքան էլ **ամիճ** բառը երշիկ բառի համեմատ դուրին հնչում ուներ և պատկանում էր ոսկեդարյան գրաբարին, այն չմտավ 19-րդ դարի գրաբար և ոչ էլ օգտագործվեց նոր գրական հայերենում: Ակնհայտ է, որ վիեննական դպրոցը խուսափում է գրաբար մատենագրության ծաղկման շրջանում չվերծանված բառերից և գրաբարի հետագա շրջանում՝ 13–18-րդ դարերում մտած բառապաշարը դուրս է թողնում:

Եվս մի օրինակ, որը ավելի է հաստատում բառընտրության վիեննական միտումը. **պայտ** և **պայտառ** բառերը առաջին անգամ բառարանագրական գրանցում են ստացել ՀՀԲ-ում, ըստ որում՝ առանց հեղինակային վկայակոչման. դրանց ծագման կամ ո՛ր լեզվահամակարգերին պատկանելու (բարբառ, միջին հայերեն, գրաբար) մասին նշումներ չկան: Թե Մխիթար Աբբան որտեղից է վերցրել պայտառ, մանավանդ պայտ ձևը, անհայտ է հետագա ոչ մի բառարանագիր այս բառաձևերի մասին բացատրություն չի տվել: Շատ հավանական է, որ և՛ պայտառ, և՛ պայտ ձևերը Մխիթարյանի ստեղծագործությունն են՝ հիմնված միջնադարյան բայտար, պայթար ձևերի վրա, որոնց վկայությունները ունենք ՆՀԲ-ում, Ն. Բյուզանդացու «Միջին հայերենի բառարան»-ում: Աճառյանը նոր մատենագիտական վկայություններ չունի այդ մասին: Մխիթար Աբբան արաբերեն պայթար, բայթար ձևերը հավանաբար միտումնավոր փոխել է պայտառ ձևի, այսինքն՝ պայտ անօղ, պայտող, և դրանից ելնելով՝ առանձնացրել է **պայտ-նալ** ձևը: Հետագայում դրանք որպես գրական բառեր անխտիր տեղ են գտել բառօգտագործման և բառարանագրանցման մեջ: Հետաքրքիրն այն է, որ ՆՀԲ-ն նույնպես, վկայություն չունենալով, **պայտառ** ձևը փոխել է **պայտար**-ի: Անշուշտ պայտառ ձևը կանոնիկ գրաբարյան էր, քանի որ առնել բայի անցյալ կատարյալը **ար** կամ **արար** ձևն էր: Ուստի այլ բառերի նմանությամբ ՀՀԲ-ի պայտառ ձևը ՆՀԲ-ի հեղինակները դարձրել են պայտար: Անշուշտ ՆՀԲ-ն պայտ բառ չունի: Տակավին անհայտ էր միջին հայերեն լուսին (=պայտ) և լուսնել (=պայտել) բառերը, որը միջնադարյան գրավոր աղբյուրներից պեղեց Նորայր Բյուզանդացին: Ոսկեդարյան գրաբարի կողմնակիցները այդ բառը չէին գտել դասական գրաբարում, նաև չեն վերցնում ուշ շրջանում ձևավորված պայտառ կամ պայտար ձևերը, փոխարենը տալիս են 5-րդ դարի լեզվամտածողության ընդօրինակմամբ բացատրություն-տերմին: Անշուշտ, դա բավարար չէր, և բառարանի հավելվածում նույն բառի դիմաց գրված է՝ նորակերտ:

18–19-րդ դարերի գրաբարում **աճառ** և **օճառ** բառերից վերջինը արմատացել էր լեզվում, և անգամ որպես զուգա-

հեռ տարբերակ չէր օգտագործվում **աճառ** ձևը: 5-րդ դարի դասական մատենագրության մեջ, առաջին հերթին Աստվածաշնչում գործածվում են և՛ **աճառ**, և՛ **օճառ** ձևերը, սակայն ավելի մեծ հաճախություն ունի **աճառ** ձևը: Պատահական չէ, որ Հր. Աճառյանը **օճառ** բառը հղում է **աճառ** ձևին:

Միայն արհեստագործական բնագավառում օգտագործվող բառապաշարը հաշվի առնելով՝ կարելի է նկատել 40–50 թթ. ընդհանուր գործածական արհեստավորանիշ անվանումների 100-ից ավելի բառային իրացումներ: Անշուշտ, դրանց մի մասը ամրապնդվեց լեզվում (ապկեգործ, ապակեգործ, խեցեգործ, խեցեգործություն, ասրագործ ևն), սակայն մեծ մասը մնաց որպես տարբերակային և գրեթե չկիրառվող ձևեր և աշխարհաբար գրական լեզու չմտավ: Այդ նույն բանը ասացինք ՆՀԲ-ում ներկայացված արհեստագործական բառապաշարի մասին, սակայն նրանում նորմատիվ գրաբար է դիտվում մինչև 12–13-րդ դդ. գրաբարը: Դասական կամ ոսկեդարյան գրաբարի բառապաշարին, բառատաղծին, լեզվամտածողությանը հարազատ մնալու հետևողական այս միտումը առաջ էր բերում 18–19-րդ դարերի պարզ գրաբարի բառային, բառակազմական համակարգի մեծ չափերի խախտում:

Այժմ վիեննական դպրոցի բառընտրության և բառատեղծման յուրահատկությունը ավելի ցայտուն դարձնելու համար բերենք գրաբարի դասական շրջանի բառազանձով և լեզվամտածողությամբ ստեղծված արհեստավորանիշ անվանումների հատկանշական զուգադրական օրինակներ. *Pasticciere* քաքարագործ, կարկանդակագործ – պղակունտրագործ, ծաղարար // *Panniere* չուխայագործ, չուխայավաճառ – վաճառական ասուեաց // *Metallurgia* մետաղագործություն – քրայագործություն // *Guantajo* թաթալնագործ – ձեռեք // *Foraciajo* փոնապան, հնոցեփեաց – կրեփեաց. 2. թոծիչ // *Coniatore* դրամահատ, դրամահար – դահեկանահատ // *Foderajo* մուշտակագործ – գործիչ մաշկեկաց // *Cantucchiajo* Յօրինօղ շաքարախառն պաքսիմատից – որ յօրինէ պաքսիմատս շաքարաւ // *Asinajo* իշապան, իշավար – իշավար. *իշապան // *Barbira* վարսավեր – վարսավիրայ // *Balestrajo* բաղիստրագործ – կազմիչ, գոր-

ծիչ նետակալաց // Tintore ներկող, ներկիչ, ներկագործ, ներկարար – նարստներկ // Ciambllnjo բոկեղագործ, բոկեղավաճառ – գործիչ, վաճառող պանի // Telaruola Ոստայնանկ – ոստայնանկ, սատար // Taglialegra Փայտահար, փայտահատ – մայրևոր փայտահար // Muratore Որմադիր, որմածու – որմաշին // Intagliatore դրուագիչ – դրօշող // Statuario Արծանագործ, անդրիագործ, արծանածոյլ – դրօշագործ, անդրիանտագործ:

Հին լեզվամտածողության օրինակով և բառատաղծով են կազմված հետևյալ օրինակները. Monetiere դրամահար, դրամահատ – հատիչ դահեկանաց // Falsmanete դրամանենգ – նենգիչ դահեկանաց // Ebenisto Ոպնիագագործ – ճարտարապետ եբենեայ // Celonajo գորգագործ, օթցագործ – գործիչ սրահակաց // Carotajo գագարավաճառ – որ վաճառէ ստեպղին // Calrettajo գուրպայագործ, գուրպայարար – հիւսիչ, նորոգիչ, վաճառող զանկապանաց // Artigliere ծուլիչ թնդանօթից – ծուլիչ պատերազմական անօթց. *թնդանօթագործ // Legatore կազմարար, գրակազմ – կապող գրոց // Polversita վառօղագործ – յօրինիչ փոշւոյ հրացանից // Lasagnajo դոմավաճառ – վաճառական տափարակ քաքարաց // Battiloro զառեկագործ (ոսկւոյ կամ արծաթոյ). թիթեղնագործ – գործիչ, ճարտարապետ թիթղան // Bottajo տակառագործ – գործիչ փայտեղեն կարասոյ // Zimotecnica արուեստ խմորոյ (Ճ.) – խմորաբանութիւն (Զ.) չուանագործ – չուանանման (Cordiere բառի տակ // Confettatore յօրինող կամ վաճառող քաղցրաւենեաց կամ շաքարաղինաց – կազմիչ, վաճառող հանդերձանաց շաքարի, անուշարար // Smaltista կիտուածագործ – արծնիչ ապակեայ // Ottico դիտակագործ – ճարտարապետ հայեցիկ գործեաց. յօրինիչ հեռադիտաց// Stampatare տպօղ, տպագործ – դրօշմիչ տպաւորիչ գրոց:

Զախջախյանը ճոխացրել էր գրաբարը նույն 18-րդ դարի հունի մեջ. ներքին հարստացում՝ ըստ անհրաժեշտութեան բառային զտումով՝ հիմք ընդունելով սրբազան գրաբարյան լեզուն և մտածողությունը:

Ինչպես նշել ենք, լեզվի արդիական, կենսական պահանջները պատշաճորեն բավարարելու նպատակով Մխի-

թար Աբբայից ի վեր, որին իրավամբ կարելի է համարել 18-րդ դարից զարգացող պարզ գրաբարի հիմնադիրը և առաջին մեծ մշակը, միտում է եղել յուրացնելու գրաբարի ծաղկուն շրջանի բառապաշարն ու բառակազմությունը, արտահայտչակերպերն ու դարձվածաբանությունը. մանավանդ ուղղվածությունը եղել է դեպի 5-րդ դ. և առանձնապես հայոց սրբազան մատենագրության (սուրբ գրության) լեզվական գանձերը: Սակայն այդ յուրացումը եղել է ժամանակի պարզ գրաբարի բառային համակարգի պակասությունները լրացնելու, այդ հարաբերականորեն բաց համակարգը խորթ տարրերից մաքրելու, հղկելու, հարստացնելու, կատարելագործելու նպատակով: Այդ գործընթացի չափազանցումը Վիեննայի Մխիթարյանների կողմից 40-ական թվերին, թեպետ իր խորքում ուներ մի վսեմ և վիթխարի ռոմանտիկ գաղափար՝ լեզվի ազգային ձևի բարձրագույն արվեստով կյանք ներշնչել գրաբարին՝ հայ ժողովրդի երբևէ գրավոր ընդհանրական լեզվին, լեզվական օրինաչափության խախտում էր, ուստի և ժամանակավրեպ էր 18–19-րդ դդ. ձևավորված հզոր բառային համակարգի փոխարինումը 5-րդ դ. լեզվամտածողությամբ՝ բառային, քերականական ունեցվածքով ևն, անկարելի ձգտում էր: 1847–1850 թթ. տպվեցին հոդվածներ վիեննական ուղղության դեմ: Դրանցից նշանավոր է ժամանակի ամենամեծ հեղինակության՝ Արսեն Բագրատունու հոդվածը: Լայնածավալ այս փոխարինումը նա մերժում է, սակայն գովասանքով է խոսում վիեննական դպրոցի բազմաթիվ մատենագիտական բառաքննական ճշտումների, նրանց հայտնաբերած լեզվական գանձերի մասին: 1850-ական թվականներից թեպետ շարունակվում են դասական հայերենի ուսումնասիրությունը, լեզվական նորանոր միջոցների հայտնաբերումը, սակայն վիեննական դպրոցը որպես այդպիսին այլևս չի գործում: Պարզապես վիեննական դպրոցը, ընդգրկվելով վերոհիշյալ հունի մեջ, տվեց բազմազան լեզվական գանձեր, իսկ ամենագլխավորը այն էր, որ մշակեց լեզվի՝ ազգային ձևով արտահայտման բարձրագույն արվեստը և եղավ առաջնորդը այդ մարզում, և դա շարունակեց մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները: Վերջին

խոշոր ներկայացուցիչը լեզվամշակման առումով այս դըպրոցից Հակոբոս Տաշյանն էր, որին կարելի է համարել հայ տերմինաբանության հիմնադիր՝ նկատի ունենալով նրա «Բառախօսական դիտողություններ հայերեն գիտական լեզուի մասին» (Վիեննա, 1926) աշխատությունը:

Արհեստագործական անվանակարգը քննելիս մենք միտումնավոր կերպով հանգամանալից վերլուծեցինք վեներտիկյան և վիեննական Մխիթարյանների գործերը, որովհետև գրաբարի հունի մեջ զարգացող արհեստագործական բառապաշարը հետագայում հեղաբեկումների չի ենթարկվում, այլ ընթանում է բառապաշարի զարգացման մեկ ընդհանուր ուղով, այն է՝ նույն սկզբունքների հիման վրա արհեստագործական բառապաշարը ժամանակին զուգընթաց հարստանում, ճշգրտվում և կատարելագործվում է: Անշուշտ, արհեստագործական անվանումների ամենահարուստ հավաքածու կարելի է հանել գրաբար վերջին՝ Գ. Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն բառարանից, բայց այնտեղ լեզվամշակման արվեստը արդեն անկում է ապրել: Գրաբարի հունի մեջ հայ գիտական լեզվի մշակման բարձրագույն արտահայտությունը մնում է Մանուել Քաջունու «Բառգիրք գիտութեանց և արուեստից և գեղեցիկ դպրութեանց» երկհատոր աշխատությունը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Արդի հայերենի (1920-ական թթ. ցայսօր) արհեստագործական բառախմբի կաղապարները, դրանց գոյացման ներքին լեզվական ձևերն ու աստիճանակարգը գրեթե ամբողջապես կազմավորված ենք գտնում XX դ. սկզբների արհեստագործական անվանումների համակարգում: Արդի հայերենում դրանք հիմնականում դրսևորվում են գործառական բաշխման և կիրառման հաճախականության առանձնահատկություններով. նոր կառուցվածքային ձևերը եղածների համադրական, բարդացված տիպերն են, բխում են դրանցից: Ուստի անհրաժեշտ ենք համարում քննել նըշված ժամանակահատվածի արհեստագործական բառախմբի կառուցվածքները և՛ ձևային, և՛ իմաստաբանական առումով:

Արհեստագործական անվանումների միջուկային խումբը արտադրական գործունեության բովանդակություն է արտահայտում (մահուդագործ՝ «մահուդ արտադրող», պանրագործ՝ «պանիր արտադրող՝ պատրաստող»): Այդ բովանդակությունը ընդարձակվելով ընդգրկում է հասարակական արժեք ներկայացնող գործունեության այնպիսի տեսակներ, որոնք հարակրկնաբար և կայունորեն իրականացվում են և ընդհանուր առմամբ կոչվում են զբաղմունքներ: Բուն արհեստները, հատկապես հարակից կամ երկրորդական արհեստները՝ զբաղմունքները, ազգից ազգ, ժողովրդից ժողովուրդ, նույնիսկ նույն ժողովրդի մեջ՝ տարածքից տարածք, դրսևորվում են մեծ կամ փոքր տարբերություններով. փոփոխությունները ավելի ակնառու են ժամանակաբանական առանցքի տեսանկյունից: Խոսքը վերաբերում է դրանց քանակին և բովանդակությանը: Այդուհանդերձ, դրանք հիմնականում նույնական են, մանավանդ քաղաքակիրթ ժողովուրդների կյանքում:

Հայոց լեզուն 20-րդ դար է թևակոխում արդեն ձևավորված, կանոնակարգված, զարգացման ուղին կանխորոշված: Գիտության, տեխնիկայի աննախադեպ վերելքը փոխում է մարդկանց կենցաղը. ի հայտ են գալիս նոր իրեր,

գործիքներ, մասնագիտություններ և այլն, որոնց պատրաստման, սպասարկման, նորոգման համար անհրաժեշտ էին մասնագետներ, արհեստավորներ (լուսանկարիչ, փականագործ, վարորդ և այլն): Նոր իրերի, հասկացությունների երևան գալու հետ անհրաժեշտություն է առաջանում դրանց անվանման, որը իրականացվում է եղած բառային կազմի միջոցով՝ բառաբարդման, ածանցման ճանապարհով:

Արդի արհեստագործական տերմինների քննությունը ակնհայտ է դարձնում մի քանի միտումներ: Առաջին հանգամանքը մեծ թվով բառերի հնանալն է, երբ արհեստների վերացման պատճառով դրանց անվանումները դուրս են մղվել լեզվի գործուն բառապաշարից և անցել ոչ գործուն շերտ: Այս բառերը համարվում են հնացած կամ պատմաբառեր: Բերենք մի քանի օրինակ՝ գզրար, արծնարար, թամբագործ, կաշեգործ, ջրադացպան և այլն:

Սոցիալ-տնտեսական, կենցաղային նոր պայմանների թելադրանքով առաջ են գալիս նոր արհեստներ (ռաբոտ-սուկ, Կաֆե-սուկ և այլն), որոնց անվանման համար հայերեն համարժեք են պահանջում: Նոր հասկացությունը իմաստային անվանման անհրաժեշտություն է ծնում, եթե չենք ուզում օտար բառ օգտագործել (օր.՝ սալիկագործ, գաջագործ, մանրահատակագործ և այլն):

Որոշ արհեստներ էլ վերացման ճանապարհին են, քանի որ նրանց գործունեության ոլորտն այնքան է նեղացել, որ ուր որ է անհետանալու եզրին են, և, բնականաբար, համապատասխան բառերը լեզվի բառապաշարի գործուն շերտից դուրս մղվելու հավանականություն կա: Օր.՝ հյուսն, բրուտ, դարբին և այլն:

Նկատվում է նաև որոշ արհեստների նեղ մասնագիտացում: Եթե, օրինակ, նախկինում կոշիկ կարելու ողջ գործընթացը սկզբից մինչև վերջ կատարում էր նույն վարպետը, ապա վերջին տասնամյակներում մեքենայացման, տեխնիկայի զարգացման շնորհիվ ոչ միայն աշխատանքի գործընթացի բաժանում կատարվեց (տակացուի պատրաստում, ձևավար և այլն), այլև ամբողջ գործողությունը կարող է կատարել մեքենան, և վերջինս սպասարկողը

այլևս արհեստավոր կոչվել չի կարող: Նկատենք, որ բառիմաստի փոփոխման շնորհիվ այս կամ այն բառը իր հին իմաստից հաճախ անցում է կատարում բոլորովին նոր հասկացության: Իմաստների փոխհաջորդման օրինակ են մեր նյութին առնչվող փողրակ (-ագործ), մալուխ (-ագործ), գործ (-արար) բառերը: Վերջինս հնում ունեցել է «աշխատող, արհեստավոր, գործ անող» իմաստը, իսկ այնուհետև դուրս է մղվել կիրառությունից, «մահացել» և երկար ժամանակ մոռացության մատնվել: Մեր օրերում այն արդեն վերակենդանացում է ապրել՝ այս անգամ նոր իմաստով՝ **բիզնեսմեն**: Այս երևույթը էդ. Աղայանը անվանում է իմաստների փոխհաջորդում. «Իմաստների փոխհաջորդումը կարող է զուգորդվել իմաստի ընդլայնման, նեղացման և բևեռացման հետ: Ուրեմն, իմաստների փոխհաջորդումը նախկին իմաստի բացառումն է և փոխարինումը մի նոր իմաստով, անկախ այն բանից, թե այդ փոխհաջորդումը զուգորդվե՞լ է նաև իմաստի ընդլայնումով, նեղացումով կամ բևեռացումով, թե ոչ» (Աղայան 1984, էջ 106-107):

Մեր կարծիքով, արհեստավորների՝ մասնագետների փոխարկվելու գործընթացը նույնպես պետք է դիտել փոխհաջորդում. արհեստավորների ճնշող մեծամասնության գործի բնույթը փոխվել է. նա մասնագիտանում է որևէ ոլորտի արտադրության մեջ ու «դեկավարում» զանազան գործողություններ կատարող մեքենան: Այսպես, օրինակ՝ նույնիսկ **կոշկակար** ավանդական իմաստով վարպետը այսօր ավելի շատ **հնակարկատի** արհեստին պետք է վերաբերի, իսկ կոշիկ կարելու գործընթացը սկզբից մինչև վերջ վաղուց արդեն մեքենայացվել է, դադարել «ծեռագործ» աշխատանք լինելուց, և **ծեռքի աշխատանքով** կոշկակարներ հատուկենտ են մնացել: Նույն երևույթն ենք նկատում նաև **հացթուխ, բրուտ, դարբին** և այլ բառերի դեպքում: Որքանով է ճիշտ ամբողջովին մեքենայացմամբ ստացված արդյունքը արհեստագործական արտադրանք համարելը:

Իմաստափոխական տեսակետից այսպիսի բառակազմությունները մեծ տարածում են ունեցել հայերենի բոլոր փուլերում: Դրանք ածանցին կամ բարդության արմա-

տական բաղադրիչին հաղորդում են բոլորովին նոր նշանակություն: Այստեղ ուզում ենք փոքր-ինչ հանգամանալից խոսել **գործ** բառի մասին, որովհետև այն մեզ հետաքրքրող թեմայի «**գլխավոր դերակատարն**» է և հայերենի ամենագործուն ձևույթներից մեկը: **Գործ** բառը հին բաղադրությունների մեջ (գրաբարյան, միջինհայերենյան) նշանակում է «գործող, մշակող», ինչպես օրինակ՝ հողագործ, գինեգործ, այգեգործ և նման բազմաթիվ բաղադրություններում: Ավելի ուշ այդ բառն աստիճանաբար սկսեցին գործածել նորակազմ բառերի մեջ նաև «մի բանով զբաղվող, արտադրության կամ արդյունաբերության այդ ոլորտներում աշխատող» նշանակությամբ, ինչպես էլեկտրալամպագործ «էլեկտրական լամպերի արտադրության աշխատող», մալուխագործ «մալուխի արտադրության աշխատող», ալյումինագործ «ալյումինի արտադրության աշխատող» և այլն: Այդպիսի կազմություններն այնքան մեծ տարածում են գտել, որ **գործ** բառն արդեն հանդես է գալիս հիմնականում ածանցի դերով: Իսկ շատ բառեր էլ, որոնք հին բաղադրություններ են, և որոնց մեջ **գործ** բառն ունի նախնական՝ «մի գործով զբաղվող, մի գործի մասնագետ արհեստավոր» իմաստը, պահելով իրենց այդ նախկին իմաստը, ստացան նաև նոր՝ «տվյալ բնագավառի աշխատող» նշանակությունը. այսպես օրինակ՝ **հացագործ** բառը նախկինում նշանակում էր «հացթուխ», այժմ ունի նաև «հացի արտադրության աշխատող», **ժամագործ**՝ «ժամացույցի մասնագետ-արհեստավոր-նորոգող», այժմ նաև՝ «ժամացույցի գործարանի աշխատող» և այլն (Աղայան 1984, էջ 97-98):

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է արհեստավորանիշ բառերի պատկերը մեր ժամանակներում: Ըստ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ արհեստագործական անվանումները հայերենում 300-ից ավելի են (ներառյալ հոմանշային զուգաձևությունները, բարբառային, հազվադեպ, հնացած, խոսակցական բառերը): Չափազանց քիչ քանակ են կազմում արմատական կամ որպես այդպիսին ընկալվող բառերը (դրանց մասին արդեն խոսել ենք):

Մյուս խումբը բառաբարդումով կազմված արհեստա-

գործական անվանումներն են, որոնք նույնպես փոքր թիվ են կազմում: Գոյական արմատ + բայարմատ կաղապարով սովորաբար կազմվում են ածականներ, սակայն այս բաղադրությամբ ստացված մեզ հետաքրքրող բառերը գոյականներ են, որոնք, ինչպես նշում է Ս. Գալստյանը, կա՛մ ետին կազմություններ են, կա՛մ իմաստի անցում կատարածներ (Գալստյան 1978, էջ 21), ինչպես՝ գրաշար, պատշար, հացթուխ - հացեփ (հնց.), կոշկակար, կտավաման (կտավի թել մանող անձ), հնակարկատ – հնանորոգ (հնց.), նախշքար (հնց.), որմնադիր-պատուհիր (հնց.), վարսավիր, վերմակակար (հնց.), քարհատ-քարահատ-քարահան, քարակոփ (քարտաշ իմաստով) (հնց.), քարտաշ, վարսավիր, տաճարաշեն-տաճարակերտ (հզվդ.), մարմարակոփ (հնց.) և այլն:

Մեր ցանկում առյուծի բաժինը կազմում են **գործ** ձևությամբ բաղադրված բառերը (200-ից ավելի): Նույնիսկ այլ ածանցներով կամ բառաբարդումով արհեստավորանիշ անվանումների մեծ մասն ունի նաև **գործ** -ով տարբերակը, և այն հայոց լեզվի զարգացման ընթացքում շատ հոմանշալին տարբերակներ դուրս է մղել գործուն շերտից: Օր.՝ արծնարար, արծնիչ-արծնագործ, զարդարար-զարդագործ, զինարար-զինագործ, թամբարար-թամբագործ, ծեփարար-ծեփագործ, հացթուխ-հացագործ, պայտառ, պայտար-պայտագործ, ոսկերիչ-ոսկեգործ և այլն:

Այս ամենը վկայում է, որ **գործ** ձևությամբ արհեստագործական անվանումներ կազմելու իսկապես ամենակենսունակ տարրն է:

Կան մի քանի ձևային, որոնց բառական բաղադրիչն ածանցի վերածվելու ճանապարհին են: Գ. Բ. Ջահուկյանը, ի շարս մի շարք ձևայինների, մեզ հետաքրքրող ձևերից այդպիսին է համարում նաև **-գործ** բաղադրիչը: Այնինչ շատ հայ լեզվաբաններ **-գործ** ձևությամբ վերջածանց են համարում (Գալստյան 1978, էջ 41): Արմատից ածանց անցման փուլում գտնվող ձևայիններին Գ. Ջահուկյանը տվել է ածանցակերպ կամ դերածանց անվանումը (Ջահուկյան 1989, էջ 158): Իսկ Դ. Գյուրջինյանը գրում է. «Ածանցակերպից անցում է տեղի ունենում դերածանցին. բառային ծագում ունե-

ցող մասնիկներն ածանցի դեր են կատարում... Գործառական նոր արժեքով տևաբար կիրառվելուց և իմաստային հետագա վերացարկումից հետո դերածանցը կարող է վերածվել վերջածանցի՝ առաջ բերելով արմատ/ածանց համանունություն» (Գյուրջինյան 1998, ԲԵՀ):

Իբրև բառակազմական եղանակ՝ ածանցումը բառապաշարի հարստացման գործում մեծ դեր է կատարել հայերենի զարգացման բոլոր փուլերում: Արհեստագործական անվանումներում գործում են հիմնականում **-գործ**, **-ող**, **-իչ**, **-որդ**, **-արար**, **-պան** ածանցները: Առաջինի մասին արդեն խոսել ենք: Այժմ դիտարկենք մյուս ածանցները առանձին-առանձին (այս ածանցները բնութագրելիս օգտվել ենք Ս. Գալստյանի՝ ածանցների դասակարգման կադապարներից, Գալստյան 1978, էջ 95-264):

-Ապան//պան ածանցով բարդությունները սահմանափակ կիրառություն ունեն: Ցույց են տալիս հիմնականում երկու իմաստային խմբի անվանումներ՝ կենդանիներ պահող, խնամող և որևէ օբյեկտ տիրություն անելու, աշխատեցնելու, բանեցնելու կամ արհեստով զբաղվելու նշանակություն. ջրաղացպան-աղացպան, աղորեպան, փռապան, այգեպան և այլն:

-Արար ածանցով կադապարի գոյականները հիմնականում ունեն «նախատիպի ցույց տված առարկայով, որպես մասնագիտությամբ կամ մշտական զբաղմունքով զբաղվող անձ» բառակազմական նշանակություն, ինչպես՝ ներկարար, նավարար, հացարար, քաղցրավենարար, աղունարար, թամբարար, կոշկարար, կլայեկարար, արծաթարար, արծնարար, զինարար, ծեփարար, մաշկարար, մուճակարար, չմշկարար և այլն: Այս կառուցվածքի բաղադրությունների համարյա բոլոր բառերը (թերևս բացի **ներկարարից**) այժմ անգործածական են. բառարաններում ունեն հնգ. նշումը: Այն բավականին կենսունակ էր գրաբարում, հատկապես՝ միջին հայերենում:

-Իչ ածանցի համար որպես հիմք հանդես են գալիս ներգործական սեռի բայերը: Մեզ հետաքրքրող անվանումներում ունեն «անձ կամ առարկա, որ կատարում է կամ

նախատեսված է կատարելու նախատիպի ցույց տված գործողությունը» բառակազմական նշանակություն, ինչպես՝ դրվագիչ, արծնիչ, ծխանամաքիչ, ավտոհավաքիչ, սափրիչ, սալարկիչ, ջնարակիչ, ոսկերիչ, հղկիչ, հեսանիչ, լուսանկարիչ և այլն: Այս նշանակությամբ անծի անուններ կազմելու համար այժմ սրան փոխարինել է **-ող** ածանցը, և նկատելի է **-ող** և **-իչ** հոմանշային զույգի ոլորտների բաժանումը. **-իչ**-ով վերջին ժամանակներս գերազանցապես գործիքների անուններ են կազմվում, **-ող**-ով՝ այդ գործիքը գործածող մասնագետների. օրինակ՝ զոդող (մարդ) // զոդիչ (գործիքը), եռակցող (մարդ) // եռակցիչ (գործիքը) և այլն:

Հր. Աճառյանը ձեռագրերի հիման վրա հրատարակված հատորում (իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն) հետաքրքիր դիտարկում ունի թուրքերենից փոխառյալ **-չի** (արևմտահայերեն **-ջի**) ածանցի վերաբերյալ:

«Հայերենի մեջ **ջի** մասնիկի փոխառնվելու պատճառը կարելի է կարծել նրա համար, որ հայերեն համապատասխան մի կարճ մասնիկ չկա, դրա դեմ մենք ունենք գործ, արար, ծախ, վաճառ, պան (փոխ. պարսկերենից) և այլն: Օրինակ՝ ածխավաճառ, մսավաճառ, այգեպան... հացթուխ, հացավաճառ, լվացարար, անուշարար, ոսկերիչ, ժամագործ (բայց այլ բան է ժամավաճառ), ժամարար, ժամկոչ, ժամհար եւ այլն:

Թրք. **ջի** մասնիկը թեև շատ հարմար, բայց այն անհարմարություն ունի, որ շինողն վաճառող խառնում է իրար: Մենք կարող ենք ասել մսագործ եւ մսավաճառ, բայց թուրքերեն միայն մի բառ կա, որ է խասապ:

Չարմանալի է, որ բարբառներում նույնիսկ այնպիսի բառերի վրա, որոնք արդեն արհեստ են նշանակում, ավելացել է նաև թրք. **ջի**, օրինակ, խասաբ արաբերեն նշանակում է մսավաճառ եւ բախալ նշանակում է նպարավաճառ, բայց հնգ. (հունգարահայ...) խասաբջի, Ասլ. (Ասլանբեգ...) բախալջի: Այսպես է նաև երև. բաղմանջի...» (Աճառյան, 2005, էջ 191):

-Ող ածանցը բայահիմքերից կազմում է և՛ ածական, և՛

գոյական գործողի անուններ: Այն՝ որպես գոյականակերտ ածանց, շատ գործուն է. որով լեզվի բոլոր փուլերում կազմվել են բազմաթիվ բաղադրություններ, և այդ գործընթացը շարունակվում է հատկապես նորագույն հասարակական, քաղաքական և գիտատեխնիկական գրականության մեջ: Մեր թեմային առնչվող բաղադրությունները նույնպես մեծ թիվ են կազմում, սակայն դրանց մեծ մասը դեռևս նկարագրական բնույթ ունի և տերմինի վերածվելու ընթացքի մեջ է: Անձերի անուններ ըստ մասնագիտության կամ զբաղմունքի կազմություններում հաճախադեպ են որոշչային բաղադրիչները, ինչպես՝ գզող մեքենա, վերմակ կարող կին, հղկող գործիք և այլն: Այս ածանցով կազմված բուն արհեստավորանիշ բառերն այլևս հնացած են:

-Որդ ածանցը մեզ հետաքրքրող բառերում ունի «նախատիպի ցույց տված առարկային առնչվող մասնագիտությամբ զբաղվող» բառակազմական նշանակությունը: Բաղադրությունները ցույց են տալիս գործիքների անուններ կամ տվյալ գործիքն օգտագործող անձ: Բացի հեսանորդ, հղկորդ, զոդորդ (нояльщик), խաղախորդ, դաբաղորդ և այս կարգի հնացած ու անգործածական բառերից՝ մեր թեմային վերաբերող այլ օրինակների չենք հանդիպում:

Ինչպես գիտենք, արդի հայերենի բառապաշարի բոլոր շերտերում **-ություն** ածանցը ամենից շատ տարածված ու գործուն բառակազմական ձևույթն է: Այս ածանցով են կազմվում նաև զբաղմունքի, մասնագիտության, արհեստների ներկայացուցիչների անունները՝ դարբնություն, ոսկերչություն, թամբագործություն, վարսավիրություն, կոշկակարություն և այլն, և այլն:

Այսպիսով, ներկայացնելով հայերենի արհեստավորանիշ անվանումների պատմական զարգացումը հնագույն շրջանից մինչև մեր օրերը՝ կարող ենք կատարել մի շարք եզրահանգումներ:

Արհեստավորանիշ բառերի համակողմանի քննությունը թե՛ լեզվաբանական, թե՛ պատմաազգագրական և մշակութային տեսակետներից որոշակի կարևորություն է ներկայացնում: Արհեստագործական անվանումների իմաս-

տային դաշտը յուրահատուկ մի համակարգ է, որում արտացոլված ենք տեսնում ժողովրդի լեզվամտածողությունը, հոգեբանությունը, պատմամշակութային, ընկերային, տնտեսական գործընթացները, հասարակական հարաբերությունները և այլն: Արձանագրված բառամթերքը հնարավորություն է ընձեռում դասակարգելու հայերենի տարբեր փուլերում այս իմաստային շերտի բառակազմական կաղապարների, իմաստափոխության, հոմանշային զուգադրսևորումները և ուղենշելու զարգացման միտումները:

Գրաբարում արհեստավորանիշ անվանումների տերմինային կաղապարը գրեթե միշտ արտահայտվում է բաղադրյալ բառի տեսքով, իսկ պարզ բառերը սակավ են: Արհեստավորանիշ անվան հիմնական կաղապարն է՝ գոյական + բայահիմք կամ ածանցակերպ, ըստ որում առաջին բաղադրիչը գործունեության առարկայի անունն է:

Արհեստագործական բառապաշարը, մաքրվելով հնաբան գրաբարյան երևույթներից, հավելուրդային համանիշ-հոմանշությունից, յուրացվեց նոր գիտական հայերենի զույգ ճյուղերի կողմից: Շատ կարևոր նշանակություն ունեցավ նրա՝ հայոց լեզվին հարազատ բառակազմական կաղապարների ճիշտ օգտագործման հմտությունը:

Միջին հայերենի արհեստագործական անվանախումբը կազմում է գրաբար բառիմաստային նույն խմբի հաջորդական օղակը և կապ է հաստատում աշխարհաբարի ու նոր գրական հայերենի տարբերակների՝ նույն ոլորտի անվանախմբերի հետ: Այս շերտը կարևոր նշանակություն ունեցավ XVIII - XIX դդ. մեզ հետաքրքրող անվանակարգությունը մշակելիս:

Նյութի ուսումնասիրությունից հանգում ենք այն կարծիքին, որ միջին հայերենի արհեստագործական անվանակարգը պահպանում է տվյալ ոլորտի գրաբարյան կառուցվածքները և միայն մասնակի այլաձևություններ է դրսևորում, որոնք կարելի է դիտել որպես գրաբարյան կաղապարների ծավալված ձևեր: Ի տարբերություն կառուցվածքային նույնության՝ միջին հայերենի արհեստագործական անվանակարգի բաղադրիչային ատաղծը ակնհայտորեն

փոխված է գրաբարի նկատմամբ. գրաբարյան արհեստավորանիշ անվանակարգության միավորները, որոնք մեծ մասամբ գործողանիշ վերադիրից (ածականից) և լրացյալից էին կազմված, միջին հայերենում վերածվում են փոխանուն գոյականների:

Գրաբարյան անվանակարգը օգտագործվում է միջին հայերենում մասամբ՝ մերթ անփոփոխ, մերթ միջին հայերենի հնչյունափոխական օրենքներով տարբերակված, և երբեմն համանշային-հոմանշային հարաբերությունների մեջ է գտնվում միջինհայերենյան կազմությունների հետ: Աստիճանաբար դրանց փոխարեն գործածվում են կամ միջինհայերենյան հայաբառ ձևերը, կամ գերազանցապես փոխառությունները: XVIII դ. պարզ գրաբարի համակարգը միջին հայերենի նշված անվանախումբը օգտագործում է ըստ նրա հայաբառ տարերքի՝ անտեսելով օտարաբան խառնուրդը, և ըստ էության, ուղղորդվելով միջին հայերենի մտածողությամբ, կանոնիկ է դարձնում այն գրաբարյան բառապաշարը, որը օգտագործվել էր միջին հայերենում:

Արևելահայ գրական լեզվի բառապաշարի ընդգրկման ընդարձակումը, զարգացումը ընթանում էին կենդանի և գործածական բառապաշարի կազմավորման և համակարգման սկզբունքով: 1870-80-ական թվերին գործածական արևելահայերեն բառապաշարի հիմնական կազմը իր իմաստաբանությամբ, ձևակազմությամբ ակնհայտորեն տարբերվում էր XVIII - XIX դդ. պարզ գրաբարի բառապաշարից. այն այդ բառապաշարից որոշակի ընտրանք էր ներկայացնում, դուրսընկալ և կենսունակ էր. արտանդվում էին գրաբարի խրթին, դժվարընկալ բառերը և որոշ բառակազմական կաղապարներ:

Տերմինակազմական բուն կազմություններով գիտական բառապաշարի ձևավորումը նույնպես համակարգայնացման եղանակներից է: Դա նշանակում է բաղադրականության ցածր աստիճան ունեցող անվանումների այնպիսի փոխակերպում, որը իրականացվում է բաղադրականության ավելի բարձր աստիճանի դրսևորմամբ: Խնդիրը գլխավորապես վերաբերում է XIX դ. վերջերին և XX դ. սկզբ-

ներին արևելահայ գրական լեզվի բառապաշարային նորմի հնարավորությանը: Երկրորդական նշանակություն ունի այն, որ XVIII դ. պարզ գրաբարով արհեստագործական նշված անվանախումբը ներկայացված է կատարյալ մշակվածությամբ, ըստ բառատաղծի և բառակազմական կաղապարների:

Մինչև 1920-ական թվականները ձևավորված արևելահայ արհեստագործական անվանումների կառուցվածքները, լեզվաոճական ուղղվածությունը, նաև հիմնականում բառապաշարը, բառային ատաղձը, ածանցման միջոցները 1920-ական թվականներից հետո ուղղակիորեն անցնում են արևելահայ գրական հայերենին: Արդի հայերենի արհեստագործական, տեխնիկական - մասնագիտական անվանումների գոյացման համար բավարար հիմք է ծառայել մինչև 1920-ական թվականները եղած լեզվական մակարդակը: Նշված ժամանակից մինչև օրս արևելահայերենի զարգացումը արհեստագործական անվանումների առումով բնութագրվում է դրանց կաղապարների բարդացմամբ ու կատարելագործմամբ, բառաշարի հարստացմամբ և մշակմամբ, ուստի արդի արևելահայերենի տվյալ բառախմբի վերլուծությունը համապատասխան բնույթ և ուղղվածություն ունի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, «Միտք», Երևան, 1965, 699 էջ
2. Աբրահամյան Ա. Ա., Հայերենի դերբայները, հ. բ., ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1953, 441 էջ
3. Աբրահամյան Ս. Գ., Ներածություն (Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում) հեղ. խումբ (պատ. խմբագիրներ՝ Ս. Աբրահամյան, Գ. Սևակ), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973
4. Ակինեան Ն., Ղասական հայերենը և վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, 388 էջ
5. Աղայան Է., Ընդհանուր բառագիտություն/Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1980
6. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1984, 372 էջ
7. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, ԵՊՀ, Երևան, 1940, 348 էջ
8. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, ԵՊՀ, Երևան, 1951, 608 էջ
9. Աճառյան Հ., Լիակատար քերականություն, ԵՊՀ, Երևան, 2005, 350 էջ
10. Ավետիսյան Տ. Մ., Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975
11. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., հ. 1, ՀՍՍՌ ԳԱ հրատ, Երևան, 1958, 376 էջ
12. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., հ. 2, ՀՍՍՌ ԳԱ հրատ, Երևան, 1964, 320 էջ
13. հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Երկհարիրամեայ գրական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ, Մխիթարեան Միաբանութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1905, 400 էջ
14. Գալստյան Ս. Ա., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ, Երևան, 1978, 325 էջ
15. Գյուրջինյան Դ. Ս., Արդի հայերենի վերջածանցակերպերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, N 2
16. Հարությունյան Ա., Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում, Երևան, հ. Ա, 1941, 99 էջ

17. Հայրունի Վ., Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, 407 էջ
18. Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, ՀՀ ԳԱԱ, Երևան, 1990, 304 էջ
19. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», Երևան, 2006, 310 էջ
20. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ, Երևան, 1990, 408 էջ
21. Մելե Անտուան, Հայագիտական ուսումնասիրություններ, ԵՊՀ, Երևան, 1978, 820 էջ
22. Մենկիշեան Գ., Արդի լեզվագիտությունը, հ. Ա, Վիեննա, 1903, 82 էջ
23. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, ԵՊՀ, Երևան, 1955, 256 էջ
24. Տաշեան Յակովբոս, Բառախօսական դիտողություններ հայերեն գիտական լեզուի մասին, Վիեննա, 1926, 224 էջ
25. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, «Միտք», Երևան, 1969, 290 էջ
26. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1974, 580 էջ
27. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1987, 748 էջ
28. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, 319 էջ
29. Ջահուկյան Գ. Բ., Հին հայերենի վերջածանցների ծագումը, ՊԲՀ, 1995, № 1, էջ 145
30. Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, «Սով. գրող» հրատ., Երևան, 1964
31. Кронгауз М. А., Семантика, «Асадема», Москва, 2005, 342 с.
32. Шмелев Д. Н., Проблемы семантического анализа лексики, «Комкнига», Москва, 2006, 412 с.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Ալամդարեան Հարութին, Համառօտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ, Կ. Ա, Մոսկուա, 1821, 287 էջ
2. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Կ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 929 էջ
3. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Կ. 2, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 719 էջ
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Կ. Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 1971, 698 էջ
5. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Կ. Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 1973, 687 էջ
6. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Կ. Գ, ԵՊՀ հրատ., Երևան, 1977, 635 էջ
7. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Կ. Դ, ԵՊՀ հրատ., Երևան, 1979, 675 էջ
8. Բիւզանդացի Նորայր, Բառգիրք ի գաղիերէն լեզուի ի հայերէն, Կ. Պոլիս, 1884, 1298+6 էջ
9. Դաղբաշեան Յարութին, Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն, Թիֆլիս, 1906, 12+1221+4 էջ
10. Դաղբաշեան Յարութին, Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն, Թիֆլիս, 1911, 14+727+16 էջ
11. Երեցփոխեան Գաբրիել, Բառարան ի Ռուսաց լեզուէ ի հայ, I հրատ., Թիֆլիս, 1854, 585 էջ
12. Երեցփոխեան Գաբրիել, Բառարան ի Ռուսաց լեզուէ ի հայ, II հրատ., Թիֆլիս, 1876, 922 էջ
13. Լուսինեան Գլիտոն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, I հրատ., Կ. Ա, Փարիզ, 1900, 14+1060 էջ
14. Լուսինեան Գլիտոն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, I հրատ., Կ. Բ, Փարիզ, 1909, 817 էջ
15. Լուսինեան Գլիտոն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, II հրատ., Կ. Ա, Կ. Պոլիս, 1909, 1060 էջ
16. Լուսինեան Գլիտոն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, II հրատ., Կ. Բ, Կ. Պոլիս, 1909, 817 էջ
17. Խալդարեան Գրիգոր, Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան, Պետերբուրգ, 1788, 156 էջ

- 18.Խուդաբաշեան Ալեքսանդր, Բառարան ի հայկազեան լեզուի ի ռուսաց բարբառ, Կ. Ա, Մոսկուա, 1838, 32+613 էջ
- 19.Խուդաբաշեան Ալեքսանդր, Բառարան ի հայկազեան լեզուի ի ռուսաց բարբառ, Կ. Բ, Մոսկուա, 1838, 530 էջ
- 20.ՀԱՀ - Հայկական սովետական հանրագիտարան, Կ. 2, Երևան, 1976, 719 էջ
- 21.Հովհաննիսեան Աբիսողոմ, Բառգիրք ռուսերենից-հայերէն, Կ. Ա, Թիֆլիս, 1888, Կ. Բ, Թիֆլիս, 1893
- 22.Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Կ. Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 1987, 470 էջ
- 23.Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Կ. Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 1992, 472 էջ
- 24.Մեղրեցի Երեմիա (վարդապետ), Բառգիրք Հայոց, Երևան, 1975, 576 էջ
- 25.Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, Կ. 1, Վենետիկ, 1749, 1251 էջ
- 26.Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, Կ. 2, Վենետիկ, 1769, 763 էջ
- 27.Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ա, Վենետիկ, 1836, 1140 էջ
- 28.Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Բ, Վենետիկ, 1837, 1067 էջ
- 29.Զախջախեան Մանուէլ, Բառարան յիտալական լեզուի ի հայ եւ ի տաճիկ բարբառ, Վենետիկ, 1804, 896 էջ
- 30.Քաջունի Մանուէլ, Բառգիրք արւեստից եւ գիտութեան եւ գեղեցիկ դպրութեան (հայ-ֆրանսերէն), Կ. 1, Վենետիկ, 1891, 1189 էջ
- 31.Քաջունի Մանուէլ, Բառգիրք արւեստից եւ գիտութեան եւ գեղեցիկ դպրութեան (հայ-ֆրանսերէն), Կ. 2, Վենետիկ, 1892, 878 էջ
- 32.Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, Oxford University Press, 2006
- 33.Longman Lexicon of Contemporary English, London, Longman, 1996

ՄԱՍՈՒԼ

1. «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, 1981, գ., № 39
2. «Նոր-դար», 1887, էջ 192
3. «Տարազ», 1890, № 1, էջ 82
4. «Եվրոպա», օրաթերթ, 1849, № 27
5. ԲԵՀ-«Բանբեր Երևանի համալսարանի», 1998, № 2, էջ 71-79
6. ՊԲՀ-«Պատմաբանասիրական հանդես», 1995, № 1, էջ 145

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1	
ԱՐՅԵՍՏ - ԱՐՅԵՍՏԱԳՈՐԱՆԻՇ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	
ԳՐԱԲԱՐՈՒՄ	12
ԳԼՈՒԽ 2	
ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ	
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	21
ԳԼՈՒԽ 3	
1. ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ	
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1800-1920-ԱԿԱՆ ԹԹ.	40
ա. Արհեստագործական անվանումները	
արևելահայերենում	40
բ. Արհեստագործական անվանումների համակարգը	73
գ. Ռուսերեն և հայերեն արհեստագործական	
անվանումների կառուցվածքային համեմատության	
ուրվագիծ	74
դ. Արհեստագործական անվանումների	
վերլուծական կառուցվածքները	77
ե. Արհեստագործական անվանումների	
համադրական բաղադրյալ կառույցները	80
զ. Արհեստագործական բառախումբը արևելահայ	
գրական լեզվի զարգացման հունի մեջ	87
2. ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ	
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ	91
ՎԵՐՋԱԲԱՆ	116
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	127

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՎՈՆ ՎԱԶԳԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՅԵՍՏ-ԱՐՅԵՍՏԱՎՈՐԱՆԻՇ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱԶ տպագրատանը:
Երվանդ Քոչար 7-62

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 8,4:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1